ՍԱՐԳԻՍ ՉԻՎԱՆՈՒ

ԵՐԳԵՐԸ

Ա.

„ Ով որ իր ապրն ուրանայ
„ Երկու աչքով կուրանայ,
„ Ցեսանելոյ աղքատի նման,
„ Դառնի Ինքուն մուրանայ։

Երէ. 103

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Գ. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ.
1882

891.99
Հ

ՍԱՐԳ ՋԻՎԱՆՈՒ

ԵՐԳԵՐԸ

Ա.



„ Ով որ իր ազգն ուրանայ
„ Երկու աչքով կուրանայ,
„ Յետնեալ ազգատի նման,
„ Դառնի Վեղուռ մուրանայ»:

Երէս 103

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Գ. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ.
1882

Дозволено Цензурою. Тифлисъ, 21 Ноября 1881 г.

4 — 449

ԻՒՐ ԱՐՀԵՍՏԱԿԻՑ

ՀԱՑ ԵՐԳԻՉՆԵՐԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԱՇԸՊ ՋԻՒԱՆԻՆ։

1.

ՄԻԻՍԼԷՏՏԷՍ ԴԻՒԱՆԻ

Այս, կորաւ Հայրենիքիս փառքը, բոլոր յատկութիւնը,
Շարժուց տեղից տունը, կործանուեցաւ հաստատ սիւնը,
Դաղթելով ամբողջ ժողովուրդը օտարաց անկիւնը,
Թողնելով կալուածքները, առևտուրը ողջ արդիւնը,
Այլազունք չեն մեղաւոր, մեզնից եղաւ դառնութիւնը.
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուց մեր արիւնը։

Այն Սիւնեաց շար Վասակը մեծ իշխանը չէր մեզանից,
Արծրունի ազգուրացող Մեհրուժանը չէր մեզանից,
Քաջ Սամէլայ հայր լինող վատ Վահանը չէր մեզանից,
Մանաւանդ Վեստ Սարգիսը՝ շար դաժանը չէր մեզանից,
Այլազունք չեն մեղաւոր, մեզնից եղաւ դառնութիւնը.
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուց մեր արիւնը։

Միտ բերէք չէք-Կիրակոս (անուամբ) քահանայ վատ հոգին.
Զե՞մ ուզեր յիշել նորա պիղծ անունը վատ զաղրագին.
Սմբատայ ձեռագիրը առաւ պահից իւր ժամ մթին.
Կայսրորդին գանելով՝ ծախեց նրան, առաւ բաժին.
Այլազունք չեն մեղաւոր, մեզնից եղաւ դառնութիւնը.
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուց մեր արիւնը։

Խոշձալի Հայաստանը Աշոգ Զիւան տես ուր եկաս.
Վերջապէս իւր որդիքը իրանք իրանց տուին ֆկաս.
Մատնելով մեկ զմեկի նորանք կրեցին պատուհաս.
Մինչ այսօր էլ Հայոց միջէն Վասակներն են անպակաս.
Այլազունք չեն մեղաւոր, մեզնից եղաւ դառնութիւնը.
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուց մեր արիւնը։

2.

ԳԱԶԷԼ

Ա՜խ պիտի շատ սպասեմ իմ սիրելոյս գալստեանը.
Թեղրումեմ՝ ոչ ոք չէ՛ տալ այս խօսքերիս պատասխանը.
Երբ կուգայ, ինձ ասացէ՛ք, վաղեմ յառաջ երթամ նրան.
Ընդունելութեան համար պատրաստել եմ օթեւանը։

Ես հաւատալով նորա գալստեանը՝ սպասում եմ.
Ուշ թէ շուտ արժան պիտի լինիմ նորա սուրբ տեսլեանը.
Շատ տարի յառաջ մեռած համարեցին չար մարդիկը.
Երբ տեսան՝ պապանձեցաւ ամէն մէկի վատ բերանը։

Իմ Սիրելոյս մահ չ՚կայ յաւիտեանս յաւիտենից.
Երկնաւոր Հայրն է նորա պահպանողը, օգնականը.
Թեղրումեմ, ո՞վ Արարիչ, ցոյց տուր Սիրելոյս պատկերը.
Այնուհետ հոգ չէ՛, Ջիւանուս թող գնեն գերեզմանը։

3.

ԴԻՒՐԷԼԻԹ

Ա՛զգ իմ ոբքան նկուն մնաս՝
Սիրաս քեզանից չէ՛ զատուի.
Հազար տեսակ չարչարանք տաս՝
Սիրաս քեզանից չէ՛ զատուի։

Քեզ չեմ մոռանայ յաւիտես
Հարազատ մայր իմ Հայաստան
Թէ գուշ դրախտն էլ ինձի տա
Սիրաս քեզանից չէ՛ զատուի։

Քեզանով եմ ես երջանիկ
Իմ սիրելի՛, իմ անուշիկ.
Ցոցիդ մէջը հանգչիմ Մայրի՛կ.
Սիրաս քեզանից չի՛ զատուի։

Զլուանն եմ. քեզ բարեկամ
Քանի ողջ եմ յամենայն ժամ,
Հնդկաստանէն էլ տէր դառնամ՝
Սիրաս քեզանից չի՛ զատուի։

4.

ՈՎ ՍԻՐՈՒՆ ՍԻՐՈՒՆ

Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար քաշում փափաղ
ով սիրուն սիրուն,
Չի՛ լինիլ քեզ պէս ամենայն երկիր, փայլուն Արուսեակ ով սիրուն
սիրուն.
Կ՚ստանաս համբաւ, քիշ էլ սպասէ՛, կուգայ ժամանակ ով սիրուն
սիրուն՝
Փառք ու պատիւդ քեզի կ՚յանձնեն քոյրիդ նմանակ ով սիրուն
սիրուն.
Եղեմեան ծաղիկ հայրենի հողով սնուած մանիշակ ով սիրուն
սիրուն.
Հոգիդ անարատ, տեսքդ գերազանց, մէկ հատ օրինակ ով սիրուն
սիրուն.

Սրտիս ու հոգւոյս մխիթարութիւն քեզանով է միշտ ով
գեղատու կին.
Ցոյսս դրած եմ ես բոլորովին սիրելւոյդ վերայ Աշխարհատիկին.
Աղնիւ թագուհի՛ շնորհօք լեցուն այցելութիւնդ է մեզ կսթողին.
Զարդացած մտքով Եւրոպացու պէս, թէև ասումն քեզ ասիածին
Փնտռումն քեզի շատ սիրահարներ աշխարհիս մէջը սրտով
լալագին.

Բայց՝ քեզանից թէ լոյս էլ լինի՝ չէ՛ մեզ ընդունակ ով սիրուն սիրուն։

Ի՞նչ կընի տրդեօք արժան համարես դէպի մեր կողմը դաս այցելութեան,
Փափաղդ քաշող տեսնումես շատ կայ, պատկերդ ցոյց տուր լինինք բաւական.
Քեզ սիրողներուն դու մի՛ չարչարիր, քիչ խնամք արա անուշ սիրսկան.
Լուր պաղատանքս ով իմ սիրուհի, վերաւոր սրտիս տուր դեղ ու դարման.
Ո՛չ դու մեզի պէս կարող ես դանել, և ո՛չ մենք քեզի մէկ համանման.
Դու մեզ թագուհի մինչև յաւիտեան՝ մենք քեզ հպատակ ով սիրուն սիրուն։

Ա՜խ պիտի տեսնի՞մ ես քո երեսդ, թէ պիտի մեռնիմ թերի փափաղով,
Այրումես դու ինձ ամենայն միջոց անարատ սիրոյդ անշէջ կրակով.
Գոնէ տիսար լուր տուր միանգամ, տեղդ իմանամք փոքր նամակով,
Քեզի է կապուած մի մեծ ընտանիք հաստատուն յուսով, բաղդով, վիճակով,
Հակացի՛ր միտքս թէ ի՞նչ եմ ասում, քեզի խնդրումեմ ի՞նչ նպատակով,
Թօսքիս համեմատ շարժիր, դեղեցի՛կ, գործէ շարունակ ով սիրուն սիրուն։

Իշխանուհիներ աշխարհիս շատ կան, բայց՝ մեզ անօգուտ, իմացի՛ր հաստատ,
Նոքա օտար են, չեն սիրեր սրտով, կեղծ ու պատիր են, արտաքին և վատ.
Ուրեմն մ'օտ եկ, Դու իմ սիրելի՛, իմ արենակից Տիկին հարազատ.
Քո սէրդ սուրբ է ով սիրուն անմեղ բարքով ու վարքով, սրտով անարատ.

Տայ՛ Արարիչ մեռաս անխափան միշտ անուշով վեհ անկախ ու ազատ.
Թղթալի երգիչ Զիւանուս համար մեռաս յաջողակ, ով սիրուն սիրուն։

5.

ԱՆՀԱՒԱՆԸ

Անկիրթ մարդը իր բանը չգիտնալով
Կատարեալն լաւ վիճակին չի՛ հասնի.
Իրան մէջը մէկ գիտութեան յուսալով՝
Վարժապետի օրինակին չի՛ հասնի։

Կատուից կ՛խնայէ մէկ կաթ չոր հաց,
Ամէն օր ծեծ, կնոջ աչքերումը լաց,
Մէկ նոր հագուստ չունի՝ ողջ մարմինը բաց՝
Մեծատանը ժամանակին չի՛ հասնի։

Մէկ տուն ունի անլոյս, խաւար, կեանք մաշող,
Խղութիւնից զրկող, ստամոքս խաշող,
Զորթանէ ապուրի միշտ կարօտ քաշող՝
Արքայի մաքուր խորակին չի՛ հասնի։

Բոլորովին թողած իր գործը բանը,
Փորն անօթի, բաց մնացած բերանը,
Հինգ հատ սղինձ դրամ չունի զրպանը՝
Ոսկով լեցուն գանձանակին չի՛ հասնի։

Ամէն մարդ երեսին կուտայ արատը,
Չի՛ մաքրուիլ, թէ լողանայ նափրատը,
Արձանէ մատանիք չունի իր մատը՝
Սողոմոնի մատնու ակին չի՛ հասնի։

Երեսը թաքշամած վարդի տերև է,
Շրթունքներն անշնորհ, քիթը անձև է,
Դոյնը գործելիից հինգպատիկ սև է,
Անշամանդաղ նոր լուսնակին չի՛ հաւնի։

Հարիւր կարկատանէ վերարկուն ճերմակ,
Մկի նման որոնում է գաղտնի ծակ,
Գլխին խոտ կ՚փաթթէ, չունի մէկ գտակ՝
Հին պապի արտախուրակին չի՛ հաւնի։

Վիզը ծուռ կ՚նայէ ծեր ուղտի նման,
Իսկ մարաց հովուի պէս հանդերձն անարժան
Ամէն մի ատամը մի մուրճ իսկական
Մարգարիտ-բուստ-շարունակին չի՛ հաւնի։

Երկու հիւր շահելու մէկ սեղան չունի,
Թափառական մարդ է, օթեւան չունի,
Կէս կորեկ ցանելու անդաստան չունի՝
Մեծ իշխանի ագարակին չի՛ հաւնի։

Որ տեսնի՝ ստուերը քարերից կ՚գայ,
Երկիւղից կ՚լենի նա տակն ու վերայ,
Հաւի ագից տասը պտոյտ կ՚դառնայ,
Նժոյգ նստող շահատակին չի՛ հաւնի։

Կեանքը առողջ տարին բոլոր չի՛ դանի,
Հնութեան մէջ զբաղուած՝ նոր չի՛ դանի՝
Հիւանդանայ՝ թթու խնձոր չի՛ դանի,
Հայսերապատկան կամակին չի՛ հաւնի։

Մէկ ուղիղ խրատիչ բարեկամ չունի,
Միշտ օրերը տխուր, ուրախ ժամ չունի,
Իր տանը վառելու մարխ անգամ չունի՝
Գերիշխների աշանակին չի՛ հաւնի։

Գլուխը աղատ չէ ցաւից վանդից,
Ողջ մարմնոյ վերայ հագած պատանքից.
Նոր մէկ սխալ բան է հաներ իր հանքից՝
Հաղարամեայ յիշատակին չի՛ հաւնի։

Չի՛ գիտեր կրօնը քրիստոնութեան,
Չի՛ գիտեր անուշիկ լեզուն հայկական,
Այլ և այլ հար ոսոխ թշնամեաց նման,
Հայկ և Արամ Արմենակին չի՛ հաւնի։

Իւր տգիտութեանը աշխարհն է վկայ,
Կ՚ձևանայ բարձր մեծ փիլիսոփայ,
Իր փորիցը այրի կտոր դուրս չի՛ գայ,
Մեղուին, Փորձին և Մշակին չի՛ հաւնի։

Թող չ՚ձանձրանայ իմ քաջ բարեկամը,
Որ ես շատ յիշեցի այս անցդամը,
Վնաս չունի, թող քիչ վաճառէ ժամը
Ջիւան ով քո նպատակին չի՛ հաւնի։

6.

ԱՔԼՈՐ ԵՂԲԱՑՐԸ

Աքլոր եղբայր ձանձրացուցիր դու մեզի
Անտեղի ամեն օր միշտ ճվալով սուր,
Հիմայ ժամացոյց կայ, կարօտ չենք քեզի,
Գնա, այսուհետև ուրիշ տեղ ձայն տուր։

Վերայիդ գոյները շատ այլանդակ են,
Մինչ՝ նոյից մնացած հին օրինակ են,
Թևիդ բմբուլները մէկ մէկ նիզակ են,
Ո՛չ մի թռչուն չունի քեզ նման փետուր։

Լ՞Հ շատ անձոռնի է ձայնդ աքլոր ջան.
Դու չես կարող լինիլ երգիչ երգաբան,
Քեզի պէտք մի գեղեցիկ հաւարան
Պատրաստել մինչ՝ ի մահ քեզի կուտ ու ջուր։

Տեսակդ շատ հին է, նման չունիս, ոչ,
Մաել ու ելել ես ամեն մի խոռոչ.
Ոչ մի թռչուն չունի պոչիդ նման պոչ,
Կատարիդ պէս կարմիր փունջ հերագանգուր։

Իմացայ, ուզումես որ՝ լինիս կաքաւ,
Քայլերդ կ՚շինեն քեզի սև ագռաւ,
Դու մեր հին աքլորն ես թէ վատ թէգուզ լաւ,
Պահել պէտք քեզի, տալ հին կերակուր։

Սանտր ունիս գլխիդ վերայ ահագին,
Ցոմեան Մարգարէի հնացած գելբին,
Չիւանս քաջ գիտէ, դու ես հաւածին,
Երբեմն էլ կ՚լինիս հաւադող ուրուր։

7.

ԻՄ Զ՚ԿԱՐԾԱԾԸ

Աշխարհումս ում որ բարեկամ գիտցայ,
Նա փոխանակ՝ ինձի հակառակ դարձաւ։
Ում որ հաւատարիմ ուղիղ հասկացայ,
Աղդ ատող, ուրացող՝ չար Վասակ դարձաւ։

Ինձ չ՚օգնեց իմ սիրած բարեկամս,
Մինչ ուրախ էր՝ տխուր դարձաւ իմ ժամս,
Զ՚հակացայ, զուր կորուսի դրամս,
Նժոյդ ձի կարծածս՝ աւանակ դարձաւ։

Զիւանին եմ, 'ի զուր թառամեց վարդս,
Աւար գնաց կայքս, կալուածքս, զարդս,
Արդար ու խնամուտ ճանաչած մարդս
Տես ընդհակառակը աւազակ դարձաւ։

8.

ՍԷՐ

Ազգաւ հայ-կաթոլիկ՝ բողոքականին
Լուսաւորչականներու ատելն 'ի զուր է.
Հարազատ որդիք են Մայր Հայաստանին,
Սրտերը պաղեցնել-զատելն 'ի զուր է։

Ինչպէս որ մենք հայ ենք, նրանք էլ հայ են,
Ազգաւ, լեզուաւ Հայութեան կ'ծառայեն,
Պէտք է մերոնք նեղող լինին խնայեն.
Եղբայրն իր եղբօրը դատելն 'ի զուր է։

Զիւան, նա կ'իմանայ՝ ինչ մարդ որ նոր է,
Ամեն խիղճ իւր սրտի մէջ թաղաւոր է,
Սիրով եղած բանը օրինաւոր է,
Անպատակ դառն աշխատելն 'ի զուր է։

9.

ԴԱՋԷԼ ԴԻԻԱՆԻ

Անպակաս շողշողում է սրտիս վերայ սուր ամեն օր,
Լում են ականջներս բօթալի վատ լուր ամեն օր,
Օր չեղաւ, որ ինձէի հանդիստ խաղաղ առանց ցաւի,
Տա՛ւական է ինձ մնալ տրտում ու տխուր ամեն օր։

Կարճամիտ, նախանձայոյզ չար մարդիկը զրդռուելով՝
Խօսում են ուղղութեանս հակառակ 'ի զուր ամէն օր,
Ա՜խ, պիտի ես շատ մնամ այսպիսի վատ շրջանի մէջ,
Պարզութեանս պատճառաւ՝ կրեմ թուք ու մուր ամէն օր։

Հազար ու մէկ որոգայթ, հազար տեսակ մեքենաներ,
Լարում են թշնամիքս երկաթից ամուր ամէն օր,
Պաշտպանող Արարիչը պաշտպանում է իւր Զիւանին,
Պարզերես դուրս կ՝ բերէ անմեղը մաքուր ամէն օր։

10.

ՍԷՄԱՑԻ

Ա՜ռանց ցաւ աշխարհը երբէք չի՝ լինի այնպիսի մէկ մարդ,
Ամենայն մարդ ունի մէկ ցաւ, թէ՝ ծերուկ, թէ՝ երիտասարդ.
Սա աշխարհն է ցաւերու զբաղան քի հոգսի դանձարան,
Սորա ընծաներուն անշուշտ կ՝ հանդիպի ամենայն լեարդ։

Ա՜ւաղ, կրկնեմ քանի անգամ, աւաղ մեր անցաւոր կեանքին,
Հարուստ աղքատ միասին կ՝ թառամին որպիսի մէկ վարդ,
Աղամերդին օրին մէջը կ՝ շրջի որպիսի մէկ ձուկ,
'Ի հարկ է ձկնապանը մահն է, կ՝ ձգէ ամենիս կարթ։

Ուրեմն, աշխարհիս մէջ երջանիկ որչափ լինիս ընկեր,
Վերսին երջանիկ չես, բստ որում չունիս սեպհական զարդ.
Զիւան, հարիւր տարի ապրիս՝ նորից մէկ զօր ու գիշեր մ՝ է,
Էլ ինչով կարող ես լինել դու աշխարհում ուրախ զուարթ։

11.

ԻՄ ՋՈՒԹԱԿԸ

Ասանց քեզ կեանք չունիմ սիրելի՛ ջութակ,
Դուն ես սրտիս մխիթարիչ սփոփանք.
Քեզանով եմ բարձրացնում աղաղակ,
Դուն ես ամեն միջոց ինձի համար կեանք։

Տրտմեալ երեւնկրուն դու կուտաս ծիծաղ,
Քեզանով՝ օրերս անցնում է խաղաղ
Քաղցրանուագ երգով լարերիդ մատաղ,
Դէպ՝ ի քեզ ամեն սիրտ կ՝ընծայէ բաղձանք։

Որփեան յիշատակն ես, ով մեծահանճար,
Կամ թէ Ապոլոնն է տուեր քեզի լար,
Այնքան ազդեցութիւն ունիս, ով քնար,
Որ քեզնով կ՝արթնայ սիրտ ու խղճմտանք։

Քեզ չ՝սիրող մարդն է նախանձ ժանտաժուտ,
Կեանքի պայմաններից երբէ՛ք չէ՛ հմուտ.
Հիւանդն անդամ քեզնից կ՝ քաղէ օգուտ,
Մեղմ ձայնդ լսելով՝ չի՛ զգայ տանջանք։

Ուրախութեան փայլիչ, ով սիրուն Հերմէս,
Քեզանով է ամեն ցնծութիւն կրկէս,
Առանց քեզ չի՛ լինի հարսանիք հանդէս,
Ինքդ ես զուարճութեան ուսում հրահանգ։

Սուրբ զրքերից ես բերում եմ օրինակ,
Յորալիցն ես դու մեսցել յիշատակ,
Երբ Ջիւանուոյս ձեռքում կ՝ հնչես ջութակ՝
Սրտիս խորքերիցը կ՝ բղխէ մաղթանք։

12.

ԴՈՎԵՍՏ ՆՈՐԱՆԻՆ ՕՐԻՈՐԻՒ

Այսուհետև ինձի լոյս չէ՝ հարկաւոր,
Քանի որ քեզ ունիմ իմ աչքիս հոգեակ,
Աչերդ արեգակ։

Թէ ունիմ ցնծութիւն՝ քեզ եմ պարտաւոր,
Դուն ես ինձի համար ամէն ժամանակ,
Կենդանի ջուրակ։

Բախս լինելոյս պատճառ քեզ եմ համարում,
Որ տալիս ես սրտիս լարին ընդհարում,
Քիչ կ՝ ճարուի քեզի նման այս դարում՝
Իմ սրտիս սիրելի դարձող հրեշտակ,
Սիրուն աղաւնեակ։

Այտերդ անթառամ պարտիզի ծաղիկ,
Երթուընդդ շաքարից, մեղրից անուշիկ,
Վերջապէս ինձ համար ո՛վ իմ գեղեցիկ
Չկայ ողջ աշխարհը քեզի նմանակ,
Դուն ես միայնակ։

Քաղցրախօս թռչնիկներ անհամար անթիւ՝
Անոյշ ձայնիդ համար քեզ կուտան պատիւ,
Պատկերդ գրուիչ, արիւնդ ազնիւ,
Դուն ես առաւօտեան պայծառ Արուսեակ,
Ուշիմ ընդունակ։

Աչերդ սուրբ է միշտ անապատ ինձ համար
Դուն համեստ ես, ու

Լ՛ր եմ տխուր արդեօք քանի որ դու կաս,
Քեզ ունեցող մարդը ի՞նչ ունի պակաս,
Յուսամ Աստուած պիտի տպրիս անվնաս
Զիւանիիս համար բաղդով յաջողակ,
Սիրելի տատրակ։

13.

ԵՐԳ ԱՌԱՔԻՆՈՒՀԻՈՑ

Ամենազեղեցիկ ընտիր սիրուհի
Տեսնողը կ՛լենի հպատակ քեզի,
Օրինապահ օրէնսդիր սիրուհի
Կ՛կարծեն մեկ բարի հեղինակ քեզի։

Քաջ անուանդ՝ յաղթութեանդ պատկին է,
Բարի սիրտդ՝ կենդանութեան մուրհակն է,
Պաշտպանողդ-Գոյացուցիչ Էակն է
Ոչ կարող է լենել հակառակ քեզի։

Լ՛եր Զիւանուդս, Տիկի՛ն, լ՛եր դու բարեկամ,
Անուանդ համար կեանք կ՛զոհէ մինչ անդամ.
Սիրոյդ շաղկապ լենողները յարաժամ
Կ՛սիրեն, կ՛պատուեն շարունակ քեզի։

ՄՈՒԹԷՆՄԷՋ

14.

Այս բոլոր աշխարհի միջեն չ՛կայ քեզ յարմար սիրելի՛,
Աչքերդ զամբար սիրելի՛,
Ցօնքերդ կամար սիրելի՛,

Բերանդ շաքար սիրելի՛,
Լեզուդ մեղրաթար սիրելի՛,
Իմաստուն ես և խելամուտ ամենաճարտար սիրելի՛։

Շուշանի պէս շատ գեղեցիկ զարդարուելոյդ դարձայ ապուշ,
Գառնկներդ մեղրից անուշ,
Այտերդ կարմիր ու քնքոյշ,
Նուտ շուտ արի, ոչ թէ ուշ ուշ,
Քաղցրութիւնդ է յատուկ նուշ։
Ինձ վառվռուն աչերովդ արիր սիրահար սիրելի.

Խորհուրդդ ամէն մէկի մօտ մի՛ բանալ ասեմ սիրական,
Մի գնար այլոց օթևան,
Խօսքեր մի՛ լսեր զանազան,
Սանձ դիր լեզուիդ, մի՛ բաց բերան,
Լաւ անունը չունի վաճառան,
Աշխատիր, որ քեզի չասեն տգէտ անկատար սիրելի։

Էր քո նման մէկ գեղեցիկ, բայց՝ չ՛պահեց իր անունը,
Քանդեց իր ձեռով իր տունը,
Զմռայ փոխարկուեց գարունը,
Դեռ չ՛լրացած արբունը՝
Կտրուեց աչքերի քունը,
Կրակապաշտ թիթեռի պէս եղաւ շանթահար սիրելի։

Նորա անունը լսեցիր, հիմա քեզ լաւ պահի՛ր աղջի՛կ,
Որ մնաս դու միշտ գեղեցիկ,
Լինիս թանկագին մեղեսիկ,
Մի՛ լինիր անգէտ ու ռամիկ,
Եր ինչպէս պալասան ծաղիկ,
Ջիւանուդյա լաս՝ կ՛մնաս դու մշտադալար սիրելի։

15.

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Անդործ պարապ մարն եկողը
Անմիտ խելագար չէ՞ ի՞նչ է,
Միշտ մոլութեան հետևողը
Բնութեամբ ակար չէ՞ ի՞նչ է։

Օրէնքներէն պատառուածը,
Իրան խօսքով յամառուածը,
Անօթեւան թափառուածը
Բուին հաւասար չէ՞ ի՞նչ է։

Գլխին առնողը մութ քօղը,
Չտեսնող բարերար ցօղը,
Անկիրթ, անուսում մեծցողը
Անտաշ կոպիտ քար չէ՞ ի՞նչ է։

Իրան արդար մարդ դասողը,
Աստիճանի սպասողը,
Իսկ ճշմարտին սուտ ասողը
Միշտ հոգւով խաւար չէ՞ ի՞նչ է։

Բնական բարքից ելնողը,
Սրբազան վարքից ելնողը,
Մարդկութեան շարքից ելնողը
Անասուն յիմար չէ՞ ի՞նչ է։

Չպահող իր բերնի սանձը,
Մուռ մտքով նայող կանանցը,
Միշտ պղծութիւն սիրող անձը
Գազանից վատթար չէ՞ ի՞նչ է։

Կենդանութեան կաթն ու կոդին
Թողած՝ սիրէ անմեղութ շոգին.
Պատուիրանազանցի հոգին
Բելիարին աւար չէ՝ ի՞նչ է։

Անունը թանգ չունեցողին,
Բարութեան ջանք չունեցողին,
Երջանիկ կեանք չունեցողին
Աշխարհը օտար չէ՝ ի՞նչ է։

Գործը շատ ցրիւ է թոյլին,
Հաստատելու մտքով գոյլին,
Տեղից չ՝շարժուող ծոյլին
Դիւրինը դժուար չէ՝ ի՞նչ է։

Ո՞ւմ տայ իր ընծայ նուէրը,
Ո՞ւմով աւելանայ սէրը,
Անզուակ դրամատէրը
Իսկ անմխիթար չէ՝ ի՞նչ է։

Չէ՛ սիրուիր թատամած վարդը,
Քամուն ճնշակ կը լինի յարդը,
Փթած ծառի նման մարդը
Պրակի պաշար չէ՝ ի՞նչ է։

Սառել է սրտի եռանդը,
Զունի ողջութեան աւանդը,
Անբժշկելի հիւանդը,
Մեռնելուն յոժար չէ՝ ի՞նչ է։

Յուսահատն է արմատախիլ,
Նորա բոյսը չունի նոր ծիլ,
Անյուսալի բանը գոնիլ
Բերելը անկար չէ՝ ի՞նչ է։

Բարկացող յուսահատներուն,
Վերքերը անփարատներուն,
Երկմիտ թերահաւատներուն
Խելքին անկատար չէ՞ ի՞նչ է։

Զուսնեցող վարժապետ ազգը՝
Սէր չունի իրար հետ ազգը,
Աւօդնական անպետ ազգը
Անհոգիւ ոչխար չէ՞ ի՞նչ է։

Չիւանի՛, հանճար չգիտցող,
Ապրելու հնար չգիտցող,
Պանդուխտ ճանապարհ չգիտցող
Զինուորը շուար չէ՞ ի՞նչ է։

16.

ՄԵՐ ՆԵՐԿԱՑՆ

Այս ի՞նչ դարի հասանք, ի՞նչ օրեր դտանք
Ամենևին հաւատարմութիւն չկայ,
Ի՞նչ օրեր կորուսինք, ի՞նչ կեանք ստացանք,
Հազարից մեկի մէջ լաւ արիւն չկայ։

Այսումն՝ թէ լուսաւոր է այս դարը.
Լաւութեան փոխարէն կ'երթանք վատթարը.
Կարծես՝ թէ ծռուել է ամբողջ աշխարհը,
Իսկ ուղիղ մնացած՝ մէկ անկիւն չկայ։

Պարզակրօն կ'ասուինք վերին Բարունով,
Ափսոս, խառնուած ենք այլ և այլ դունով
Մէկ տուն ունինք ճշմարտութիւն անունով՝
Նորա մէջն էլ անծուռ հաստատ սիւն չկայ։

Պէտք է միշտ ճշմարիտ մտքով վերանաս,
Աշխատիր ուղղութեամբ մինչև ծերանաս
Չիւան, լաւ հասկացիր չընկերանաս
Խաբեայ խմբերից քեզ արդիւն չկայ։

17.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Այլոց տունը քեզ օթեւան չի՛ լինի,
Աշխատի՛ր՝ քեզ համար օթեւան ճարէ.
Օտարը շատ ունի հաց, անուշ գինի,
Քեզ ի՞նչ օգուտ, որ քո բանդ գժուար է։

Մոլեներու կանքին աչք մի՛ ունենայ,
Նոքանց ճիգ ու ջանքին աչք մի՛ ունենայ,
Այլոց աշխատանքին աչք մի՛ ունենայ,
Ճակատիդ քրտինքով քեզ կառավարէ։

Ուսում սորվի՛ր, անվարժապետ մի՛ մնար,
Դորտի գորգով բռնուած գետ մի՛ մնար.
Միշտ աշխատի՛ր, ընկերից յետ մի՛ մնար.
Այլոց նման դու ևս բան հնարէ։

Չիւան, անուսումին յիմար կ'անուանեն,
Անօգուտ մարդ, խելքից տկար կ'անուանեն,
Ապրուստ չճարողին խաւար կ'անուանեն
Ասելով՝ այս դարը լուսաւոր դար է։

18.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Անմահ ծնունդ ես ազնիւ գեղեցիկ
Հայրդ ընտիր, մայրդ ընտիր, դու ընտիր,
Մէկ ձեռքումդ դինի, միւսդ վարդ ծաղիկ
Վարդը կարմիր՝ դինին կարմիր, դու կարմիր։

Տ՛կինդ լիաձիր, քաղցրախօս թուխ ակ
Ամէն բարի գործերի մէջ ընդունակ.
Երդումես միասին համեղ ներդաշնակ
Այրդ դպիր, որդիդ դպիր՝ դու դպիր։

Կմանդ չի՛ ճարուի ամենայն մի տեղ,
Բարձր է դիտուելիդ անուանդ շքեղ.
Գէրքը բուժէ Զիւանիին արա՛ գեղ,
Ազգդ գեղդիր, ցեղդ գեղդիր, դու գեղդիր։

19.

ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔԸ

Աշխարհը ի՞նչ կայ շատ-վիշտ ու չարչարանք,
Ձուր կ'ընէ կեանքի վատած կրակին,
Կ'կրէ հազար կերպ դառն հալածանք,
Մինչ որ մարդ կ'հանի իւր նպատակին։

Ի՞նչու մարդու կեանքը չ'լինէր ապատ,
Որ մտածէր, խորհէր բարւոյն համեմատ.
Աշխարհի խոշնպատ ճանապարհը վատ
Համ չի՛ տար մտաւոր սայլի անուակին։

Ջիւանի՛, մի քիչ որ մոռանանք խորը՝
Դեռ այնքան յառաջ չէ՛ գնացել նորը,
Որովհետև՝ ամպեր ունի բոլորը,
Լոյսը կ'խափանուի պարզ արեգակին։

20.

ՔԻԻՆԻԱԹ ԴԻԻԱՆԻ

Աշխատո՛ր կեանքիս հատոր աշխարհի մէջ պայծառ լինիս,
Պայծառ արփի, արփի արև, արևի պէս վառ լինիս,
Սրբութեան պարկեշտութեան կեանքին հետևիր պատուելի՛.
Պատուելի մարդ, մարդ կատարեալ, կատարեալ ու գառ լինիս։

Աստուծոյ տուած բանը, պատուէրները պինդ պահպանէ.
Պահպանէ միշտ, միշտ դու կանանչ, կանանչ ու թարմ ծառ լինիս.
Ո՛վ սիրելի, կարդա՛ բարի խղճով գրուած գրքերը,
Գրքերը սուրբ՝ սուրբ դու սրտով, սրտով անաչառ լինիս։

Մաքուր ձևէ՛, չափէ՛, եղի՛ր բանի մաց զգայուն,
Զգայուն սիրտ, սի՛րտ բարութեան, բարութեան պատճառ լինիս.
Ուղղութեան ճանապարհը բռնէ՛, հետևի՛ր ով Ջիւան,
Ո՛վ Ջիւան դու, դու պատկերով, պատկերով կայտառ լինիս։

21.

ԱԶԳԻ ԽԵՂՃՈՒԹԻՒՆԸ

Անհանելի՛ խեղճութիւն քանի՞ մէկ իշխես հայոց,
Քանի՞ մէկ մեղ մուրալ տաս, ձգես փողոց է փողոց.
Ա՞ռ մինչև երբ կ'մնայ մեր կոյր բաղդի գուռը գոց,
Որ բացում է սրտերուս մէջը հաղար մի կերպ խոց.
Քանի՞ քաջ երիտասարդք ձեռքեր տարած դէպ 'ի ծոց
Կուրծքի վերայ սեղմելով՝ սրտից հանել են հոգոց։

Քանի՞ տաղանդաւոր մարդ ձեռքիցը աղքատութեան
Սկսում է անկանիլ մեջը յուսահատութեան.
Երբ չի գտնի մի աղբիւր խնդմ հայը աշխատութեան՝
Կ'հեռանի այնուհետ ամենայն մի վստութեան,
Կորցնելով պայմանը մարդկային հաստատութեան,
Իր արարմունքը իրան կ' դառնայ կրակ ու բոց։

Երբ կ'հեռանայ մարդոց բարութեան զգացումը՝
Կ'կորցնէ նրա հետ գիտութիւնը, ուսումը,
Խնդմի համար միշտ պաս է խնջոյքը կեր ու խումը,
Ըստ որում կորուցել է անունը համարումը.
Երբէք ուրախ օր չունի խնդմ ու թշուառ տրտումը,
Ձգաւոր հայի համար չ'կայ ցնծութեան միջոց։

Ջգայուն սրտի համար հոգս է ցաւը ազգային,
Տեսնելով չարչարանքը ազգի վերայ ահագին.
Օգնութիւնը մերազնեայց վերցել է բոլորովին,
Մեր յոյսը դու ես միայն ով Դու անմահ Մխածին,
Կոպիտ անխիղճ քրդերը Մշու Վանայ հայերին
Մեծով անասունի պէս քշում են սպանդանոց։

Խնդմութիւնը խաւարեց հայերիս արեգակը.
Որտե՞ղ հասաւ մեզ վերայ այս թշուառ ժամանակը։
Գ'լուէք, անտանելի է աղքատութեան կրակը,
Մեր ազգի նեղութեանը անցաւ չափը քանակը,
Ով խնդմ եղել է՝ գիտէ թշուառ մարդոց վիճակը.
Չիւանն, հարուստն ինչ գիտէ ցաւը այրեաց ու որբոց։

22.

ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ

Ամարայրի դաշտը նեղկեց արիւնդ
Կարմիր Վարդան, հզօր Վարդան քաջ Վարդան.

Ցաղդէ յաղդ կ՚յիշուի անմահ անունդ՝
Կարմիր Վարդան, Հղօր Վարդան քաջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական։

Մեռար՝ թողեր անմահ անուն յիշատակ,
Քո գործքերով գարձար բարի օրինակ.
Դու սուրբ գործի համար եղեր նահատակ
Անմահ Վարդան, Հղօր Վարդան, քաջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական։

Քեզ գոգոնց ջերմ Հայրենեաց եռանդը,
Պաշտպանեցիր Փրկչիդ տուած աւանդը,
Դուրս վանեցիր Զրադաշտեան ազանդը,
Դու մեհ Վարդան, Հղօր Վարդան, քաջ Վարդան,
Խորտակեցիր ծանր լուծը պարսկական.

Զիւան։

23.

ԵՐԳ ՊԱՆԴԽՏԻ

Ամեն մարդ մի բանով մխիթարվում է,
Պանդուխտ անմխիթար մենակ ես եմ, ես։
Ամեն երգիչ բանիմ՝ սիրահարւում է,
Առանց վարդի երգող սոխակ ես եմ, ես։

Զուներմ մէկ սիրուհի ինձի մեծարող,
Միայնակ խղճալի ես եմ շուարող.
Ո՛չ փիւնիկը, ո՛չ թիթեռը չէ՛ կարող.
Միշտ այրուող առանց կրակ ես եմ, ես։

Զիւանին եմ, շատերն ինձի ատում են,
Շատերն էլ գիտնական անձ հաստատում են
Շատերն էլ Մուսային համեմատում են,
Անխօս երգիչ, անլար ջութակ ես եմ, ես։

24.

ԴԱՍԹԱՆ

Ամակասոս նախնի հեղինակները
Ինչ ասել են՝ իրաւ արդար են ասել.
Գնելով մալ կանց նպատակները՝
Որին խելք, որին յիմար են ասել։

Ճշմարտութիւնը միշտ յաւաջ են տարել,
Ստութիւնով երբեք բան չեն հնարել.
Թմասաուներն արեգակ են համարել,
Բայց ոգեղէն անլոյս խաւար են ասել։

Ազգութացին շատ անգամ նեղվել են,
Նորանց կեանքը պարսաւել վերվել են,
Ազգի պաշտպան լինողներուն գովել են,
Հեռատես և հեռանշմար են ասել։

Միշտ հոյնցող եղել են բոլորներուն,
Որէնք ուսուցել են թագաւորներուն,
Դուշակել են այժմեան լուսաւորներուն,
Կատարեալ խելահաս ճարտար են ասել։

Լաւը վատից որոշելով՝ զատել են,
Հասուն մտքով ամենայն բան դատել են,
Բարկացողին յուսահատին ատել են,
Խոհեմ մարդու կեանքը երկար են ասել։

Որոնել են գործի հիմը, հաստատը,
Ընդունել են սէրը, յոյսը, հաւատը,
Ճանաչել են բարոյական խրատը,
Բաղդրութեանը մեղը ու շաքար են ասել։

Պահել են բարեպաշտ մարդկանց պատիւը,
Սիրել են բնութեամբ բարին, ազնիւը,
Անարգել են պատերազմը, կռիւը,
Թագաւորաց խաղաղ դաղար են ասել։

Լաւ զննել են ամեն բանը մաքուր ճիշդ,
Ձեն ուզեցել երբէք մի մարդ տանի վիշտ,
Զարութիւնը, նախանձը հերքել են միշտ.
Բարի գործը հոգւոյ պաշար են ասել։

Շատ սիրել են առաքինի եղողին,
Ձեն ըմպել չափազանց կախիլն խաղողին,
Ենացողին, ստախօսին և գողին
Մարդասպանին անխղճ, վատթար են ասել։

Մարդարիտը խոզերուն չեն արկանել,
Ուղղութիւնը միշտ բարձր են պահպանել,
Խաբերային երբէք մարդ չեն անուանել,
Խաւողին էլ անմիտ, տիմար են ասել։

Ամեն մարդու գովել են ըստ արժանին,
Հետևելով քաղաքական պայմանին.
Նուտով գրաւողին, դիւրահաւանին
Մարդահաճոյ խելքից տկար են ասել։

Խոնարհելով Տիրոջ հրամաններուն՝
Հետևել են նորա պատուիրաններուն.
Բարի խղճով գրուած սուրբ մատեաններուն
Զքնաղ շքեղագանձ քանքար են ասել։

Մինչ բնական դիտութեանը հասել են,
Անքննելին գերբնական դասել են,
Ինչ որ խրատել են, ինչ որ ասել են՝
Մարդկային բնութեան յարմար են ասել։

Անզգամ են կարծեր անխիղճ մեղերոց,
Բայց՝ օգնել են խեղճ աղքատաց նեղերոց,
Մաքուր սրտիս առաքինի եղերոց
Ինքեր Աստուածային տաճար են ասել։

Հաւատել են հոգւով գեղեցիկներուն,
Գովել են հոգեզգօն երդեցիկներուն,
Հաստատելու ցանցառ ուսմիկներուն
Մարդկութիւնից հեռու, օտար են ասել։

Ստացական խելքը կարծել են օժիտ,
Բնականը համարել են մարդարիտ,
Ջանասէր գործունեայ մարդուն ճշմարիտ.
Վատահ, խելօք գործակատար են ասել։

Մեշտ եղել են նրանք ցաւեր փարատող,
Աշխարհային կարգ կանոնը հաստատող.
Վատ դէպքերէ, վտանգներէ ազատող,
Համբերանքը կեանքի տապար են ասել։

Այն օրուանից՝ երբ մտել են օրօրոց,
Ճանաչել են համաշարան և դպրոց,
Անմահ հեղինակին ողջ արարածոց
Ամենախմաստուն հանճար են ասել։

Լոկ մարմինը կ՚գերէ գերեզմանը,
Հոգին անմահ է, չէ՛ դրած փոխմանը,
Բարի յիշատակն բարի անուանը
Տեւողութիւնը բիւր հազար են ասել։

Ջիւան, նորանց խօսքերը է բարի ծէս,
Ո՛չ թէ կատակերգութիւն է կամ կրկէս,
Պարտաւել են թէ գովել են վերջապէս
Ինչ ասել են՝ մեզի համար են ասել։

25.

ԱՌ ՍԻՐԵԼԻՆ

Ա՛յլ, սիրական, ինձ կառավարէ՛,
Կեանքս՝ սիրելիս, քեզի համար է,
Սիրտս վերաւոր, անդեղ ու ձոր է,
Հասի՛ր, գովական ինձ մխիթարէ՛։

Գթա՛, սիրական, ինձ սիրահարիս,
Լեր մխիթարիչ անմխիթարիս,
Օգնեա՛, գոնէ, պանդուխտ ջրատարիս,
Վաղուց՝ արեւս գիտցի՛ խաւար է։

Եկ, եկ, սիրուհի իմ անուշիկս,
Իմ անմեմանս, իմ աղուներկս,
Հաստատ իմացիր, ով գեղեցիկս,
Չոկ սէր ունենալ՝ ինձ անհնար է։

Էս մնացի ախուր հոգեհատոր,
Խղճա՛, գոնէ յոյս տուր հոգեհատոր,
Ինձ մորթել ես անսուր հոգեհատոր,
Մի՞թէ գեղանի՛, սիրտդ յօժա՞ր է։

Ո՞ր աշխարհից ո՞ր աշխարհը ընկայ,
Սիրոյդ ձեռքիցը, ո՛չ թէ ակամայ,
Պանդուխտ օտար եմ երկրի վերայ,
Խեղճ եմ Ջիւանս, կեանքս տար է։

26.

ԱՆՑԱԾ ՕՐԵՐ

Ա՛յլ Զե՛զ իմ անցած օրեր,
Չ՚գիտնալով՝ զուր կորուսի.

Արի՛ք տեսնեմ, ո՞ւր է՛ք կորեր.
Զեզանով շատ լուր կորուսի։

Ցաւս որի՛ն ասեմ, կամ ո՞ւմ,
Որ այժմոյս եմ ես անուսում,
Մէկ օր ուրախ՝ հինգ օր տրտում,
Ողջ կեանքս տխուր կորուսի։

Ցաւերս անթիւ նման դէզեր,
Արմատացեալ մէջ պարտէզի,
Իմ մանկութեան օրեր ձեզի
Ո՜հ, չեմ գիտեր ո՞ւր կորուսի։

Բոլոր սրտով հայցեմ՝ի քէն,
Խնայէ՛ Զիւանոյս արդէն,
Կորած օրերուս փոխարէն
Տէ՛ր իմ խնդրեմ, տո՛ւր կորուսի։

27.

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԵՒ

Արդարութեան արև՛, արդարութեան լոյս,
Շնորհաց հեղինակ, ո՛վ անմահ Փրկի՛չ
Միշտ քո ընտրեալներուն կուտաս խրախոյս,
Կենդանի բարեխօս և մեղաց քաւի՛չ։

Պատմութիւնդ ճշմարիտ է, ո՛չ թէ վէպ,
Չ՚կայ քո խօսքերուդ նման և հանդէպ,
Ամենայն մի կերպով ուղիղ անվրէպ,
Աղբիւր բարեաց ճշմարտութեան Ուսուցի՛չ։

Թշնամուկ Սերովբէն եմ, մոկատնուամբ Զիւան,
Հոգիս սէրդ չի՛ մոռանայ յաւիտեան.
Ո՛չ ծնեալ է, ո՛չ կ՚ծնի քեզ նման,
Աստուածեղէն ծնունդ ինքդ Արարիչ։

28.

ԴԻԻԱՆԻ

Ամենասաստիկ ցաւերը ինձ վերայ խնդիր տուին,
Տխրութեանը թագաւորին, ողջը ձեռագիր տուին,
Խումբերով բողբ բացին՝ գնալ դէպի իրաւարան.
Փաստաբան, տրամեցուցիչ կարգացողը գրիր տուին։

Ինձ վերայ մեղքեր գտան իբր՝ ցաւոց իշխանները,
Ամէնը վայ կրկնելով՝ գլխիս հոգ ու մտիր տուին,
Լսելով իմ կողմնապահ ուրախակից....նզբայրներս՝
Թարերայ ցաւագետի խորհուրդը ինանիր տուին։

Կանգնելով տէր Զիւանուս ուրախութեան դիւցազները
Վերջն աղտոտութեան վճիռս արդար ու ընտիր տուին։

29.

ԲԱՂԴԻ ՇՐՋԱՆԸ

Աղնի՛ւ բարեկամ, սնունդ ակ՝ չի՛ մնար այդպէս.
Մէկ օր կ'պատահի հակառակ. չի մնար այդպէս.
Միշտ օրը ցերեկ, խաւարը՝ փակ չի՛ մնար այդպէս.
Ցանկարծ մութը կ'ուզայ, արեգակ չի՛ մնար այդպէս,
Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի՛ մնար այդպէս
Կ'գառնայ մէկ օր, շատ ժամանակ չի՛ մնար այդպէս։

Շատին քեզի պէս բարձրացուցել՝ խաբել է բաղդը,
Քանի քանիսին վառ կրակով լափել է բաղդը,
Որչափ քաջերու խել քերը միշտ հափել է բաղդը,
Նախ՝ երկինք է հաներ, յետոյ՝ վար թափել է բաղդը.
Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի՛ մնար այդպէս։
Կ'գառնայ մէկ օր, շատ ժամանակ չի՛ մնար այդպէս։

Ո՞ւր է Ադամը և Նոյը, ո՞ւր է Մաթուսալան,
Ո՞ւր է Սողոմոն Մեծն իմաստուն, Դաւիթ իշխան,
Ոչչին մահը վաղման տուել՝ տարել է գերեզման,
Քեզ էլ պիտի մէկ օր մահը հասնի ու տայ վաղման։
Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի՛ մնար այդպէս։
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի՛ մնար այդպէս։

Զարթի՛ր քնիցդ, հոգս բոլորդ նկատէ, ո՛վ մարդ,
Խլեցէ դադարեցուր, ցաւերդ փարատէ, ո՛վ մարդ,
Մինչ կենդանի ես՝ քեզ դժոխից ազատէ, ո՛վ մարդ,
Աշխարհն իմացիր՝ թերի է, անհաստատ է, ո՛վ մարդ։
Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի՛ մնար այդպէս.
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի՛ մնար այդպէս։

Ճշմարտութիւնը միշտ յարաժամ յաւաջ է, յետ չէ.
Նորան հետևիր, ո՛վ բարեկամ նա շար ազէտ չէ,
Հաստատ ամենեին մի թագաւոր գահակալ չէ,
Բաղդը ապերախտ է, որովհետև արահետ չէ։
Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի՛ մնար այդպէս.
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի՛ մնար այդպէս

Ո՞ւր տեղ է Աղէքսանդրի նման աշխարհակալը.
Ո՞ւր տեղ է Դարեհ քաջ Սասանեան աշխարհակալը.
Ո՞ւր է Արտաշէս Արշակունեան աշխարհակալը։
Անբաղդ է մեռել դիտցի, Զիւան, աշխարհակալը։
Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի՛ մնար այդպէս,
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի՛ մնար այդպէս։

30.

ՀՈՎԻԿ

Աղուոտման քաղաք Հովիկ
Գնա դէպ երկիրն Ջաւախ,
Ունիմ մէկ ծերունի մայրիկ,
Գնա, ասա, 'ի գիւղն Կարծախ։

Այնտեղ է աղբս, երամս,
Գոյր ու եղջայր, բարեկամս.
Այնտեղ մեռած պապ ու մամս
Գերեզմանը մնած են վաղ։

Ինձանից շատ բարև տուր,
Երբ դու մօտս լինիս ներկայ.
Գնա յատակաէս Պիլերթայ,
Նա է մեր գիւղի մէջ մէկ թաղ։

Այն թաղի մէջն է մեր տունը,
Գերտովը է եղբօրս անունը,
Ինձ համար կտրել է քունը
Մայրս տրտում ու անծիծաղ։

Հովի՛կ, Ջիւանուցս լուր տար,
Թէ հարցանեն ինձի համար՝
Ասա թէ միշտ ձեռին քնար
Ազգի համար կանչում է խաղ։

31.

ԵՐԳ ՊԱՆԴԻՏԻ

Ա՜խ հայրենիք, քաղաք ու համեղ հայրենիք
Մինչև երբ կարօտդ քաշելով մնամ.

Այժմ չէ՞ զօրկը քեզ անել երախտիք,
Քանի՞ մէկ ես ինձի մաշելով մնամ։

Աստեղն մարդիկը ինձ անյարմար են,
Զեն ինձի ցաւակից որ մխիթարեն,
Սարք միշտ իրարու գգուելով պարեն,
Խղճալիս հեռուից աշելով մնամ։

Արդեօք երբ կ'բացուի քո աչուօտդ,
Որ փարատուի ոչ չմնայ աղօտդ,
Խղճուկ Զիւանիին կանչէ՞ տար ժուտդ,
Մինչ երբ կեանքիս ծառը տաշելով մնամ։

32.

ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՒ

Հարց

Այն ո՞վ էր՝ որ թողից Երկնային գահը,
Աշխարհն իջանելով՝ գարձաւ մեզ նման.
Գարձեալ ո՞վ հասկացուց մարդկային շահը.
Եւ կեանքը իմացուց յաւիտենական։

Պատասխան

Քրիստոսն էր թողից Երկնային գահը,
Կոյսէն ծնանելով՝ գարձաւ մեզ նման.
Հոգին սուրբ իմացուց մարդկային շահը,
Եւ հասկացուց կեանքը յաւիտենական։

Հարց

Աստուած ո՞ւմ ստեղծեց նախ, ուրից բարև,
Ուրիշից յառաջ եկաւ այն ազգը պարթև,
Ի՞նչ տեղ է, մէկ անգամ, դիպել է արև,
Թողնե՞մ՝ այս խօսքերիս շուտ տաս պատասխան.

Պ ա ր ա խ ա ն

Նախ՝ Աղամն ստեղծեց, ու տուեց բարև,
Քեթերից սերուեցաւ այն ազգը պարթև,
Կարմիր ծոմն էր դիպաւ մէկ անգամ արև,
Ահա քո խօսքերիդ ընտիր պատասխան։

Հ ա ր ց

Ի՞նչն է, որ չի՛ լինի ճշտութեամբ հաշիւ,
Ո՞վ է, չի՛ ճանաչեր անարգանք, պատիւ.
Ուստերից մեզ մնաց Հայ անունն ազնիւ,
Ինչքա՞վ մեր երկիրն կ'ասուի Հայաստան։

Պ ա ր ա խ ա ն

Երկնից աստղերն են անհամար, անթիւ,
Մէկ է անզգամին՝ անարգանք, պատիւ,
Հայկից մեզ է հասել Հայ անունն ազնիւ,
Նորանով մեր երկիրն կ'ասուի Հայաստան։

33.

Ը Ն Կ Ե Ր

Բարի՛, գեղեցի՛կ, առաքինի ընկերը մարդուն
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իւր ծոյր հաւատարիմ ընկեր՝
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն։

Կանգդ նուիրես ընկերի լաւին՝ քի՛չ է դարձեալ,
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր եմ ասում, աստուածախախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն։

Թշնամիները իւր վերայ գալած ժամանակը,
Կարիճ հարատաստ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Ֆիւսան աշըգ.
Չի՛ սպիտակիր ամենևին մէկ հերը մարդուն։

34.

ՈԻՍՈՒՄՆ

Բնական ձիրքերը մարդկանց անուսում,
Կ'մնան ծածկուած մեսապլ նման,
Նրանց միտքը զարգացած չէ, ըստ որում
Չեն ճանաչել լուսոյ ճաճանչը ուսման։

Մարդը՝ անուսունից ջոկողն ուսումն է,
Մառը արմատից պոկողն ուսումն է,
Նրան գործիք շինող, կոկողն ուսումն է,
Առանց ուսման՝ նա կ'մնար անպիտան։

Գիտութիւնից մարդ չէ՝ տեսել վնասը,
Բայց՝ շատ վնասուել է խելքից պակասը.
Աշխատի՛ր, սովորի՛ գոնեա քիչ մասը,
Դու ինքդ էլ անուսում ոգէա ես Զիւանե։

35.

ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ

Բացի քեզնէն բաժին չունիմ աշխարհիս մէջ ով սիրուհի՛,
Բայց՝ ինչէ՞ն է, որ քո սէրդ է ինձանից հով սիրուհի՛,
Ի՞նչ եմ ասեր որ կ'մնաս խօսքիցս խռով սիրուհի՛,
Իմ խղճալի կեանքիս համար դարձել ես մի բով սիրուհի՛։

Այս ինչէ՞ն է. օտարներու համար լաւ եմ, քեզ համար վատ,
Ինձանից է, թէ՞ քեզանից, արի՛ պարզը խօսի՛ ազատ.
Դէմդ կանգնած՝ ապաշում եմ որպէս մի խղճալի ազքատ,
Ողորմանալ չես դու երբէք ինձի անգորով սիրուհի՛։

Խնդրում եմ լու տեղեկացի՛ր. ինձի մի՛ նախատեր 'ի զուր,
Քո սրտում երիտասարդ երդիչին մի՛ թողներ տխուր.
Բերանիցդ ելածներն սրտիս բանում են ինչպէս սուր,
Քաղցր խօսքն քեզ համար դարձրել ես սոլ սիրուհի՛։

Միշտ առաջուած ման եմ գալիս վիզս ծռած խղճուկի պէս,
Սիրտդ նետերիցն ընկած եմ թէք կոտրած ճնճղուկի պէս,
Լացով օրերս անցնում է որբ մնացած մանուկի պէս,
Դառուցել ես իմ աչքերուս արտասուքը ծով սիրուհի՛։

Քեզի համար հառաչելիս մնում է աշքդ Ձիւանը,
Ով որ լինի մեզի ջոկող՝ Աստուած անէ դատաստանը,
Բնականից կրակոտ է դիւացի՛ր, երդչի բերանը,
Վարուի՛ր խոհեմ կերպով հետը. մի՛ առներ նեղով սիրուհի։

26.

ՏԳԷՏԸ

Գիշերի պէս կ'անցկացնէ իւր տիւը
Տգէտ մարդը, շատ գլխաւոր չի՛ լինի՛,
Անզգամը չի՛ գիտեր իւր պատիւը,
Նորա ճօռը բարի անուն չի՛ լինի։

Սարերում մեծացած Մարաց եշխանը
Չի՛ հասկանայ քաղաքական պայմանը.
Հարիւր տարի կրթես անխելք անբանը,
Չ'սպասես, նա իմաստուն չի՛ լինի։

Անդամանդ չի՛ լինիլ սև քարն անարժան,
Հազար գոյն տաս՝ դարձեալ նա է անպիտան.
Գեղեցիկը՝ գեղեցիկ է բնական,
Տգեղը հանդերձով սիրուն չի՛ լինի։

Երբէ՛ք խորհուրդ մի՛ տար մարդուն խարերայ,
Միշտ որոնէ ճշմարտօրէն առարկայ.
Ջիւան հիմ մի՛ ձդեր աւազի վերայ,
Կ՚սակ Տէրը, թէ այնտեղ տուն չի՛ լինի։

27.

ԳԻՏՈՒՆ

Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ,
Ցդէտի հետ մեղը ուտելը դժուար է.
Գիտունը կ՚ճարէ վերջն իրան հանդիստ,
Բայց տգէտը նորէն էլի յիմար է։

Ո՞վ կասէ բնական խմաստուն ծնայ,
Ուսում չ՚գիտցողը անկիրթ կ՚մնայ,
Խոզը ցեխը տեսաւ՝ անշուշտ կ՚գնայ,
Թէկուզ վեղը հարիւր մարգարիտ շարէ։

Գիտութիւնը մէկ արև է անխաւար,
Ծոլից ուսով կ՚երթայ առանց նաւավար.
Բայց՝ տգէտը չունի ուղիղ դաղափար.
Որովհետև հոգւոյ աչքը խաւար է։

Ջիւան, մարդկութեան մէջ խեղճ է յիմարը,
Ցառաջադէմ է լեզուագէտ, ճարտարը.
Թէ կ՚ուզես՝ որոնէ՝ ամբողջ աշխարհը,
Խմաստունի մօտ տգէտը տկար է։

28.

ՀՈԳԱԳՈՐԾ

Գարունն անցաւ եկաւ ամառ,
Դեռ կ'ենջես դուն հողագործ.
Էիր մէկ ժամանակ կայտառ,
Էր քեզ արթուն հողագործ։

Անձիդ մէկ լաւ հագուստ չունիս,
Կարծուածես թէ կորուստ չունիս,
Օրերդ անցան ապրուստ չունիս,
Մերձեցաւ աշուն հողագործ։

Աբիւթիւնդ վանեցիր,
Քեզ պարապ ձմեռ հանեցիր,
Ո՛չ շինեցիր, ո՛չ ցանեցիր,
Անհոգ ու անտուն հողագործ։

Թշնամիք ըլլայդ մարեցին,
Քեզ միամիտ համարեցին.
Դաշտերդ օտարք վարեցին,
Քեզ թողին նկուն հողագործ։

Աղքատութեան յոժարացար,
Օր ըստ օրէ՝ տկարացար,
Ինչու այդպէս յիմարացար
Ա՛խ իմ բանիրուն հողագործ։

Ներկայս այսպէս դու խղճուկ կաս
Նորից կամին տալ պատուհաս.
Թշնամիք կ'ուզեն՝ չունենաս
Աշխարհը անուն, հողագործ։

Ահա՛ քեզ վկայ Արարատ՝
Որ եղել ես դուն պայազատ.

Ոչ եւ որդիքդ բազմաշխատ,
Անուշիկ սիրուն հողագործ։

Ճանաչեցիր չարն ու բարին,
Իմացար գործը աշխարհին,
Մինչև գայ նորոգեալ տարին,
Սպասէ գարուն հողագործ։

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Զուր մի՛ վաճառել լաւ օրդ,
Զօրացուր հսկայ հզօրդ,
Պատրաստէ գութան արօրդ,
Սերմ շարէ ամուն հողագործ։

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Երկիւղ մի՛ կրել դու խպտառ,
Աշխարհումս կայ շատ պատճառ,
Ձափով տուած հողդ յետ առ
Ունելով կանգուն հողագործ։

Խելքով Եւրոպին յարմարէ՛,
Դուն քեզ ու քեզ կառավարէ՛.
Ամեն գործդ լաւ կատարէ՛
Ինչպէս իմաստուն հողագործ։

Նստած որդիքներդ վաղիւ
Քեզնից պահանջում են հաշիւ.
Ո՞ւր են քո դաշտերդ անթիւ
Լեռներդ անհուն հողագործ.

Քեզ կ'ծաղրէ բոլոր աշխարհ՝
Եթէ մնաս դու միշտ սկար,
Մինչ երբ շրջիս մոլոր շուար,
Ես դու զգայուն հողագործ։

Այլդ լծէ՛, գնա՛, հանդէս,
Մուլութիւնը չէ՛ բարի ծէս.
Աղքատ թշուառ մնաս այդպէս
Մինչ երբ, երերուն հողագործ։

Քեզ նման մարդ էլ չէր ծնած,
Միայն քո բաղդդ կոյր մնաց,
Այս օրս էլ անցաւ գնաց,
Եղև իրիկուն հողագործ։

Շարժի՛ր քո երկայնաբազուկ,
Բա՛ւ է մնաս այլոց սարուկ,
Դեռ կ'քնիս իբրև մանուկ,
Զառա՛ր քո արբուն հողագործ։

Ջիւանը քո բարեկամն է,
Ըստ որում՝ զործոյդ անդամն է,
Արագ թռի՛ր քանի ժամն է,
Եղի՛ր մէկ թռչուն հողագործ։

29.

ԱՌ ՍՈՒՐԻԱՍ ՍԲՐԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ՊԱՐԶԵՎԱՆՑ

Գերյարգոյ Հայր սրբազան, մեզ համար փայլակ մնաս,
Անանցնելի մշտավառ իրրև արեգակ մնաս.
Մեր Ներակուան գաւառին բարի օրինակ մնաս,
Քրիստոսէն նուիրուած հօտիդ օժանդակ մնաս.
Կամենալովն Աստուծոյ միշտ լուսատու ակ մնաս,
Մինչ ցվաղճան՝ եռանդիդ մէջը շարունակ մնաս:

Քեզ է՛ յարգող չէ՛ լինիլ ամենևին սրբազան,
Առ հասարակ ամենիս ես դու հոգւով սիրական.
Վարք ու բարքդ գեղեցիկ, բնութիւնդ դուրական,
Ոչ՝ չի սիրիլ քեզ պէս արդեօք իւր հոգւոյ նման.
Բոլոր ազգի հաւղմանց աշխատակից օգնական,
Նորա մասին միշտ լուսով փայլուն աշտանակ մնաս:

Եպիսկոպոս, վարդապետ տեսել ենք մի քանի հատ,
Բայց՝ ոչ մինը քեզ նման չէ՛ եղել մեզ համեմատ.
Ամենայն մի գործի մէջ ճշմարտախօս և սղատ,
Յուսամ Աստուած, կ'պահես միշտ քո հօտդ անարատ,
Քեզ պէս անձերուն կ'սղասէ ծերունին խնդճ Արարատ,
Գործովդ՝ նորա համար անմահ յիշատակ մնաս:

Քեզ պէս անձերու թիւը աւելանայ ամէ յամ,
Մնաս որքիկ հայերուն հաւատարիմ բարեկամ.
Քեզ շատ օրեր նուիրէ Արարիչը ինքնակամ.
Հայոց սուրբ ուխտի համար լինիս բարձր մեծ անդամ,
Ով Սուքիաս Սրբազան, ցեղդ Պարզևանց անթառամ
Յարաժամ գործ կատարող ազգին ընդունակ մնաս:

Փափագիդ բաղձանացդ Աստուծով արժան լինիս,
Հոգևոր գործերի մէջ միշտ բարի հշման լինիս,
Մոսխի, Եղիշէի նման պատմաբան լինիս,

Եղնիկի պէս՝ աղանդոց հերքող փաստաբան լինիս,
Հայոց նոր կեանք նուիրող Մեսրոպեայ նման լինիս,
Մեծին Պարթեւեանի պէս դու երկրորդ Սահակ մնաս։

Նախ՝ Աստուած քեզի բաշխէ Վեհափառ Սրբազանին՝
Որ նստած է բարձրագոյն Աթոռը Հայաստանին,
Լինիս դու աջ բազուկը հոգեւոր մեծ Իշխանին,
Վիճակը լաւ պահպանես մեր Եիրակայ սահմանին.
Արարիչէն խնդրում է քո խեղճ նուաստ Ղուանին
Համբաւաւոր քարոզիչ, միշտ բարեհոչակ մնաս։

30.

Ղ. Օ Շ Մ Ա Ց

Գիտունը տգէտի բանից չի՛ ցաւիր,
Խելագարի գործը հաշիւ չի՛ լինիր.
Սիրահարը սիրականից չի՛ ցաւիր,
Սիրոյ ասպարէզը կռիւ չի՛ լինիր։

Գիտութեան ճրագը յարաժամ վառ է,
Տգիտութեան վերջը մահ կ'պատճառէ.
Անդամանդը հասկացողին վաճառէ,
Տգէտներուն մօտը պատիւ չի՛ լինիր.

Ամէն մարդ չի՛ կարող լինիլ բարդաւոր՝
Թէկուզ լինի ճիշտ գահակալ թագաւոր,
Պայազատը բնական է հարկաւոր
Ցիմարը կարդալով՝ ազնիւ չի՛ լինիր։

Ջիւան, զուր է ցուցամոլներու ջանքը
Իրանց օգուտ չի՛ տար զուր գովասանքը
Մօտն է ձայնը, քայլքը իր կերպարանքը
Ագռաւը գովուելով՝ արծիւ չի՛ լինիր

31.

ՔԵՌՈՒԳԼԻ

Գնաց վերժ առաւ Հոչէ աբքայից
Հայոց աբքայ քաջ Տրդատը, ո՞ւր տեղ է.
Քսան երկու կանգուն զեռի վերայից
Մէկէն թռչող Վարազդատը ո՞ւր տեղ է։

Գայլ Վահանը պարսից զօրքին կրակեց,
Հնարներ բանցրուց ու խայտառակեց,
Տաք շամբուրով Մեհրուժանին պսակեց
Բազրատունի քաջ Ամրատը, ո՞ւր տեղ է։

Նա այլոց զօրքերից առնում էր զրաւ,
Այլոց զրաւում էր, ինքն էր անզրաւ,
Քանի՞ անգամ Հռոմմայեցւոց դէմ զրաւ,
Այն Տիգրանեան Միհրդատը ո՞ւր տեղ է։

32.

ՍՈԽԱԿ

Դուն էլ ինձի նման սիրահարուած ես,
Միշտ կ'լամ ողողակդ, ո՛վ սոխակ,
Արդէն սիրոյդ ժէջը խելաղարուած ես,
Նորից փաթրդն է նստաակդ, ո՛վ սոխակ։

Թէլթեւից եռանդոտ լաւ չ'լինիս դու,
Քո սէրդ նորա պէս չէ՛ իսկ ահարկու,
Դուն հպարտ, քո սիրականդ շատ քսու,
Էլ ի՞նչ լաւ է օրինակդ, ո՛վ սոխակ.

Անհիմ սէր քաշելու է իսկ վերջը փուտ,
Անխիղճ սիրականը չի՛ ունենալ դուրթ
Դուն էլ ինձի նման չես քաղէր օգուտ,
Զուր կ'անցընես ժամանակդ, ով սոխակ.

Վերջդ Զիւանոյս պէս կ'մնաս տխուր,
Հաղար կանչես՝ այնտեղ չես լսեր մէկ լուր,
Որքան երգես՝ աշխատանքդ կ'երթայ զուր,
Անօգուտ է շարունակդ, ով սոխակ։

33.

— ԱԳԱՀ ՀԱՐՈՒՍՏ

Դու այս աշխարհիցը ի՞նչ պէտքէ տանիս
Ագահ հարուստ, ժլատ հարուստ, չար հարուստ,
Որպէս դաշտի ծաղիկ շուտով կ'անցանիս,
Վատ անունդ միշտ կ'մնայ անկորուստ։

Թէ այսպէս մէկ Կրեսոս կար Հայաստան՝
Ագահ, անկուշտ, նախանձ իժ օձի նման
Ո՛չ աղքատ կ'սիրէր, ո՛չ ուսումնարան
Ո՛չ տանը մէջ ունէր կատարեալ ապրուստ։

Թէ խելք ունիս՝ սրի՛ խեղճերուն սիրէ,
Առատասիրտ լինելը մեծ խնդիր է,
Ուսումնարաններուն գումար նուիրէ.
Խեղճ տաներուն նոյնպէս մշտական հաղուստ.

Այդ քո տուած դանձդ ազգին որ կուտաս՝
Կը ամ՛ի միշտ և կ'մնայ անվնաս,
Ազգութիւնը քեզ կ'տօնէ անպակաս,
Գովասանք կ'լսես՝ անթիւ ամենուստ։

Թէ Զիւանոյս լսես՝ ով մեծ Ամիրայ,
Նատ պատիւ կունենաս աշխարհի վերայ,
Հոգիդ տրքայու թեան ժառանգ կ'դառնայ,
Օրհնութիւններ դու կ'ստանաս միշտ յերկնուստ։

34.

ՕՐԻՈՐԴ

Երբ տեսնիմ պատկերդ, սիրուն օրիորդ
Սիրտս կուրախանայ, կ'ստանամ ցնծում,
Եղջերու աչերդ որպէս մի որսորդ՝
Չ'տեսած վայրկեանս կ'մնամ տրտում։

Մինչև երբ քեզանից հեռու մնամ ես,
Գթա ինձի հոգեակ, մի' անել անտես,
Կանգնի՛ր, խօսի՛ր դէմս երես առ երես
Թէ ես սիրալուած եմ՝ կ'խնդրեմ ներում։

Զիւանին եմ, երբ կ'լսեմ խօսալդ,
Կարաւի պէս սիրուն քնքուշ մանն գալդ,
Քո անուշան մի շարժումդ, խնդալդ
Իմ սրտիս լարերուն կուտայ ընդհարում։

35.

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ես կուզեմ ճշմարտութիւն, սխալ դաղափար չեմ սիրեր.
Ուղղութեան կեանքս կուտամ, խաբերայ հանձար չեմ սիրեր.
Իմ խելացս ուժի չափ որքան կարող եմ՝ կ'աշխատիմ,
Անհերև ես տգէտ եմ, բայց՝ կրկին յիմար չեմ սիրեր։

Ընդհանուր մարդկութիւնը պատուիրած է սիրել մեզի,
Պարզապէս այլազգերը իմոյս հաւասար չեմ սիրեր.
Մանաւոր լուսի ճաշակ առած կ'համարիմ հոգիս,
Վասն այն ազգեցութեան ներհակ է, խաւար չեմ սիրեր։

Ազգութեան, Հայ Ազգութեան իբր մի անդամն էլ ես եմ
Ազգի չափ համարէ թէ յակինթ ու զոհար չեմ սիրեր,
Միութեան կապը խզող խմաստունը անգէտ է միշտ,
Այնպէսը խմաստակ է, խելքից է ակար, չեմ սիրեր։

Ընկերին նախանձելով վեսա տուող մարդն յաստուկ
Աստուծոյ թշնամին է, և նա է Բելիար՝ չեմ սիրեր,
Ես Հայոց ոսմիկներուն մխիթարող մի երգիչ եմ,
Եմ քնարիս պէս խօսող չլինի քնար՝ չեմ սիրեր։

Հայ տղոյ, Հայոց սիրուն աղջիկներուն սիրա ընծայէ,
Այլազանց աղջիկներուն սիրոյ սիրահար չեմ սիրեր.
Ես Ջիւան երգիչն եմ-դիտուններուն զովեստ տուող
Եւ նոքանցից առնելով՝ անգէտ խելագար չեմ սիրեր։

Յ6.

ԲԱՂԱԲԱՑԻ ԱՂՋԻԿՆԵՐ

Երկու աղքատ քաղաքացի աղջիկներ
Նստած մէկ պատի տակ՝ խօսում էին բան,
Երկուքըն էլ իսկ քաղելու ծաղիկներ,
Անուններն էր նոցա Նուռնուփար Նուշան։

Ընդանց հայրերն էին միշտ այլոց ծառայ
Մէկը միւսից ակար անզգայ,
Իրարու հոգևոր քոյր էին նոքա
Ո՛չ թէ արենակից, էին հարևան։

Շուշանն ասում՝ քոյրի՛կ Նունուֆար,
Մինչ երբ մնանք տրտում, առանց մխիթար,
Դամ մինչև երբ շրջինք մոլոր ու շուար
Զուներալով մեզի մի՛կ մի՛կ սիրական։

Նունուֆարն ասաւ, Շուշանի՛կ, քեզի
Ես կ՚ամանցնեմ բարեմիտ հեզի
Անդրամ, անօժիտ ոչ կառնէ մեզի,
Զունինք բնակարան, չունինք օթեւան։

Շուշանն ասաւ Նունուֆարին կայ հաստատ
Անունովդ ամէն բանով անարատ,
Մենք էլ կրօրոշենք մեզ նման ադքատ,
Հայաստանը տղայ շատ կայ մեզ արժան։

Նունուֆարն ասաւ՝ ես չունիմ եղբայր,
Ունիմ մի՛կ Ծերունի այլոց Ծառայ հայր,
Ի՞նչ անեմ, թէ որ կայ ինձ մի՛կ խղճուկ մայր՝
Նա էլ հաղիւ Ծառայող է այլոց տան։

Շուշանն ասաւ՝ մենք մեզ լինինք վարժապետ,
Դառնանք քաջ զինուորներ, առնենք տղեղ նետ,
Գանինք մին մին տղայ, փախչինք նոցա հետ,
Թող մեզ էլ համարեն քանիսի նման։

Նունուֆարն ասաւ՝ քոյրիկ ի՞նչ ասիր,
Երբէ՛ք մի դուռ կողպ չի՛ մնայ, սպասիր,
Դու քեզ փախչողներու դասը մի՝ դասիր,
Այդ անունից լաւն է՝ մանել գերեզման.

Շուշանիկը ասաւ, քոյրի՛կ Նունուֆար.
Ուզեղ որ դու խելքից եղած ես տկար,
Այնուհետև Նրան ոչ կառնէ յիմար՝
Որ աղջկայ տարին լինում է քսան։

Նունուֆարն ասաւ՝ իմ վարձով տունը,
Իսկէ մէկ օր բանայ բաղդիս դարուն,
Թող կատարեալ հուշակուի իմ անունը՝
Որը և այրի մարդն էլ է ինձ բաւական։

Շուշանն ասաւ՝ այլոց ապդից կառնեմ մարդ,
Թող լինի այլազգի մէկ երիտասարդ,
Այնուհետև ցնծամ, կ'լինիմ զուարթ,
Օտարից կ'ճարեմ ինձի օգնական։

Նունուֆարը նեզանալով Շուշանից՝
Խստիւ հանեց այս բառբառը բերանից,
Ասաւ, ինձի համար այլոց իշխանից,
Լաւ է մէկ ծերունի իսկ հայ մուրացկան։

Շուշանը խարդախ էր, չէ՛ր խօսի վճիռ,
Սակայն՝ Նունուֆարը կարծէր ճշմարիտ,
Երկուսը միասին նստած միամիտ՝
Մայրը Նունուֆարին-փնտռումէր իրան։

Տալով միւսի մայրը Շուշանիկ անուն
Կանչեց իւր աղջիկը, տարաւ դէպի տուն,
Ժամանակը մութն էր գալով իրիկուն՝
Շուտ ունեցան նոցա խօսքերը վաղման։

Յաջող դարձաւ նրանց բաղդի շրջանը,
Տեղը առաւ իրենց ձգած նշանը.
Ամուսնացան Նունուֆարն ու Շուշանը
Դանելով մարդ ամէնը իւրապատկան։

Այժմեան ամուրիի տէս խղճմտանքը։
Հարուստ մարդու փնտոյ լինելն է ջանքը.
Մեր քաղաքն էլ մնաւ Տփխիսու կեանքը.
Փողով աղջիկ կուզեն տղայքն հիմակուան։

Մի քանի հին ծէս կան, դիտցողին դառն են,
Այժմեան հետ անորոշ, պղտոր ու խառն են,
Քաղաքը փող կ'ուտան, գեղը փող կառնեն,
Հայոց մէջ կայ այսպէս քանիմ՝ վատ նշան։

Արի՛, ուսում, արի՛ դու մեր մէջը հիւր,
Դեռ ևս շատ ունինք կարծիքներ մենք թիւր
Մաղագործներու մէջ մինչ երկու հարիւր
Մանէթ խօսքն առնելուն՝ կուտան մէկ բերան։

Նա մանաւանդ՝ այժմեան կանայքը բոլոր
Ամիսն անգամ հանդերձ կուզեն նորանոր,
Թէ մարդիքը լինին յատուկ թաղաւոր
Չեն կարող այս ծախսը տանիլ մշտական։

Օրիորդները միշտ սիրումեն հանդէս,
Իրանց սփոփելու զուարճանք կրկէս,
Ամեն ազջիկ կ'ուզէ՝ որ լինի այնպէս,
Ինքը քնքուշ տիկին, իր մարդն էլ իշխան։

Բայց՝ պրտից աղքատի աղջկան լաւ օր,
Անդադար կաշխատի ամենահզօր,
Ոտքերն համբուրելով իրայ հօրն ու մօր՝
Հապա թէ կ'հաղնի մէկ նոր պատմուճան։

Հիմա պարզախօսին կ'ասեն անմիտ է,
Պահանջած խորհուրդդ երկնքէն դիտէ,
Դարձեալ՝ ամէն մարդ իր դիտցածը գիտէ,
Աւելնորդ կ'հաշուեն խօսքերդ Ջիւան։

37.

ԵԿԵՂԵՑԻ

Երանելի կին գեղեցիկ, ով Տիկին,
Կենաց շաւիղ, ծնող բարեաց, մաքրաձին,
Գեղատիպար, իմ նպաստելի կարեկցին,
Վարք ու բարքով մի հատիկ ես ով դու մին,
Մայր գիտութեան առաջին ես, առաջին։

Պատարեալ ես Մայր մերազնեայց, ով շքեղ
Իմաստուհի, ամենագէտ, հանճարեղ,
Անպատմելի խօսակցիլդ շատ հաճելի,
Գուշակիներիդ կարիքները կենաց դեղ,
Տեսութիւնդ ինձ մի՛ անիլ անբաժին։

Երջանիկ ես, ով Տիրուհի՛, երջանիկ,
Նախածնունդ, որդիքներով անպրանիկ,
Ցուսամ Աստուած, միշտ կ'մնաս անառիկ,
Անանցնելի, յաւերժ գունով գեղեցիկ,
Երևելի, Մեծ իշխանի Ամուսին։

Ղամբարաձև վառվռուն են աչքերդ,
Երջահայեաց շատ սիրուն են աչքերդ,
Փայլակի պէս զուարթուն են աչքերդ,
Նատ հեռատես իմաստուն են աչքերդ,
Դորձ քնընող ներքին ու միշտ արթաքին։

Ես ծնել եմ քո ծոցումդ իմ հոգեակ,
Հաւատարիմ Մայր գորովի ընդունակ,
Մեր ամենես թագ պարծանաց և պակ,
Ով որ լինի քո պայմանիդ հակառակ՝
Նա քո մեծդ անարդուած է դլխովին։

Ցերկ գիշեր ով իմ մայրիկ մարդաշահ
Հին դարերէն մինչ ց'կէտրս սրբապահ,
Քոյրերիցդ գերապատիւ նախագահ,
Չեմ մոռանայ քաջ անունդ մինչ 'ի մահ,
Անբաժին ես կենացս հետ միասին։

Իրաւն ասեմ, զեղեցիկ ես, մէկ հատ ես,
Ամէն բանով աներկիւղ ես, ազատ ես,
Արևելքից արևմուտք կ'նկատես,
Քո Զիւանու խաւարն ինչ՞ փարատես,
Քանի որ կաս՝ ես չեմ մնար անլուսին։

38.

ՄԵՐ ՈՒՆԵԻՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ որ Աստուած կամենայ տալ մեր ազգին բարի կեանք՝
Կուտայ յառաջ մեր Հայոց հարուստներուն խղճմտանք.
Մեր ազգի հարուստները անտարբեր են յիրաւի՝
Հաղարէն մէկ՝ հայրենեաց համար նրանք չէն ցաւի,
Չեն մոռծեր թէ՝ ունին եղբարք քաղցած ծարաւի,
Նրանց մէջը շատ չկայ խղճի նշոյլ զորովանք։

Աշխարհի մէջ միշտ այս է ամենազարմանալին,
Հարուստների ձեռքումն է ազգի բաղդի բանալին.
Դէպքը այսպէս է բերել, սա է անիմանալին,
Սորանցից պիտի յուսայ բարիք թշուառ խղճալին,
Վարուիլ նրանց հետ սիրով այս է յատուկ ցանկալին,
Մինչև՝ նրանց որպիքը ստանան լաւ հրահանգ։

Այնուհետև կ'բացուի բաղդի դուռը համարձակ,
Ամէն մարդու բաղձանաց համեմատ առհասարակ,
Նրանք կ'դառնան բոլոր ժողովրդին օրինակ,
Ամենը իւր քսակից գնելով ջոկ հանգանակ,

Կը սկսուի յաջողիւ գործը այսպէս շարունակ,
Պարաքերը ճնճաղելով՝ էլ չեն սիրեր աղաչանք։

Կաղմում է բացառութիւն առատասիրտ իշխանը,
Ամեն բարի գործի մէջ ցոյց տալով իւր նշանը,
Բաց է ամեն ժամանակ նորա շտեմարանը,
Այնպէս մարդը կ'ստանայ արժանի գովասանը.
Եւ աղքատաց համար էլ պատրաստ է միշտ սեղանը.
Վարձը վերնուստ կ'ստանայ՝ որչափ կրէ չարչարանք։

Աստուած ամենաբարին ամեն մէկին հաւասար
Ստեղծել է աշխարհի մէջը ապրելու համար.
Բայց ինչուց է մինն աղքատ, մինը ունի մեծ գումար,
Սա բաղդ է թէ՞ դիտութիւն, արի՛ կաղմէ գաղափար,
Ես Ջիւանի երգիչս մնացում եմ անդադար,
Հարստութիւն գտնելու հարկաւոր է աշխատանք։

39.

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Ե՛կ, եկ շնորհաց սուրբ Հոգի Հայաստանը պահէ,
Հայոց հոգևոր արգարադատ իշխանը պահէ,
Փէ՛ք անու՛շ Հոգի՛, նորոգող գեփիւռդ միշտ,
Վանէ սեւաթոյր ամպերը պարզ պայմանը պահէ։

Տե՛ս աշխարհի չորս անկիւնից կանչում են զքեզ,
Հայցում բարեգութ խնդրում Հայերու նշանը պահէ։
Տուր Հայրենիքիս անարատ անմեղ քաջ հովիւներ,
Այժմեան վատերը հեռացրու, արժանը պահէ։

Տուր մեզ նորոգիչ այդ կարգաւորած, բարձրահոգիք տուր,
Այն արևելեան խանգարած բուրաստանը պահէ,
Լսէ՛ Ջիւանուս, ով բարեգութ, խնդիրը լսէ,
Հայկայ տառերով բանահիս Հայկարանը պահէ։

40.

Խ Ի Ղ. ձ

Երկնային ճանապարհը հարթողը դու ես խղճմտանք,
Ում մէջը որ դու չ'կաս՝ այն մարդը չունի բարի կեանք.
Դու Արարչէն բաշխուած՝ հոգւոյ առաջնորդն ես յաւուրք,
Քեզ հետևող սրտերը հաստատ կ'մնան անխախտանգ։

Քեզանով՝ չարն ու բարին մարդիկ կ'որոշեն լրիւ,
Քո դէմդ մեղանչողին Աստուծմէ կ'իջնի հալածանք,
Կռապաշտ, մահմետական, երբայեցի, քրիստոնեայ,
Բոլորի համար դու ես օրէնք բնական, հրահանգ։

Վայ հազար անգամ նրան՝ ով որ քո ձայնդ չի՛ լսեր,
Կենդանի աչքով պիտի տեսնի հազար մէկ չարչարանք,
Երանի՛ այն մարդոյը, որոնք կ'հետևին քեզի,
Ես Զիւանս տալիս եմ սրտով սիրով միշտ գովասանք,

41.

Ս Ր Տ Ե Ր

Եթէ մի սիրա՝ սրտի չի՛ սիրեր հոգւով՝
Այնպիսիք իրար հետ ապրիլ կարող չեն.
Նոքա միշտ կ'մնան իրար հետ խռով,
Առող են մէկ մէկու, գործ կատարող չեն։

Իրար առող սրտերը թո՛ղ խափանուին,
Եթէ չ'հեռանան՝ 'ի զուր կ'սպանուին,
Միատեղ մնալու՝ լաւ է բաժանուին,
Ըսաորում՝ միմեանց ճիշտ յարմարող չեն։

Այսպէս ընկերութեան վերջն է շատ թշուառ,
Կրակի պաշար են սոքա որպէս ծառ,
Մէկի կեանք ասածը միայն թուի դատ,
Սորանք իրարու սիրտ մխիթարող չեն։

Վաղճանն ի՞նչ է այսպէս բանին ոչ Ֆիւան
Դեռահաս կ'տանի մարդուս գերեզման,
Թէ ապրին էլ՝ կարծիր միշտ կիսակենդան
Ստուերն են աշխարհի մէջ, կեանք վարող չեն։

42.

Հ Ա Ր Ս Ն

Եօթն հրաշալեաց գլխաւորն ես,
Ամենից գեղանի պատուականն ես, հարս,
Նգեմեան ծաղկալի շքեղ ձորն ես,
Կենսատու շահաւէտ բուրաստանն ես, հարս։

Ակնայրդ քո խնդիրդ կատարեց,
Քո չար ոսոխներու միտքը խանգարեց,
Հազար պատգամներով քեզ հաղիւ ճարեց,
Դու անմահ փեսային սիրականն ես, հարս։

Պաշտպանէ Ֆիւանուս զարդարուն, աղու,
Երինից կարդուած ես մեզ հոգաբարձու,
. . . . . Հայաստանին ժառանգացը դու
Անմահէն ղրկուած պահապանն ես, հարս։

43.

ՀԱՆԵԼՈՒԿ*

Զարմանալի կայ մի բան, աշխարհ կ'վախի այն բանից,
Այն բանը երկիւղ չունի ոչ արքայից, ոչ իշխանից,
Հինգ հարիւր տարի հազիւ լինի նորա ստեղծուիլը,
Բերանից կ'յղանայ, դարձեալ կ'ծնի բերանից։

Ինքը մեռածէ, սակայն կենդանեացը վաղման տուող,
Ցարութիւն կառնէ մէկէն երբ որ կ'հանեն պատեանից։
Բայց՝ սորա ստեղծողը Ասիայ չէ՝, Եւրոպայ է,
Այս բանը ծնուել է նախ՝ Ֆրանսիոյ գործարանից։

Իմ պահուստից Ափրիկէի մէջ չ'կայ այնքան բազում,
Կարող ես տեղեկանալ աշխարհատես պատմարանից.
Պէտք է խնդրենք յարաժամ Արարիչէն աշըդ Ֆիւան
Միշտ հեռու պահէ սրա վնասները Հայաստանից։

44.

ԸՆԿԱԾ ՄԱՐԴԸ

Ընկած մարդը չունի հաստատ օդնական,
Կողմը պահողը քիչ՝ գանգատողը շատ,
Տառապելոյն եթէ կանչեն դատարան՝
Մեղքը ստողը քիչ՝ հաստատողը շատ։

Ո՜հ, թշնամիս չ'ընկնի չար լեզուի տակ,
Ամեն կողմից գլխին կ'ծաղեն կրակ,
Ընկած մարդը թէ լինի էլ հրեշտակ՝
Բարին խօսողը քիչ, նախատողը շատ։

---

* Մանօթ. հին ձեւի հրատան.

Զգուշացի՛ր չարախօսներուց, Ֆիւան,
Մաղի՝ չափ սխալը կ՚շինեն դերան,
Ընկած մարդն է մոլոր՝ ոչխարի նման,
Հոգսը քաշողը քիչ՝ դիշատողը շատ։

45.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Թէ կ՚նեղանայիր քեզ սիրողներից՝
Թող գեղեցիկ չ՚լինէիր ոչ սիրուն,
Օրինակ, ա՛ռ հոգի՛ս, համբերողներից,
Բարկանալով՝ քեզի դու կանես նկուն։

Իշխանաց պարտէզից քաղուած ծաղիկ ես,
Պարկեշտ մօրից ծնուած բարի աղջիկ ես,
Փառք տուր քո Արարչիդ՝ որ գեղեցիկ ես,
Տգեղներուն ոչ կ՚նայէ յիմար դուն։

Գեղեցիկը աշխարհիս մէջ հազար է,
Թէ ծնուել է պարկեշտ զիտնական մօրէ,
Գեղեցկութեանդ չափ շնորհք սովորէ՝
Որ ունենաս ազնիւ, քաջ, բարի անուն։

46.

Հ Ա Մ Բ Ե Ր Ո Ի Թ Ի Ն

Ժուժեա՛ սի՛րտս և համբերէ ցաւերուն,
Համբերելով՝ ամէն մի գործ կատարի.
Ատուած հանի նախ՝ ընկղմած նաւերուն,
Յետոյ՝ ինձ թշուառս սուրը ծէրն բարի։

Յիշէ՛ Տէրը, օրինակ առ Նրանից,
Զարշարուելով՝ օրհնէնք կ'ելլէր բերանից,
Շնարհակալ եղէ՛ր դուն այսքան բանից,
Մի՛բա, դու այս ցաւերը տար և յօժարի՛։

Կը կրեմ անունը այն Հմայեակին՝,
Որ էր քաջ եղբայրը սուրբ Նահատակին.
Մի՛բա, յիշէ՛ Վեռնդին ու սուրբ Սահակին՝,
Բանդում չարչարուեցան քանի՞ մեկ տարի։

47.

ՐՈՒՊԱՑԻ ԴԻՒԱՆԻ

Ինչքա՞ց է՝ բան հասկացող մարդոցը միշտ բամբասում են,
Մականուններ կնքելով՝ կարգէն մոլորեալ դասում են.
Եղուիտ ու ցածրահոգի անխիղճ՝ները հարուած տալով՝,
Զգայուն թարմ սրտերը տմեն միջոց ինասում են։

Ովքե՞ր են, բամբասում են ազնիւ խոհեմ գիտուններուն,
Մանաւանդ՝ ազգի համար զոհուող խելօք արթուններուն.
Խարուելով եղուիտական կարգէն եղած Տարուններուն,
Զարգացած, մաքով խելօք մարդուն անիրաւ ասում են։

Ո՛վ Զիւան, մեր երկրի վերայ խաւար մուխն է տիրում,
Մարդ չ'կայ Քրիստոսին լսող՝ թէ՝ ի՞նչ է պատուիրում.
Քաջ լուսաւորեալներից՝ պառաւներին շատ են սիրում,
Նեռ գնել տալով նրանց՝ մեծ մեծ բաներ են սպասում։

48

ՀԵԳՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է ամեն ժամ տան հոմար կը էրուխ,
Այլոց տունքն էլ օթևան չէ՞ քեզի,
Ինչո՞ւ անբաղդութեան մէջը դեգերուիս,
Դատարկ յոյսն էլ մէկ ապաստան չէ՞ քեզի։

Հաշիւ չի՛ լինի ապրանքդ համարով,
Մտքէդ կանցնի հարիւրներով հազարով.
Երևակայութեան բերած պաշարով
Քամիով լի շտեմարան չէ՞ քեզի։

Կը աշխատիս, դեռ մանուկ ես, պատանի՛,
Շատ կայ տուող ծնողացդ երանի,
Անունդ մեծ, ջիպրդ դատարկ, Ջիւանի՛.
Ապրիս ասելը բաւական չէ՞ քեզի։

49.

ԻՄ ԱՆՑԱԾ ՏԱՐԻՔԸ

Իմ անցած օրերս, անցած տարիքս,
Այսօր իմ աչքերիս երազ կ'թուայ,
Ոչինչ համարուելով բոլոր բարիքս՝
Նախանձ թշնամու մօտ սնազ կ'թուայ։

Կորուսի օրերս թանկ ու անմման,
Միշտ օտարին տալով պատիւ գովասան,
Եթէ տասը մատս մամի պէս լոյս տան՝
Դարձեալ անկամորդին նուազ կ'թուայ։

Բաւ է, անձն իմ, բաւ է, դու քեզի խարես,
Ապերջանիկ ապրես, [illegible] հոգիդ լափես,
Ջիւան բերանիցդ մարդարիտ թափես՝
Քեզի ատողներուն աւազ կ'թուայ։

50.

ՐՈՒՊԱՑԻ ԴԻՒԱՆԻ

Իսկ Արարչից ամեն մարդու մէկ բնութիւն տրուած է,
Որը ազատ, որը գերի ցաւերու մէջ խրուած է,
Ճշմարիտ խօսողներու գագաթները ծակ պէտք միշտ,
Որովհետև՝ ստի ձեռքից կեղծաւորաց մրուած է։

Ճշմարիտ քաջ զինուորը տես կռվում է, սուսեր չունի,
Աղքատի մեծ գետունը իր տանը մէկ լապտեր չունի,
Քաղցրը արդիօք ինչո՞ւ իրան համեմատ ընկեր չունի,
Կարելի է, լաւը՝ վատին բնականից դրուած է։

Կեղծաւորը աշխատում է միամտին խանգարել,
Հետևում է՝ պարզախօսի ունեցածը տարել,
Ուզում է ճշմարտութեան հանդէպ կռիւներ հանձարել,
Սատիսօսի աղեղը լարուած՝ սուսերը սրուած է։

Տես, Ջիւան, ուղղախօսին երթալու ճանապարհ չ'կայ
Սուտ լուրերը չորս բոլորը փաթթել են, համար չ'կայ,
Հիմայ նորէն երկնուց ձայնէ հրեշտակ, ձար չ'կայ,
Երբ մի մարդու անունը վատ աշխարհի մէջ ցրուած է։

51.

ԴԻՊԷԻԴ

Ի՛մ սիրուն, հագած հալուդ,
Գեղեցկութեանդ յարմար է,
Տարածուել է քո համբաւդ,
Աւա՜ղ, որ քեզի համար է։

Կորուսիր թանդ ժամանակդ,
Չ'ճանաչելով վիճակդ,
Իմանում եմ նպատակդ,
Դաղափարդ դաղտփար է։

Մի՛ ձգեր այլոց գլխին քօղ,
Որ տեսնելու չքնին կարող,
Չ'կայ քո լուսիդ կարոտող,
Հիմայ դարը շատ խաւար է։

Քանի՛ է խմացուել լուրդ,
Տեղը դի՛ր դաշոյնդ, սուրդ,
Քո կերցրած կերակուրդ,
Ախորժակի օգտակար է։

Յայտնի է գործած գարանդ,
Ոչ՝ չիգիտեր ծուռ է բանդ՝
Չի՛ համոզուի ստութեանդ.
Հոգի՛ս, Զիւանը յիմար է։

52.

ԳԷԼԷՆՏԷՐԻ

Ինձնից մի՛ հեռանար սիրոյ բարձր Հեղինակը,
Մագեա՛ մնացս աշխարհիս մէջ քո արեգակը,

Ինքդ ես բոլոր աշխարհի միջին սէր տարածողը,
Անբաղդ չէ՛ մի մարդ երբ ունի քու սիրոյդ պսակը։

Սիրով ամենայն բան քո մտացէն յառաջ եկաւ,
Մարդուն սիրելով՝ ղրկեցիր աշխարհ քո Զաւակը,
Ինչ մարդ քո սէրը իր մտացը մէջ չ'ունեցաւ,
Իսպառ չէ՛ գիտեր նա սիրոյ քաղցր եղանակը։

Երբ ես ծնողեց ծնուել եմ ու յայտնի եմ եղել,
Սիրոյդ բաժակով լմկել եմ քաղցր օշարակը,
Անվերջ ու անակիզը սէր է իսկ անունդ անմա՛հ,
Հաստատ ապաւէն միայն ես մարդկանց նպատակը։
Ապրիմ, թէ մեռանիմ Զիւանս, թէ ողջանամ ես,
Այժմ և յաւիտեան քո սիրոյդ եմ հպատակը։

53.

ՄՈՒԽԷՆՄԷԶ

Իմ բնութեանս համեմատ մէկ հատ բարեկամ չ'գտայ,
Անցուցած օրերուս մէջ երբէք ուրախ ժամ չ'գտայ,
Չ'գտայ իմ սիրտս ուրախ, մինչև մի անդամ չ'գտայ,
Ամենեին ուրախ օրեր, ուրախ ամիս, ամ չ'գտայ։

Այս դաւաճան գոռոզ սրտիցս չի մնար միաքս մաքուր,
Մաշում է անուշ կեանքս տառապանքով դատարկ 'իզուր,
Մինչև անդամ երակներուս միջի արիւնն էլ է՛ տխուր,
Կազմուածքիս մէջը ուրախ փնտռեցի անդամ չ'գտայ։

Ամենեին բան չիմացայ, կորան պատուական օրերս,
Ներկայ չի՛ յիշուի անցեալը, եղեն անեղան օրերս,
Մի ազատ կեանք էլ չունեցայ, սև ու մութ անցան օրերս,
Վերջապէս աշխարհիս մէջ քմքիս հաճոյ համ չ'գտայ։

Ինձ թռչունի պէս բռնելու համար թակարէներ լարեցին,
Իմ ունեցած բոլոր կայքս ինձ խաբելով աւարեցին,
Իմ իսկական բարութեանս դէմ չարութիւն հնարեցին,
Ո՛չ հօրէ, և ո՛չ եղբօրէ, ո՛չ մէկէն խնդում չ'գտայ։

Խնդմ Զիւանս ես ըմպեցի դառն օղով գաւը բոլոր,
Ընչին ունայն բան է եղեր աշխարհի համբաւը բոլոր,
Քնեցի ու իմացայ ընկերներուս ցաւը բոլոր,
Ինձի նման կեանքը մէկին թառամ ու թարշամ չ'գտայ։

54.

Թ Է Ճ Ն Ի Ս

Իմ տուած յարգանքս պատուելի՛ ընկեր,
Անկեղծ սիրելի պատիւ համարէ,
Իմացիր քո սէրդ սրտումս է ընկեր,
Այրիլը քո տեսոյդ՝ քեզի համար է։

Հագել զարդարուել ես գեղեցիկ հալաւ,
Ամէն մարդ քեզ կասէ գեղեցիկ հալաւ,
Հոգիս կրակովդ գեղեցիկ հալաւ,
Թէ խիղճ ունի՛ս մէկ մտածէ, հա՜, մարէ։

Զիւանիիս վերքերն արիր քարանձաւ,
Մարդ եմ ես սիրելի՛, չեմ իսկ քար, անցաւ,
Քո մասին գլխիցս քանի՞ քար անցաւ,
Լե՛ր ցաւակից, արի՛, թուէ, համարէ։

55.

Մ Ե Ր Դ Ա Ր Ը

Ի՞նչ վատ ժամանակի հասանք ով Աստուած,
Շատ վատ է երևում աշխարհի կեանքը,

Բազմացան անկամարթ ազահները ցած,
Խարում կլանում են այլոց ապրանքը։

Ժամանակիս քիչ կայ լու երիտասարդ,
Ըստ մեծի մասին են խարերայ կախարդ,
Որտեղ որ տեսնում ես շրջամոլիկ մարդ,
Ստոնութիւն է նորա բոլոր բաղձանքը։

Վատ քարոզիչները եկած են հանդէս,
Խաբում են շատ մարդու երեխայի պէս,
Ներքին դայլն նման հօան անում են կէս,
Արտաքին հովուի հետ տես քոքոանքը։

Կարծեմ չինիր այսպէս մի շփոթուած դար,
Երթալով կ'շատնայ անխիղճն անհամար,
Մարդկանց թոյն են տալիս շատ արուեստաբար,
Կ'ուտեն, չե՞ն հասկանայ գալած փորձանքը։

Մի խումբ մարդիք կան որ, ողջը բացրերան,
Ո՛չ Աստուած կ' յիշեն, և ոչ դատաստան,
Ձեռքերն ընկած մարդը ճիշտ սագի նման,
Կ'պլկին խեղճի բոլոր փետրանքը։

Կիսաուսում մարդու խօսած առակը,
Կ'մարէ միտիտ մարդկանց կրակը,
Դեղ տալու փոխանակ՝ կ' հանէ ակը,
Կա՛ւելցնէ առողջ մարդու տանջանքը։

Այս կերպ բժիշկները շատ են յառաջել,
Ցգէտ, բան չ'գիտեն, և չեն ամաչել,
Հաղարից մէկ վարպետին չեն ճանաչել,
Շատ պակաս է իմաստունի յարգանքը։

Մի տեսակ հարուստ կայ նման ագռաւի,
Կ'ծծէ արիւնը աղքատ ծերուկի,
Հաշիւը չե՛ լինի ոսկեաճամուկի,
Կրկին աղքատներին կպճելն է ջանքը։

Այրաշէնց է այս պատիժը մեզ համար,
Օրը մի նոր վատ բան կ'ստանայ աշխարհ,
Դի ասելով կվազվազեն անդադար,
Բազմացել են գայլերի արշաւանքը։

Արիկայի համար խրատն է տնազ,
Նա մարդ սաւարելու կ'յարի վազ,
Աչքն է ապօրինի գործի հանապազ,
Անխիղճ մարդը բան չի սեպել զրկանքը։

Ո՞ւր է մարդկութեան հետ զգաստութիւնը,
Ո՞ւր է բարոյական պատրաստութիւնը,
Այժմ փող չի՛ անիլ նուաստութիւնը,
Ամեն կողմով շատ է իւր տառապանքը։

Գունդագունդ կ'շրջի անառակ բարդը,
Վատ խօսքերով կ'խոցոտեն մեր լեարդը,
Հանգստութիւն չունի միայնակ մարդը,
Ամեն օր կ'զգայ կեանքի զզուանքը։

Անամօթն աշխարհ'ին շատ ճնաս կուտայ,
Ճշմարտութիւն, երկիւղ նորա մէջ չ'կայ
Որտեղ որ կ' տեսնին մի համեստ տղայ,
Կըսկսեն հետևից հայհոյանքը։

Փնտրէ՛, գիտուն, այժմեան Առաքեալն խստակ,
Ազգ յառաջ տանելու չունի նպատակ,
Ցերեկը մարգարէ, գիշերն աւազակ,
Լա՛ւ հասկացի՛ր սրբի դու խղճմտանքը։

Զարութիւններից շատ հոգիքս է տխուր,
Զոքել են սրտերիս ցաւերն ընդհանուր,
Հիմայ աղբիւրներից չեն վազեր պարզ ջուր,
Պղտոր են դեռևս վճիռ հոսանքը։

Անգործ, պարապ մարդիկ շատ, չեն ուտեր հող,
Հարկաւ դորանք վերջը պիտի լինին գող,
Հարիւր մարդու ինքնունը արբեցող,
Քնեղ չկայ, որտեղից է աշխատանքը։

Թէ որոնես հենգ անկիւնը աշխարհին՝
Դեռ ուշ կ'շիտկուի սիւնը աշխարհին,
Սիրե՛ տ, մի՛ կարգա պատմութիւնը աշխարհին,
Ցաւիտեան չե՛ն հատնի ցաւոց գրեանքը։

Լռել է, չի՛ խօսի մեծ իմաստունը,
Զզուելով աշխարհից՝ փակուել է տունը,
Դառն ժամանակի անդուր անունը,
Փակել է զգայուն մարդկանց բերկրանքը։

Տուրք ու ողորմութիւն, մեկ նուէր չկայ,
Մարդկանց մէջը յոյս ու հաւատ սէր չկայ,
Բացի՛ Աստուած՝ խեղճ մարդոցը տէր չկայ,
Ինքն է թեթեւցնող մեր շարշարանքը։

Ուրեմն այդպէս է՝ Ջիւանի՛ երգիչ,
Նատ դատէ, շատ լսէ, ինքդ խօսիր քիչ,
Ամեն բան կ'ուզուի, կանչէ Արարիչ,
Քեզանից հեռացնէր զուր բամբասանքը։

56.

Ե Ր Գ

Իմաստութեան փափագ ունեցող անձը,
Հեզ ու խոնարհ, համեստ, կատարեալ պէտք է,
Ճշմարտութեան զոհել կամեցող անձը,
Ուղիղ, առաքինի առաքեալ պէտք է։

Սուրբ է Հարսը անմահական Փեսային,
Է նման Մարիամին ոչ թէ Սարային,

Պինդ պահպանող հրամանը արքային,
Հարազատ ծառայող կուսակալ պէտք է։

Բանիբուն լինողը չէ՝ ընկնիլ թակարդ,
Նա միշտ առողջ կեանքով կ'ապրայ զուարթ,
Աշխարհի մէջ ինչպէս լինի կապրի մարդ,
Վերջին պատասխանը ուղիղ տալ պէտք է։

Ջիւան, բարութիւնը հաստատուն սէր է,
Ատրճուց եկածը յատուկ նուէր է,
Մուլութիւնը աղքատութիւն կ'բերէ,
Հաստատ գործի համար միշտ մեն զալ պէտք է։

57.

ԱՌ ՎԱՍՄԱՇՈՒԲ ԿՈՄՍ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ

Լիահանճար անպատճառ հնորհաց շահեմարան,
Վասմաշուք ազնիւ Կոմս քաջդ Լօռու Մելիքեան,
Դու Հայաստան ծնուած ես,
Հայի հոգւով սնուած ես,
Անմահ Փրկչի արիւնով,
Մկրտուելով գնուած ես,
Գեղեցկատիպ պատկերիդ նման այլ տեղ չէ՝ լինիլ,
Ցեղիդ նման շատ երկիր պատուելի ցեղ չէ՝ լինիլ,
Լուսինը իւր աստղերով քեզ պէս շքեղ չէ՝ լինիլ,
Այնքան ունիս քեզ վերայ փառաւոր շքանշան։

Ամբողջ Ռուսաստանի բարերարն ես, ո՛վ Հերոս,
Քեզ վերայ բան գրելու հարկաւոր է Հոմերոս,
Դ'ասա՝ Կարսը կործանեցիր,
Տաճիկներին վանեցիր,
Հայրենեացդ պատիւը,
Միշտ բարձր պահպանեցիր,

Թշնամիքդ ամօթու քեզի դարձան բարեկամ,
Քո պատիւդ, քո փառքդ աւելացաւ ամէ ամ,
Տէրութիւնը քեզ սիրեց դիմառաւ բարեխնամ,
Լիովին վարձատրեց տալով բարձր աստիճան։

Քեզանով պայծառացաւ մեր հայութեան անունը
Ուրախացաւ, բերկրեցաւ բոլոր Թորգոմեան տունը,
Եւրոպացիք հասկացան,
Զարթեցան, զգաստացան,
Քեզպէսներով վեհ հոգի
Մեր ազգին լաւ իմացան։

Կեցցես, տպրիս, շատ ապրիս, կեցցես Տէրութեան համար
Ամենեւին գործի մէջ չեղար թերի անկատար,
Ծագումովդ ցեղովդ որպէս մէկ հատ անգին քար,
Ամենայն մի դարի մէջ գնահատուող կարկեհան։

Մեր ողբրմած Կայսերի հարազատ թիկնապահը,
Հաւատարիմ ծառայող ուներով Տիրոջ ահը,
Միջոցներ հնարեցիր,
Եղած չարը մարեցիր,
Ինչ քան դժուար գործ տուին,
Բոլորը կատարեցիր։

Անդադար աշխատեցար գիշեր ցերեկ առանց քուն,
Երկրորդ Դաւթի որդին ես, Դու Սողոմոն իմաստուն,
Վարակիչ հիւանդութեան առաջն առար հաստատուն,
Վտանգից ազատեցիր ողջ Նահանգով Աշտարիան։

Երբեմն էլ բարձրութիւնից խնդրեմ քիչ վար նկատես,
Սաբլուկ ցեղակիցներ ունիս, պիտի ազատես,
Քեզի հասկանալի է,
Թորհուրդս զգալի է,
Տէրութեան մօտ քո խօսքդ,
Դիտեմ անդառնալի է։

Ինչ որ խնդրես՝ չէ չկայ, ամենին յայտնի բան է,
Խնդրէ հոգոյ Արծուին Հայոց հարցը պաշտպանէ,
Ես Զիւանս խնդրումեմ Աստուած քեզի պահպանէ,
Ապրիս երկար միշտ խաղաղ, լինիս ազգիդ օգնական։

58.

ԳՆԱՖ

Լսիր, սիրելի իմ աղաչանքս,
Արժան համարէ, լուր պաղատանքս,
Կեղծ մի համարեր իմ գովասանքս,
Սրտով սիրումեմ քեզ, բարի կեանքս։

Աստուած վկայ է, քեզ սիրումեմ շատ,
Եղեր միամիտ, ընծայէ հաւատ,
Լինիս երանի սուրբ ու անարատ,
Այս է յարաժամ ցանկալի ջանքս։

Ամեն առաւօտ խնդրումեմ այսքան,
Սրտիդ համեմատ Տէրը տայ արժան,
Առանց քեզի ես՝ եմ կիսակենդան,
Նա՛տ է նաղելի, միշտ գորովանքս։

Ափսոս գեղեցի՛կ, չես նայում ինձի,
Տեսոյդ նայելը խնայում ինձի,
Իզուր մի՛ մաշեր ներկայում ինձի,
Արդէն կայ վաղուց իմ տոչորանքս։

Լդղեր Զիւանուս հաստատուն ընկեր,
Խաւար մնացս լուսատու լապտեր,
Սպասելով՝ ինձ չմնաց համբեր,
Սոստիկ աւելացաւ մոլորանքս։

59.

ԱՇԱԿԵՐՏ

Լե՛ր աշակերտ խելահաս մարդոյ մեռը ազնիւ տղայ,
Ասանելով իմաստութեան Հեղինակին արդար վկայ,
Տե՛ս թէ իմաստութիւնը որպէ՞ս հզօր թագաւորէ,
Իսկ հոգւոյ կենդանութիւն՝ պարանոցիդ զարդեր կուտայ։

Հաճեցող եղի՛ր ու հասկացիր բանին ճշմարիտը.
Դիր կ'ուզես ազէտ մնալ՝ գերեզմանդ պատրաստ ահա
Դիտցի՛, որ ինչ մարդ չունի իմաստութիւն՝ և կեանք չունի.
Ասանցնի արև լուսինը, չ՝ տեսնելով կոյր կ'մնայ։

Գիտունի միտքը բաց է, հայելւոյ պէս փայլուն ճիշտ
Միշտ նորա սրտի եղած աշխարհումը արևը կայ,
Ո՛վ Աստուած իմաստութեան սկիզբը երկիւղ Տեառն է,
Մարդը որչափ որ գիտուն լինի՝ սխալմունք կունենայ։

60.

ԼԱՒԻ

Լա՛ւ է բոլորովին ազէտ լիմարը,
Քանզ կիսաուսում իսկ իմաստունը,
Լսածը չ՝դատած թերուս հանճարը,
Խօսելով կ'քանդէ շատերի տունը։

Գիտութիւնը գնահատել չէ՝ կարող,
Լոյսը խաւարիցը զատել չէ՝ կարող,
Լսած բանը ուղիղ դատել չէ՝ կարող,
Վերան կ'առնէ բնագիտի անունը։

Զի՛ւան, կան խելացի մարդիկ բնական,
Նոքա չեն՝ համարուի ծիշտ ուռուցնական,
Հաղիւ ուռուցնասէր կ՚անուանէ իրան,
Ամէն բանէց տեղեակ մտքով հասունը։

61.

ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆԸ

Խաբերայ աշխարհը թէ լաւ նկատես,
Քիչ կ՚ճարուի հաւատարիմ բարեկամ,
Որքան մի մարդու հետ պինդ սէր հաստատես,
Նա չի ճեալ քեզ հետ սիրով յարատեւ։

Թէ դառն չլինի աշխարհի բանը,
Մարդիկ ինչո՞ւ կ՚հակուին դէպ դաժանը,
Թող զարենակից մերձ ազգականը,
Եղբայրն իր եղբօրը չի՝ սիրել անգամ։

Միթէ պատուիրած չէ՞ անմահ Հզօրը,
Որ պատուել չի՝ որդին իւր ծնող մօրը,
Առելութեան ոգին ծագեց այն օրը,
Կայէնն ու Արելը, երբ ծնաւ Ադամ։

Տե՛ս, Զիւան մեղրի տեղ ծախելով լեղին,
Խարդախը կ՚խաբէ խղճուկ անմեղին,
Նախանձը շատնալով մարդկային ցեղին,
Ափսոս, սէրը պակասում է ամէ տեղ։

62.

ԽԵՂՃ ՄԱՐԴԸ

Խղճալի մարդկանց համար աշխարհը նեղ է յարատեւ,
Ըստորում նրանք չունին օգնող ցաւակից բարեկամ,

Ցեծվումեն, զրկվում են իրանց բոլոր կայանքներից,
Վաղումեն դատարանը՝ դարձեալ չ՝կայ տանող խնամ։

Խեղճերը ցերեկ գիշեր ընչով հագիւ մի բան ճարեն,
Բայց անզգամները միշտ կ՝ապրին առանց ինչ անդրամ,
Պարզ ու ճշմարիտ եղող մարդիկ կարող չեն ապրիլ հեշտ,
Խարեբայ անձինք նրանց չեն տայ շնորհիւ գործի համ։

Վ՝երջապէս ճշմարտութիւն սիրող չ՝կայ ամեն մի տեղ,
Բոլորը կախարդներ են, խելք հմայող՝ Մոգեան երամ
Քեզ նման խեղճ պարզամիտ լինողները, աշխարհ Ձիւան,
Ամեն անգամ խաբվումեն Բելիարին, ինչպէս Ադամ։

63.

ԱՂՔԱՏ ՄԱՐԴԸ

Խեղճութիւնը մարդու ամեն բան կանէ,
Ցածութիւն, մառնութիւն ողջն անել կուտայ,
Ասելով՝ այդպիսի մարդուն արժան է,
Թշնամիք իւր վերայ այպանել կուտայ։

Խեղճ ու ողորմելուն օթեւան չ՝կայ,
Պարզ ազատ խօսելու հրաման չ՝կայ,
Աղքատութեան նման թշուառ բան չ՝կայ,
Դեռահաս շատ մարդու սպանել կուտայ։

Ձիւանի, խեղճ մարդու օրն է տարաժամ,
Դէպի թշուառ մահին կ՝երթայ ինքնակամ,
Խեղճութիւնը արդար մարդոցը անգամ,
Մտքով ամեն բանի վարանել կ՝ուտայ։

64.

ԷՂԱՑ ՉԵՂԱՑ ՄԼԿ ՀԱՇԻՒ Է

Օդը անպիտան, անգործ մարդը,
Եղած չեղած մկ հաշիւ է.
Մշակս անդոյն, անհոտ վարդը,
Եղած չեղած՝ մկ հաշիւ է։

Ի՞նչ պետք թոյլ ղլխաւորը,
Որ միակ ընտանի փորը.
Տգէտ, մոլի կարգաւորը,
Եղած չեղած՝ մկ հաշիւ է։

Լաւ մարդու ոտայն է կացին,
Թէ որ վատ է իւր դրացին.
Հօրը համար անպէտք որդին,
Եղած չեղած՝ մկ հաշիւ է։

Ինքն է իր քսակի գողը,
Տանը վիրայ մաղոզ հողը.
Շուայլ մարդու համար փողը,
Եղած չեղած՝ մկ հաշիւ է,

Ինքբինքին ի՞նչ պէտք է կին,
Եթէ սեռից չունի բաժին.
Կայրի համար արև, լուսին,
Եղած չեղած՝ մկ հաշիւ է։

Անասունին տուր գոմասանք,
Նա ի՞նչ դիտէ այդպէսի կեանք.
Անզգամին պատիւ, յարգանք,
Եղած չեղած՝ մկ հաշիւ է։

Մօտ է այնպէսի կորուստը,
Զարս չափ կուտ է հոգուստը,
Ժլատ անօգուտ հարուստը,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Կենդանի մարդուն է արժան,
Պատիւ, յարգանք, շքանշան,
Մեռած մարդու համար արձան
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Թէլաք, հմուտ գիտնականը,
Հիմքը ամուր կանէ ասանը.
Կիսատ պռատ շինուած բանը,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Աղողջ ապէն աւելի երիտասարդ,
Որ թռչի երթայ սար է սար,
Անոտ մարդուն հարթ ճանապարհ,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Կարանք չունին շնորհք ու շէնք,
Գանգատիին է նոցա օրէնք.
Երիտասարդուն գրահ ու զէնք,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Պարիզ ապրն է ինքնին հնոց,
Միշտ կ'արձակէ կրակ ու բոց.
Փախչող զօրքին բերդ ու ամրոց,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Սկզբէն է հարկաւոր ջանք,
Քանի որ հիւանդն ունի կեանք.
Հոգեվարքին դեղ ու զեղջանք,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Խեղճին ի՞նչ օգուտ իշխանը,
Որ չի՝ հասնի նեղութեանը.
Անտարբեր պաղ ազգականը,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Երբ որ տեղը գայ ճշմարիտ,
Հարկաւոր չէ՝ լենիլ կրկիտ.
Զատկից յետոյ կարմիր հաւկիթ,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Ուրախութեան օրը յատուկ,
Կ'ուրախանան ծեր ու մանուկ.
Հարսանիքից վերջը թմբուկ,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

Ջիւան, բարեսիրտն է յարմար,
Լսել սիրով երգ ու քնար,
Զար ու դաժան մարդոց համար,
Եղած չեղած՝ մէկ հաշիւ է։

65.

ԿԱԽԱՐԴ

Պախարդներուն էր ես հաւատում, ով մարդ,
Խարուեմն, քո գլխին անուեմն բժիժ,
Ապազաղ չեն գիտեր, որ կընկնիս թակարդ,
Իզուր տեղը յետոյ կ՝ քաշես պատիժ։

Սին յուսացողը իսկ բնաջինջ է,
Միտ խարողաց՝ ուղղութեան հետ կռինձ է,
Նորանց գրի զօրութիւնը ոչինչ է,
Եւ չի՝ կարող սրբել արատաւոր կամ բիժ։

Ջիւան, կարծես ստութիւնն էլ մկ ծէս է,
Սատիրոսին մարդ խաբելը հանդէս է,
Կախարդներու ճշտութիւնը այսպէս է,
Ցաւած աչքին կպցնումն ծառի խիժ։

66.

ԳԱՆԳԱՏ

Կեանքիս թռչունը մաղերդ կապեցին,
Դեղեցի՛կ, քեզանից ինչպէս ազատում իմ,
Կապկ աչքերդ իմ սիրտս լափեցին,
Ցոյս չթողնիր որ ցաւերից փարատում իմ։

Այս ի՞նչ սէր էր տուիր դու ինձ, սիրահա՛ր,
Սրտիս մէջը բորբոքում է անդադար,
Առար խելք ու միտքս արիր խելադար,
Արժան տեսար, որ այլոց մէջ նախատում իմ։

Խեղճ Ջիւանը հեռացրիր իր տանից,
Կախարդական գեր եղաւ քո դրպանից,
Թո՛ղ չարաչար տանջում իմ ես քեզանից,
Թէ պատահում կրկին անգամ խրատում իմ։

67.

ԽՐԱՏ

Կեանքդ բարեգործելու աշխատի՛ր, զիտուն,
Ի՞նչ ես թռչունի պէս միշտ մռնում թակարդ,
Հարիւր տարի ապրիս թէ հարիւր յիսուն,
Վերջդ մեռանելն է, ի՞նչ մարի ես, մարդ։

Լոկ մի՛ ենջեր քանի կեանքիդ գարունն է,
Ցիշելի մարդ միշտ մտաւոր արթունն է,
Անմահ յիշատակը բարի անունն է,
Աշխատի՛ր գտնելու, ով երիտասարդ։

Ջիւանն, բաւ է շրջես մատանջ, մոլոր,
Ովկիանոս ծովից աշխարհքն է խոր,
Որչափ հարուստ լինիս, որչափ փառաւոր,
Վերջդ պիտի ճնաս մերկ և առանց զարդ։

68.

ՑՈՐԴՈՐ

Կաղաչե՛մ, սիրելի ազնիւ հայ եղբայր,
Մնանք միշտ իրարու օգնական, ճնանք,
Ո՛չ թէ ուզենք ձգել մէկս մէկու վայր,
Այլև բարձրացուցիչ ապաստան ճնանք։

Մինչ ե՞րբ ատելութեան չար լուծը տանենք,
Արի՛ք, մենք այս չար գրաղմունքը վանենք,
Ատելութեան հոգին մեր միջից հանենք,
Սիրենք իրար հոգւով սիրական ճնանք։

Ջիւանս պատրաստ եմ մինչև մահու սիւն,
Ցպահանջել ոչինչ դաւնութեամբ արդիւն,
Ունենանք հայի սիրտ ու հայի արիւն,
Ազգին ու Կրօնին միշտ պաշտպան ճնանք։

69.

ԷՎԷԼ ԱԽԸՐ

Կատարեալ լինելու համար, գեղեցի՛կ,
Կարդա բարոյական գրքերը յատուկ,
Կարող ես Նրանով լինիլ երջանիկ,
Կենարար Փրկիչը յիշելով ծածուկ։

Կանուխ ե՛լ տեղիցդ, անմե՛ղ հրեշտակ,
Կատարէ՛ քո սուրբ աղօթքդ միայնակ,
Կանգնիլ մի՛ քո ծնողացդ հակառակ,
Կանոնաւոր կերպով շարժիր, ով մանուկ։

Կամքդ տուր Արարչին գիշեր և ցերեկ,
Կեանքիդ նաւը երբէք չի՛ թողուր անղեկ,
Կանչէ՛ Աստուած, դու չես մնար սրտաբեկ,
Կառավարողը քեզ կ՚պահէ փափուկ։

Կանանչազարդ ծառ ես մանկի՛կ նորատունկ,
Կաթնահամ բերանէդ միշտ կ՚բուրէ խունկ,
Կաքաւ ես շարժումով, ձայնովդ կռունկ,
Կեաց միշտ Զիւանիիս համար դու նեցուկ։

70.

ԲՈՒՊԱՑԻ

Կենացս մաս, իմ Հմայեակ, ես ուրիշ ասպար չունիմ,
Աշխարհիս մէջ քեզնէն ի զատ սրտով սիրահար չունիմ,

Ես քո սիրոյդ նետերովը վիրաւորված մնն կուգամ,
Դիր խոցերուս սպեղանի, ես քաշելու ճար չունիմ։

Հաւատարիմ սիրահարիդ ես եմ ընտիր սիրական,
Հայաստանի քաջերի մէջ դուն ես մէկ հատ անմման,
Քաղցր և համեղ պտուղներդ մեղրից անուշ պատուական,
Արուսեակիս քմքին հաճոյ դուն ես, ես շաքար չունիմ։

71.

ՄՈՒԹԷՄԷԶ։

Հեռացիր, ով պատանի, դուն գինեանից հեռացիր,
Հեռացիր ու մի՛ մնար, այն օթեւանից հեռացիր,
Անվայել սուտ ընկերից, վատաբերանից հեռացիր,
Ծիղուիթ ու ցածրահոգի ատենարանից հեռացիր,
Մահաբեր թունով լեցուն շտեմարանից հեռացիր։

Մի՛ լինիր, ով բարեկամ, զզուելի վատթար մի՛ լինիր,
Գինեին և օղին պատանդ ու տար մի՛ լինիր,
Աշխատիր գիտուն եղիր, անպատիւ լիմար մի՛ լինիր,
Միամիտ սոխակի պէս վարդի սիրահար մի՛ լինիր,
Խարերայ ու սատիսոս կեղծ սիրականից հեռացիր։

Զէ՛ ուրախ, և չի՛ լինիլ քեզի նման որբ տխուրը,
Ըստ որում քո սրտի մէջ ընկել է խմիչքի հուրը,
Քանի որ դու սիրուելս առաւել հաղորդի ջուրը,
Թարց ունեցած դրամդ՝ մինչ հոգիդ էլ կուտաս տուրը,
Հեռացիր, ուրացողից վատ գործարանից, հեռացիր։

Միամիտ ես, միամիտ, աւա՜ղ, ի՞նչ անեմ, դու միամիտ,
Խարերայ ուրացողին կ'ճանաչես, լաւ, ճշմարիտ,
Ամենեւին երեւում է քո առաջդ խորունկ հովիտ,
Թողնելով Արարիչը՝ կ'դաւանեն սուտ Անահիտ,
Կատարեալ ընկերութեան ժողովարանից հեռացիր։

Ո՛վ Զիւան, սուտ աշխարհը քեզի ապաստան մի՛ անիլ,
Ադամին խարող օձը հոգւոյդ պահապան մի՛ անիլ,
Անբնականը սովորելով դու քեզ բնական մի՛ անիլ,
Աստուծոյ և բնութեան դէմ հակառակ բան մի՛ անիլ,
Սողոմոյ պէս քաղաքից նեռադաւանից հեռացի՛ր։

72.

ՀԱՑ

Հօտից մի՛ ջոկնուիլ սպիտակ ոչխար,
Գայլն ու գազանի բաժին կ՚լինիս.
Սէր սպիտակից կարծելով արգար,
Երբ դու առաջինն ես՝ յետին կ՚լինիս։

Առաջինն է նախ ճանաչած հովիւդ,
Նորանով է զոյութիւնդ, պատիւդ,
Թէ խառնուիս կ՚կորուի հաշիւդ,
Օտար հօտի մօտը ընչին կ՚լինիս։

Յայտնի սիրով քաշէ թշնամւոյդ դաշոյն,
Զիւան, աշխուժիդ մէջ կեցի՛ր մի և նոյն.
Սպիտակից ի՞նչ կայ ջոկ գեղեցիկ գոյն,
Որ փոխուելով՝ գորշամարմին կ՚լինիս։

73.

ԴԱՍԻԴԱՆ

Հայի տղայ զգուշացի՛ր, խելք ճարէ,
Ամէն անգամ այլոց առակ մի՛ լինի.
Պարկեշտ մարդկանց բնութեանը յարմարէ,
Ափսոս արի քեզ, խայտառակ մի՛ լինի։

Մոլեներուն ընկեր խսպառ մի՛ դառնայ,
Անուշիմ, բթամիտ, յանցառ մի՛ դառնայ,
Դու վատ սկզբունքի պատճառ մի՛ դառնայ,
Ընկերներուդ չար օրինակ մի՛ լենի։

Վախեցի՛ր Աստուծմէ, ով երիտասարդ,
Նրան պաշտել պարտաւոր է ամեն մարդ,
Վախեցի՛ր, քո սրտին չ՚դիպնի գեղարդ,
Տիրոջ կամաց դուն հակառակ մի՛ լենի։

Պատուէ՛ հայր ու մայրդ, դու ապրիս երկար,
Մաքրէ՛ սիրտդ, որ է Աստուծոյ տաճար,
Քեզ պէս ստեղծուածին մի՛ կամենայ չար,
Օրինազանց ընչին էակ մի՛ լենի։

Մարդասպան մի՛ լենի, կ՚սպանուիս անշուշտ,
Դերդաստանդ քաղցած կ՚մնայ անկուշտ,
Ուրիշը կ՚լենի քեզ արիւնարբուշտ,
Դու ոչ մէկին արիւնկոլակ մի՛ լենի։

Տիրոջմէն կ՚դատուի ինչ մարդ որ շնայ,
Առանց այլայլութեան դժոխք կ՚գնայ,
Դոզ լենողը առանց պատժի չի մնայ,
Կ՚խեղդուիս, եկ աւազակ մի՛ լենի։

Մի՛ երդուիր Աստուծոյ անուանը ահեղ,
Սուտ երդում ուտողը չի՛ մնայ անմեղ,
Ստախօսը պատիւ չունի ոչ մի տեղ,
Սուտ վկայող, կեանքի ներհակ մի՛ լենի։

Մի՛ ձգեր աչքերդ դրացւոդ տանը,
Ո՛չ փոքրն, ոչ ապրանքին, ոչ կնկանը,
Ակամայ՝ ընկերիդ մէկ դահեկանը,
Յափշտակելու համարձակ մի՛ լենի։

Մէկ օր լուրը կուգայ դատարաններէն,
Պարտը կ'պահանջուի պարտականներէն,
Մի զատուիր Աստուծոյ պատուիրաններէն,
Դու այս մասին անընդունակ մի՛ լինի։

Մի՛ պղտորիր հոգւոյդ պարզահոս գետը,
Անշուշտ հարուած կուտայ քեզ խղճիդ նետը,
Անցեալը բաղդատէ՛ ներկայի հետը,
Բարին թողած՝ չարին մշակ մի՛ լինի։

Մարդ՝ մարդ ճանաչէ, հարուստ թէ աղքատ,
Մերունու պատիւը պահպանէ հաստատ,
Լեզուիդ վրայ սանձ դիր, որ չ'խօսի վատ,
Սիրտ խոցոտող թուր ու դանակ մի՛ լինի։

Եղբա՛յր, սրի՛ ուսումի տուր զաւակդ,
Որ շուտ տեղը հասնի քո նպատակդ,
Ի զուր մի՛ վաճառեր թանգ ժամանակդ,
Առանց գործի և անվաստակ մի՛ լինի։

Աղբեցող մի՛ լինիր, կեանքիդ վնաս է,
Հասկացի՛ր, որ պատիւդ միշտ պակաս է,
Աշխատի՛ր քեզ մարդկանց լաւ կարգը դասէ,
Վատերուն հետ դու շարունակ մի՛ լինի։

Թղթախաղութիւնից օգուտ չես քաղեր,
Իզուր տանդ վրայ մոխիր մի՛ մաղեր,
Զափով ապրիր, քեզ պարտքի մէջ մի՛ թաղեր,
Փոքատիրոջը հպատակ մի՛ լինի։

Աշխատի՛ր չսառչի ճշտութեան եռը,
Մեղքերով մի՛ ճնշեր սրտիդ անմեռը,
Տեղդ ծանր կեցի՛ր, մի՛ շարժիր բեռը,
Մի լոկ խօսքով դու թեշալակ մի՛ լինի։

Հողից եղար, դարձեալ պիտի լինիս հող,
Վերջդ դատաստան կայ, քաշէ՛ ահ ու դող,
Աշխատի՛ր, քո ազգիդ օգուտ բաներ թող,
Մեռնելէդ յետ անյիշատակ մի՛ լինի։

Զլուսն, կանչէ սուրբ Իշխանաց Իշխանը,
Որ նա է ողջ աշխարհի պահպանը,
Հայ ծնուել ես Հայ մտիր գերեզմանը,
Դու ազգուրաց իբր Վասակ մի՛ լինի։

74.

Ղ. Օ Շ Մ Ա Ց

Հարազատ փեսայիդ հաւատարիմ հարս,
Շուք երեսդ՝ հոգիդ անմեղ ցոյց կուտայ,
Մայրախնամ կոթով մնացի՛ր իմ հարս,
Քաղցր լեզուդ վէրքերիս գեղ ցոյց կուտայ։

Պրակի նման է շիկագոյն հերդ,
Սիրտ կ'խոցէ արենարբու սուսերդ,
Հայելւոյ մէջ արևապէմ պատկերդ,
Նուրբ կոկորդդ ոսկեայ բիւրեղ ցոյց կուտայ։

Զիւանիիս Ծանօթ ազնուազուն ես,
Հոգիդ զարնան փափագ՝ մարմնով աշուն ես,
Բայց ի՞նչ օգուտ, գեղեցիկ ես, սիրուն ես,
Հին հանդերձդ քեզի ազեղ ցոյց կուտայ։

75.

Ս Ի Մ Ա Ց Ի

Հանգնեթաց կեանքիս յարմար ով սիրելիս ինձ միսիթար չես
Հակառակ կերպով ես վարվում, դու ակմբի կառավար չես

Դնա, ինձէն հեռացի՛ր ով անիրաւ, ամբարիշտ, անգութ,
Դիտեմ անշուշտ, որ անբարեսէր ես և ինձի յարմար չես։

Խենեշ կերպարանք բարքդ գրեմ, տամ քեզի դու կարդա,
Կ'իմանաս դու օխալմունքդ, գիտեմ այնքան էլ յիմար չես.
Նախանձոտ վատասիրտ օձի նման միշտ խայթումես այլոց,
Որ ունիս այդպէս արատ քեզ կ'կարծես թէ դու վատթար չես։

Ցերեկը մինչ երեկոյ բամբասելով ման կուգաս մարդկանց,
Գիշերը միամիտ պառկած տեղդ անգամ դու դաղար չես,
Ջիւանի երգիչը ամէն մի կերպով քեզի լաւ փորձեց,
Նկատեց վարք ու բարքդ, լաւ տեսաւ անկեղծ ու արդար չես։

76.

ԴԻՒԱՆԻ

Հարկ է հայցել և պաղատիլ յարմարի մահուան համար,
Վերջն է դժուար, ո՛չ այստեղի դումարի մահուան համար,
Ամէն անգամ մահը մարդու կեանքին հետ հակառակ է,
Մի՛ սնապատրաստ մնալովդ յոժարի մահուան համար։

Մինչ քո հոգիդ մարմնուցդ ջոկնուիլը աշխատի՛ր,
Քո սուրբ մարդուր վարքիցդ մի՛ դաղարի մահուան համար,
Նախ քեզի համար բարի մահ պէտք է խնդրես Աստծուց,
Եւ ապա ցաւիս մոլորի շուարի մահուան համար։

Մեզ Ծանօթ մահը միայն մարմնին հոգիից կ'զատէ,
Կեանք մի՛պահեր անտանելի դժուարին մահուան համար,
Երբ Նախամայրն Եւա խարուեց խորամանկ Բիլիսարին,
Իւր սեռը գրաւ դրեց միշտ վատթարի մահուան համար։

Քո Անմահիդ մահը մի՛ տար ու զօրացիր հայ տղայ,
Կեանք ունիս աշխդ Ջիւան բարերարի մահուան համար։

77.

«ԱՅԳԵՊԱՆ ԻՆՉ ԵՍ ԱՆՈՒՄ, ՇԱՄԲԸ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՉԻ ԼԻՆԻԼ»

Ճարտարապետ, սուաղի վերայ օթեւան չի լինի,
Դայլի ձագը կրթելով՝ ընտանի կենդան չի լինի,
Ապերախտ մարդուն օրը հազար տեսակ պատիւ անես՝
Նա քեզի աշխատակից իրը օգնական չի լինի։

Կայծքարը կարմիր արիւնների մէջը ներկես հազար,
Գեղեցիկ գոյն առնելով գիտցի՛ր կարկեհան չի՛ լինի,
Թութակը սովորելով վարժուելնով միքանի խօսք,
Խօսելով մարդու նման, նա մարդ իսկական չի՛ լինի։

Հիմա էլ հայերու մէջ կան ազգասէր օրիորդներ,
Հազարից մէկը կարծեմ Սանդուխտ ու Շուշան չի՛ լինի,
Աշխարհի բոլոր եղած գրքերը ողջն հաւաքես,
Նազուելով մի գիրք չինես դեռ Աւետարան չի՛ լինի։

Փայլումէ արևի պէս ճեմարանը Մոսկուայի մէջ,
Ընդհանուր հայերի մէջ մէկ հատ Լազարեան չի՛ լինի,
Այս դարի մէջն էլ ունինք հայրենասէր իշխանազունք
Մէկն էլ է ազգը պահող Մուշեղ ու Վահան չի՛ լինի։

Մարդու ծնած երիրը արքայութեան չափ քաղցր է,
Ո՛չ մի տեղ հայրենիքից բարձր ասստիճան չի՛ լինի,
Ով Աիւան, դու երգերուդ թէ խառնես էլ մեղը ու շաքար,
Երիրնի ասածներու նման դուրական չի՛ լինի։

78

ԴԷՐՎԻՇ

Մէկ կիւրակի առաւօտ զայփումը[1] նստած դադար,
Երգելով երգ հայերէն ածումէի իմ քնար,
Ժողովուրդն էլ խոնուած զահփումը նստած գումար,
Լսումէին իմ երգը կարծելով իրանց յարմար,
Ցանկարծ տեսայ դռնիցը մի մարդ ներս մտաւ օտար,
Տեսքիցը ճանաչեցի որ սուտ դէրվիշ[2] էր խաւար։

Նստաւ, քիչ հանգստացաւ, հարցրեցի. ի՞նչ ես դու,
Ասաց ես լաւ դէրվիշ եմ և բժիշկ եմ ահարկու,
Ես նրան սուտ կարծելով՝ խօսքերին չեղայ հլու,
Տեսայ որ խաբերայ էր, աղքատաց արենարբու,
Հարցուցի կարդալ գիտե՞ս, ասաւ. տասն երկու լեզու,
Զորս հինգ կտոր գիրք կապած աղլուղով յանդումը կար։

Դորան փորձելու համար՝ տարանք մենք գիւնետունը,
Հարցրեցինք, խմացանք, Ղալանդար էր անունը,
Երբ գրքերը բաց արինք՝ քանդուեց սրտի սիւնը,
Ձարտար լեզուն մունջ դառաւ, պաղաւ երակարիւնը,
Իսկ հաչելու կողմանէ նրանից լաւ էր շունը,
Նա իշաւ հէրն ու մէրն էր, ունէր ջորու գաղափար։

Թարց միւս լեզուներից իւր լեզուն անդամ չ'իտէր,
Խաս բաները Թազ տուինք, գոհհիկ էր խամ չ'իտէր,
Որը խաւար էր դառել գլխին, քանի ժամ չ'իտէր
Իւր անձը ազատելու, ցոյց տալու պատգամ չ'իտէր,
Մարմնոյն վերայ քանի կլինի անդամ չիտէր,
Ինական կոյր կամ խուլին դեղ ցոյց կուտար օգտակար։

---

1 Սրճատուն։ 2 Մահմետականաց Կուսակրօն։

Ալէքսանդրապոլեցը կարեցինք նորա խէրը,
Ասինք ե՛լ կորի՛ր այսահից, քեզ անիծէ սուրբ Տէրը,
Երբ ձեռ-քիցը խլեցինք իւր հաւաքած նուէրը,
Մոռացաւ իւր կրօնը, մոռացաւ սրտի սէրը,
Նոյն բոպէին կորաւ, էլ չ'երևացաւ ստուերը,
Կարծես անդունդը ձգեց նրան Աստուած բարերար։

Քանի՞ մէկ քանի՞, Հայե՛ր անուններս խանգարենք,
Մեր տները քանդելով ուրիշները զարդարենք,
Քանի՞ մէկ այս սնոտի մարդոց կամքը կատարենք,
Արդեօք վարքով ընթացքով մենք ո՞ր ազգին յարմար ենք,
Երբ կ'լինի այն օրը՝ մէկ գիտութիւն հնարենք,
Խմաստութեամբ շարժուինք, Զիւան, չ'մնանք տխմար։

79.

Պ Ա Ց Տ

Մի առաւօտ ես տանից շուտ դուրս եկայ միայնակ,
Գնումի փողոցը, տեսայ մի լաւ օրինակ.—
Տեսայ մի երիտասարդ, հեծած ձիւն էր սպիտակ,
Ուզումէր մի պայտ իշի՝ հանելով փողի քսակ,
Հարցանելով տղային՝ ասի այդ ի՞նչ նպատակ,
Մի պայտով չի՛ պայտուի չորս ոտնանի աւանակ։

Տղայն դարձաւ դէպի ինձ, ասաւ ով իմ բարեկամ,
Այս պայտը պիտի տանիմ մեր գիւղի տէրտէրին տամ,
Այնտեղ կ'ուզեմ մի աղջիկ, որ անունն է Մարիամ,
Ես նորան շատ եմ սիրում, նա երբէք չունի խնամ,
Մեր տէրտէրը կախարդ է, ասաց, ինչպէս մի խախամ,
Շատ գործեր է կատարում պայտով ամեն մի տեսակ։

Ասի որ պայտը տանիս, ի՞նչ կանէ Տէր հայրիկը.
Ասաց, վերան գծումէ կախարդական ծաղիկը,

Կրակարանի մոտը թաղումի այս պայտիկը,
Որքան տաքանայ պայտը՝ կ'տաքանայ աղջիկը,
Այնուհետև սիրուհիս կ'ուղարկէ իւր մատանիքը,
Այլ չի՛ մնայ նա ինձ հետ սիրով երբեք հակառակ։

Կրկին առաջարկեցի ես տղային գիւղական.
Ասի ճիշտ կհաւատաս որ լինի այդպիսի բան.
Տղայն քիչ մտածելով տուեց այսպէս պատասխան.
Թէ ես սիրոյ ձեռքիցը եղած եմ թափառական,
Ինչ ասեն կ'հաւատամ, գուցէ տան ցաւիս դարման.
Ընկել է սրտիս մէջը, ասաց, մի անշէջ կրակ։

Տղային ափսոսալով տուի այսպէս մի խրատ,
Թէ, եղբայր, դորանք սուտ են, անմիտ բան են, անհաստատ,
Տէրտէրը քեզ խաբել է, դու մի՛ ընծայեր հաւատ,
Նա ինքն էլ չի՛ հասկանում արածը լաւ՝ է թէ վատ,
Արի՛, եղբայր, հեռացիր, այդ վտանգից լեր ազատ,
Քեզ այդ բանին զրկողը է ստութեանց հեղինակ։

Ինձ թողնելով հեռացաւ, գնաց տղայն իւր գեղը,
Մտքովս ասի. շատ ափսո՜ս, խաբուել է խեղճ անմեղը,
Նա կարծումէր՝ թէ տարաւ ունեցած ցաւի դեղը,
Հիմայ դուք լաւ կշռեցէ՛ք այս տէրտէրի ուղեղը,
Երանի՛ ժողովրդին՝ որ սա է հանճարեղը,
Ո՛վ Զիւսան, էլ հայերը ինչո՞ կ'երթան շկոթակ։

80.

ՍԵԼԻՍ

Մի՛ լինիր ով բնութի՛ւն կեանքիս դաւաճան մի՛ լինիր,
Մի՛ լինիր, ինքնահաւան մարդուն սիրական մի՛ լինիր,
Աշխատի՛ր առաքինի նիւթեր ժողովէ անօթդ,
Մնոտի, անօգտաւէտ բառի օթեւան մի՛ լինիր։

Կրօնդ, Հայութիւնդ միշտ պահպանէ կեանքիդ նման,
Խարերայ սուտ կղերի խօսքով պապական մի՛ լինիր,
Մխիթար քո պատիւդ աւելնալու համար ազէտ,
Փառամոլ աղգուրացող Վասակ, Մեհրուժան մի՛ լինիր։

Քո տունը կամ՝ քո դրացու սենեակը անպահապան
Թողնելով՝ օտարներու տանը դարապան մի՛ լինիր,
Բանական ու երջանիկ կեանքդ անուսումի թողնելով
Սաղմոսի ասուելանը նման ու անբան մի՛ լինիր։

Ամենայն մարդու իրայ վարքուի՛ր գաղտփարով հեռը,
Ճշմարիտ ընկերութեան կեանքիցը բաժան մի՛ լինիր,
Արտաքին գէմքդ նման ներքին խորհուրդդ էլ սուրբ արա,
Գարշելի ոկորներով լեցուն գերեզման մի՛ լինիր։

Աշխատի՛ր ծուլութիւնը քեզանից հեռու պահել միշտ,
Աղքատի անտանելի վիճակին արժան մի՛ լինիր,
Ով Ջիւան անհիմն անհաստատ սէրիցը հեռու փախի՛ր,
Վասվելով Ալայիսի Արթուրի նման մի՛ լինիր։

81.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Մարդուս մահկանացու մարմինն է միայն,
Իսկ հոգին անմահ է բնական ոգի է,
Հոգին կենդանի է, մարմինն է ունայն,
Նա չի՛ մոնի երբէք գերեզման, ոգի է։

Վերստին երբ որ գայ Փրկիչ Իշխանը,
Կ՚բանայ ընդհանուր խոր գերեզմանը,
Յայնժամ կ՚լրանայ Տիրոջ պայմանը,
Հոգին կ՚երթայ մինչև դատաստան, ոգի է։

Ջիւան, ի՞նչն է մարդուս բարի նուէրը.
Երեքն են, հաւատը, յոյսը և սէրը,
Երանի արդարոց որ ասաւ Տէրը,
Հոգիքը կենդանի յաւիտեան ողջ է։

82.

Ղ Է Լ Է Ն Տ Է Ր Ի

Մինչ Եղբ, գովելի՛, իմ պաղատանս չ'լսես դու,
Տարով քեզի գովեստ գոփասանս չ'լսես դու,
Միթէ սիրելի՛, կանոնը այդպէ՞ս կ'պա հանջէ,
Քեզ խօսելով յոգնի բերանս չ'լսես դու։

Ես իմ հոգւովս քեզ համար պատրաստ կամ յարաժամ,
Ինչո՞ւ ամենևին սիրականս չ'լսես դու,
Ամեն առաւօտ պատուհանից երգելու ձայնս,
Միթէ կարելի՞ է հարևանս չ'լսես դու։

Զէ՛, չէ՛, սիրուհի՛, մի՛ անիլ այդպէս, բաւական է,
Արժան չէ՛ քեզ համար սիրարանս չ'լսես դու,
Այնպէս կ'թուի ինձ մահը մինչև չ'հասած գեռ՝
Մինչև չ'տեսանես գերեզմանս, չ'լսես դու։

Ի՞նչպէս բնութեան, ոգւոյի խղճի տէր ես եղած,
Զարմանք չէ՞ խօսած աւետարանս չ'լսես դու,
Վերջն է, Ջիւանս դադարաւ, էլ չի՛ խօսի երբէք,
Ասուած չի՛ ներեր, իմ ազաչանս չ'լսես դու։

83.

Զ Գ Ո Ի Շ Ո Ի Թ Ի Ի Ն

Մանդ, քեզի կ'ասեն վատ ճանաչել են,
Ցարամամ բաղդը ասուիճան չի՛ բերեր,

Աքաղաղը կ'դադարի կանչելէն,
Միշտ քեզ համար լուսոյ նշան չի՛ բերեր։

Մանկութեան վաստակը ջուրի նման է,
Եթէ առաջն առար՝ քեզ բաւական է,
Քանի գործդ յաջողակ է պահպանէ,
Ամէն անգամ դեռը գերան չի՛ բերեր։

Քանի յաջողակ կ'դառնայ շրջանդ,
Եղած ծախսը շափաւորէ քո տանդ,
Դիտցի՛ր, առանց գործի քո սիրականդ
Քեզ իբրև մարդ երբէք բերան չի՛ բերեր։

Ջիւան, լաւ ճանաչէ դու քո հաշիւը,
Առանց գործի ցածր է մարդու պատիւը,
Միշտ յաջող չի՛ դառնայ բաղդիդ անիւը,
Ամէն տարի արտը օրան չի՛ բերեր։

84.

Ի ՆԴԻՐ ԸՆԿԵՐԻՆ

Մ՚արդ քեզի կաղաչեմ, ըլ՚ իմ խօսքերս,
Դու մոլութեան խրախճանից հեռացի՛ր,
Մի՛ կարծեր անօգուտ, զո՛ւր իմ խօսքերս,
Մարդակորոյս օթևանից հեռացի՛ր։

Մէկ մարդու միշտ բաւ է մէկ ամուսինը,
Այլոց մի՛ տար գերդաստանիդ բաժինը,
Դու մի՛ սիրեր շողոքորթիչ տիկինը,
Դառնասիրտ, մեղրաբերանից հեռացի՛ր։

Եղբա՛յր, թէ հասկանաս՝ այսչափն բաւ է,
Աւելի խօսիլը միշտ գլխու ցաւ է,
Արտաքուստ սոխակ է, ներքուստ ագռաւ է,
Դու երկրիմի սիրականից հեռացի՛ր։

Զիւանիին դու մի կարծեր հակառակ,
Ասածներս մեռոդ պահէ յիշատակ,
Ափսոս ես, կ'մահանաս սեժամանակ,
Արի դու քո գերեզմանից հեռացիր։

85.

ԴԻՏՄՈՒՆՔ

Մարդ ինչ առարկայից որ քաշէ վնաս,
Չի հեռանայ, կրկին կ'սիրէ նրան,
Հաստակաւոր լինի թէկուզ դեռահաս,
Պահալուի այս բանի մէջ մշտական։

Մարդ որքան ունենայ ուսում, հրահանգ,
Չէ՝ կարող ունենալ խաղաղ, բարի կեանք,
Դիտէ որ ինչ բանից պիտի դայ փորձանք,
Դիտմամբ այն վնասին կ'լինի սրժան։

Զիւանն, բախտի համար կ'տեսնի երազ,
Բայց՝ չ'սիրած բանը կ'գտնի վրազ,
Մարդը կ'սխալուի միշտ և հանապազ,
Թէ ոգէտ է եղել, թէ մեծ դիտնական։

86.

ՎԱՐԴ

Մինչև երբ չարչարես անբարդ սոխակին,
Ովդու ապերախտ վարդ, անեծամ ծաղիկ,
Մինչև երբ ինձ, ասա, այդ վառ կրակին
Մէջը պիտի այրես որպես թիթեռնիկ։

Մինչև երբ ինձ, ասա, խղճալին էրուի,
Չ՝հասկանայ, ունայն սիրով դեգերուի,
Ամեն անգամ սիալմունքդ չի՛ ներուի,
Լաւ է զգուշանաս, սիրուն վարդենիկ։

Վարդուհի՛, վարդուհի՛, անուշ սիրական,
Մի՛ մաշեր խղճալու նոր կեանքը Ջիւան,
Տան և մէկ ամոյ մէջ դոնէ մի վայրկեան,
Սոխակի մօտ բացուիր, արա երջանիկ։

87.

ՔԵՕՌՕՂԼԻ

Միթէ լեռ ճանաչեր, քաջդ դիւցազուն
Հայրենեացս հաւատարիմ մշակն եմ,
Քո ձեռ քիցդ փախած՝ եղած երերուն,
Ասուծոյ չմարած վառած կրակն եմ։

Բաց աչքերդ, եղի՛ր պատկերիս հայող,
Էլ մէկ ժամանակ քեզի ծառայող,
Հայրենեացս՝ արիւնս չխնայող
Այն մեծն Վարդանայ իսկ յիշատակն եմ։

Մոռացել ես ինձի դու բոլորովին,
Իմ ցեղս քեզանից չէ՛ իսկ առանձին,
Ես եմ ընտիր Արսէն իշխանի որդին,
Թէ կամիս սպանիր, ես Հմայեակն եմ։

88.

ԷՎԷԼ ԱԽՐ

Նոր բացուած ծաղկի պէս բացուեր ես սիրուն,
Նայուածքդ մրայոն կուսին է նման,

Նկատելով քեզ՝ կանուանեմ գիտուն,
Նախատես աչքերդ ունելով նշան։

Նախանձում է արևն անգամ քեզ տիկին,
Նա չունելով քո պէս ազնիւ ամուսին,
Նարդոսը ծծերիդ տրուելով բաժին,
Նունուֆարը բացեց դատ և դատաստան,

Նոհապետէն Հայկայ ստացար պարէն,
Նախնեացդ թշնամու սրտին դառար զէն,
Նահանգը մարդկութեան սիրոյդ փոխարէն,
Նոր երգիչ Զիւանը տեսաւ քեզ արժան։

89.

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԴ

Ինչէ՛ դառնուկ, սիրուն զաւակ,
Ինչէ՛ օրօրանին մէջը,
Ինչէ՛, մի՛ լար իմ ազաւնեակ,
Սիրուն օթևանին մէջը։

Քնիր, որ մեծանաս հոգի՛ս,
Հայկական հոգւով նորոգուիս,
Վարժապետիդ աչքն չոգիս,
Հայ ուսումնարանին մէջը։

Քեզ զօրացնէ բարին Աստուած,
Միտք ունենաս լայնատարած,
Լինիս միշտ խաւարահալած,
Լուսաւորող բանին մէջը։

Օրօր ասեմ, սիրուն օրօր,
Զօրանաս որպէս միամօր,
Մնուցանէ Անմահն հզօր,
Քեզ իր պատուիրանին մէջը։

Երբ մեծանաս՝ սիրուն մանկիկ,
Սորվէ՛ հայոց լեզուն քաղցրիկ,
Հարուստ, քնքուշ, ճոխ, գեղեցիկ,
Նայի՛ր բառարանին մէջը։

Ցեղոյ՝ սորվէ՛ լեզու օտար,
Կազմէ նրանից գաղափար,
Դիտուն եղի՛ր ազգիդ համար,
Խօսէ՛ Հայաստանին մէջը։

Գարնան ծաղիկ նարդոս, շուշան,
Անթառամ վարդ ես հոգեհան,
Հոտով պալասանի նման,
Ծաղկի՛ր բուրաստանին մէջը։

Զօրացի՛ր, հոգւոյս իմ հատոր
Եղիր հասուն կարմիր խնձոր,
Լեր անդամ ազգին հարկաւոր,
Նստի՛ր բազմականին մէջը։

Պատուէ՛ ծնողքդ որդեակ,
Եղիր խոհեմ ընտիր զաւակ,
Լեր հօրդ բարի յիշատակ,
Իրա գերդաստանին մէջը։

Մի՛ լինիր թոյլ երբայեցի,
Նուա կ՚կոտրիս ինչպէս խեցի,
Սիրէ՛ հայոց եկեղեցի,
Կնաց ժողովարանին մէջը։

Պարզ եղի՛ր, մի՛ լինիր խարդախ,
Միտքդ պահէ՛ հանդիստ խաղաղ,
Խօսի՛ր ճշմարտութիւնն անվախ,
Ժողովքին ատեանին մէջը։

Երբ լենիս երեսուն ամաց,
Լեր՝ հեռատես, շրջահայեաց.
Դարձ՝ մի աղջիկ բանիմաց,
Հասակով՝ քսանին մէջը։

Կապուէ՝ հետը սիրով նրան,
Կանչելով ցերը օգնական,
Կացի՛ր հետը մինչ ցվաղձան
Խաղաղ, սուրբ պայմանին մէջը։

Ի՛մ Դարեգին, մանուկ տղայ
Խօսքերս ականջիդ օղ արա,
Մեծցիր այս խրատը կարդայ
Հօրդ երգարանին մէջը։

Աշխարհ Զիւանին եմ յատուկ,
Բաւ է, վերջ տամ երգոյս փափուկ,
Օրօր ասեմ, քնի՛ր մանուկ,
Հանգիստ ննջարանին մէջը։

90.

ԺԱՄԱՆԱԿ

Նորոգեցիր մեր հին կեանքը վերստին,
Եկար, վերայ հասար ազնի՛ւ ժամանակ,
Աշխարհը մեզ չէր յիշեր բոլորովին,
Դու բերիր մեր ազգին պատիւ ժամանակ։

Դուն ես յոյսը խղճուկ տառապեալ հային,
Հարթէ՝ ճանապարհը մեր ապագային,
Մեր գործերը հասկացու Եւրոպային,
Ինքդ տե՛ս մեզ համար հաշիւ, ժամանակ։

Բերեր դու մեր ազգին Թանկագին յոյս, սէր,
Տարածեցիր ամեն մի տեղ դու նուէր,
Դեռ՝ որ մի քիչ ուշ հասար հզօր Տէր,
Կապասէինք քեզի վաղիւ ժամանակ։

Քեզանից մեր ազգը շատ բաւական է,
Քո տուած պտուղդ միշտ գովական է,
Հայերուս էլ Թեւերուդ տակ պահպանէ,
Օգտուէա, սրատես, ապծիւ ժամանակ։

91.

ԱՌ ՆԱՋԵԼԻՆ

Նազելի՛, Թագուհին չէ՛ քեզ համեմատ,
Ծոցը հոտով ծաղիկ չունի քեզ նման,
Սև սև աչեր, կամար ունքեր, լայն ճակատ,
Ամենայն գեղեցիկ չունի քեզ նման։

Դրախտի ծնունդ ես գեղանի՛ շուշան
Ծոցումդ պահուած կայ հոտով պալասան
Թէև Սուլթանի մօտ սիրուհիներ շատ կան
Նորանց մէջ մի հատիկ չունի քեզ նման։

Դու Զիւանու ասածիցն էլ առաւել,
Ոչքան գովասանք տան՝ է քեզի վայել,
Թէպէտ՝ Լրաստանի անունն է ելել,
Իսկապէս սիրունիկ, չունի քեզ նման։

92.

ՂԱՐԻՊ ԿԱՐՆԵՑԻՈՑ ԵՐԳԸ

Ո՞վ ունիմ, որ կամ ո՞վ ցաւի ինձ համար,
Թեղմ՝ ու մենակ օտար աշխարհ ընկած եմ,

Հոգսերս առանց թիւ, ցաւերս անհամար,
Չ'գիտեմ թէ որի՞ մասին մտածեմ։

Խորին մտածմունքով ես ինձ կ'մաշեմ,
Տապարն առած կեանքիս ծառը կ'տաշեմ,
Զեռքովս էրել եմ, հոգւովս քաշեմ,
Մարդ մեղք չունի, ես իմ խելքով զոհած եմ։

Խղճալի զարիպն եմ, Կարին քաղաքէն,
Վախիմ թէ զուրկ մնամ ես իմ փափագէն
Թիթեռն ինչպէս չի հեռանայ ճրագէն,
Ես էլ այնպէս մէկի սիրուն յարած եմ։

93.

ՑԱՆԴԻՄԱՆԱՆՔ

Ո՛վ զոհող մարդ, բաւ չէ՞ այսքան անխոհեմ յիմար մնաս,
Ցաւ չէ՞ քեզ, լայն աշխարհը միշտ ապքաս ու անճար մնաս,
Մինթէ Աստուած քեզ կ'ուզէ՞ որ վատ դրութեան մէջ լինիս,
Ինչու այդպէս երեսանկեալ, սամնամատեար մնաս։

Աշխատանքդ թէ մէկ է, ծախքդ նրան պէս երկուս է,
Գործերդ քեզ չի՛ երևայ, արածդ խելքից դուս է,
Տես՝, քո այդ շատ այլութեանդ տրտմողը իսկ Յիսուս է,
Դուն կ'ուզես արդէն նրանով աշխարհը արդար մնաս։

Բաւական է մոլութիւնը, ով տգէտ, քեզի տիրէ,
Աշխատի՛ր վատ գործերից փախիր քանի անձդ ժիր է,
Ինքն Աստուած բարի է, գիտցի՛ր, բարութիւն կ'սիրէ,
Զղջա ով մարդ սխալմունքդ, քանի՞ մէկ դու չար մնաս։

Եկ՝ Զիւանուս ասածը զոնեա խրատ ընդունէ քեզ,
Դուն հայի գլխաթ ունիս, ամօթ չէ՞ որ մնաս դու եզ,
Հասկացի՛ր մարդկութիւնը, եղի՛ր համեստ և բարի հեզ,
Աշխարհը լոյս, աչքերդ կապ, ինչու միշտ խաւար մնաս։

94.

ՂԷՋԷԼ ԴԻՒԱՆԻ

Ով գեղեցիկ անմման, ազնիւ, հարազատ բարեկամ,
Շատալի՛ր, հասի՛ր, նեղութի՛ւնս փարատի՛ր ժամէ ժամ,
Ե՛կ, խօսի՛ր, լեմ գոնէ քաղցր սիրալիր խօսքերդ,
Այդպիսի վարուելովդ ինձի կանես հաստատ խնամ։

Թանկագին տեսութիւնդ զգալն է միշտ ինձ համար,
Կարծումեմ դու վարդ լինիս կարմիր, հոտաւէտ, անթառամ,
Հասկացի՛ր առանց քեզի չունիմ մխիթարանք սիրուն,
Ես քո սիրոյդ ծովակը սրտով եմ ընկեր ինքնակամ։

Քեզ նման ազնիւ, հարազատ բարեկամը խսկապէս,
Կեանք կուտայ նորոգելով կեանքը Զիւանուս ամէ ամ։

95.

ԻՄ ԿԵԱՆՔԸ

Ունիմ, փառք Աստուծոյ, մտանաւոր ապրուստ,
Ես իմ վիճակիցս անբաւական չեմ,
Կհագնիմ միակերպ հասարակ հագուստ,
Աստ՛ուծանս ցածր է, ես խօսք իշխան չեմ։

Զափաւորութիւնը կ՚տեսնեմ արժան,
Այն մարդոցը՝ որոնք են ինձի նման,
Թէև վարձով է իմս, չէ սեպհական,
Բայց ես նորէն գոհ եմ, անօթեւան չեմ։

Դեռ ևս շատ բանի մէջ միամիտ եմ,
Ունիմ կարօտութիւն ուսման կ՚գիտեմ,
Երգիչ եմ հայերէն, Տաճկերէն գիտեմ,
Այս է գիտութիւնս, ուսումնական չեմ։

Զիւանս հասկացայ բանի հիմը նոր,
Աւաղ ժամանակս անցկացաւ բոլոր,
Ուսում չ'գիտնալուս ես չեմ յանցաւոր,
Հայրս է պարտական, ես պարտական չեմ։

96.

ՉՈՒՐ ՉԱՆՔ

Որ նաւը ծովը ընկղմի,
Իշնուկ նաւավարն ի՞նչ անէ,
Կայրը միշտ վազումէ տղմի,
Նրան լոյս զամբարն ի՞նչ անէ։

Խլին թէ լաւ ասես թէ վատ,
Կ'կարծէ իրան համեմատ,
Սևին սապոն խևին խրատ,
Ծուին գաղափարն ի՞նչ անէ։

Թանը լաւ է միշտ սովորին,
Քանց բաժակը թագաւորին,
Նքից վախեցող զինուորին,
Հրացան, սապարն ի՞նչ անէ։

Ինչ տեղից չի գնար լոյնը,
Բան չ'հասկացող ունայնը,
Երբ մի մարդ չի լսեր ձայնը,
Խեղճ քնապահարն ի՞նչ անէ։

Ջուրէ ջանքը, Աշրդ Զիւան,
Բոյսը այնպէս է բնական,
Փայտին-ոստոստ և անպիտան՝
Հիսնի սուր տապարն ի՞նչ անէ։

97.

Մ Ա Դ Թ Ա Ն Ք

Ո՜վ Տէր Աստուած, բաց մեր հոգւոյ աչքերը, արթուն մնանք
Լէ՛ր խնայող մեր հասակին, բաւական է քուն մնանք,
Երկնաւոր Հայր, պարգևէ՛ առատ ողորմութիւն մեզի,
Զարգացո՛ւր մեր մտքերը, սուրբ հոգւով իմաստուն մնանք։

Մարմնեղէն լուսից կարօտ մնալը ցաւ չէ մեզ համար,
Քանի որ մեծ յոյս ունինք քեզ վերայ անմահ Բարերար,
Հոգեպէս ուրախացո՛ւ, մարմնով բնական եմք խաւար,
Տո՛ւր մեզի մտքի կարողութիւն գոնէ՝ հասուն մնանք։

Հոգի ես Տէր, թող մեր հոգւոյ աչքերը տեսնին քեզի,
Մշտաբուղխ առատ գիտութեան աղբիւրէն մաս տուր մեզի,
Հասցրու մեզ, ո՛վ Տէր իմ, իմաստութեան ասպարէզի,
Հասկանանք շարն ու բարին ուշիմ և զգայուն մնանք։

98.

Ե Ր Ա Ն Դ

Ո՛վ մարդ, իմաստութեան եռանդ ունեցիր,
Այս խրատով քեզի վնաս չեմ ասել,
Աշխատի՛ր շնորհք ու տաղանդ ունեցի՛ր,
Մոլութեանը ես գործի մաս չեմ ասել։

Պատարեալ վարք, հանդարտ անուն ունեցող,
Ուղեղ կրօն, ազգի արիւն ունեցող,
Բախտ ու շնորհք, գեղեցկութիւն ունեցող
Մարդուն՝ թաղաւորից պակաս չեմ ասել։

Ինչ մարդ չունի նոր սիրտ և նոր գաղափար,
Իսկ նա է սնոտի յամառուած սխմար.
Ինչ հովիւ հոգ չունի իւր հօտի համար,
Ես նորան մէկ սուտ Աթենաս չեմ ասել։

Ջիւան, գիտցածիդ չափ խօսէ յատուկը,
Պարզաբանէ սրտիդ եղած ծածուկը,
Ինչ ուսուցիչ լաւ չի կրթեր մանուկը,
Տուած դասին ճշմարիտ դաս չեմ ասել։

99.

ԱՍՏՈՒԱԾԱՎԱԽ ՄԱՐԴԸ

Ով Աստծուց վախենում է, վնաս չի՛ տալ իւր ընկերին,
Երբ տեսնում է, որ նման է նա իւր ունեցած պատկերին,
Աստուածավախ մարդը յատուկ երբ ուզում է գնալ հանդէս
Ինչպէս կամենում է իրան, և ընկերին կամի այնպէս,
Անձիդ պէս սիրէ ընկերդ, որպէս ասում է Յովհաննէս,
Առաքինի մարդու համար սա է կրօն և սա է ծէս,
Նա գիտէ՝ որ սէրն է ամէն առարկայից կարգը վերին։

Մարդուս առաջին ընկերը՝ է իւր ցեղը, ազգականը,
Որ խօսում է իրայ լեզուն, է բնութեամբ իւր նմանը,
Եկրորդ՝ պէտքէ ընկեր ասել ողջ ընդհանուր մարդկութեանը,
Որովհետև մի հօրից է յառաջ եկել բանականը,
Բայց սէրը ինքն է Արարիչ, կարգի գնող ամէն բանը,
Աստուծոյ կամաց հաճելն է ճիշդ ամենապատուականը,
Աւաղ, չի՛ շեղուիլ ծուռը, կատարեալ չի՛ լինիլ թերին։

Ով երկիւղ չունի Արարչից, և նա չունի խիղճ ու խնամ,
Այնպիսին է Աստուածային հօտի մէջը գայլ յարաժամ,
Ես չ՚կարծեմ, թէ այնպիսի մարդն է պետութեան բարեկամ,
Քանի ողջ է, նա վնաս է մարդկային ցեղին ամէ ամ։

Այնպէսներուն կարդա քարոզ, օրը կուգես հաղար անգամ,
Աւաղ, որ այդպէսներուն էլ նախահայր կոչվումէ Ադամ,
Անխիղճ ու անկրօն մարդն է իսկ Սատայէլի գերին։

Բայց դիտեցէր, իմ սիրելի, բարեպաշտ մարդիկը զատ են,
Իսկ դորանք են, որ անխիղճ ու անողորմ մարդոցը կատեն,
Այդպէս մարդիկ հաղուագիւտ են, հրեշտակաց համեմատ են,
Ամեն մեղքից, մեղութիւնից բացակայ են ու աղատ են,
Դրանց այս աշխարհին տուած ամեն օգուտները շատ են,
Աստուածասէր հարուստները աղքատաց այնպէս նկատեն,
Ինչպէս մի մայր պաշտպանումէ նորա մանուկ կաթնակերին։

Խիղճը արդար մարդոյ ծառը է իսկ գալար, ածիւնաճիւղ,
Նորա ծառի տուած պտուղներն են միշտ կենդանի իւղ,
Ոտերը միշտ կանաչ ու թարմ հասցնում են պտղատու շիւղ,
Այսպէս մարդու կեանքն է յատուկ անթառամ փունջ ծաղկաց ընձիւղ,
Զիւան թէ դու հանգիստ կուգես մեն արի գտիր մի լաւ գիւղ,
Վերջապէս ինչ մարդոյ մէջը չլինի Աստուծոյ երկիւղ,
Այնպէսն է ցերեկից հեռու, շատ մռայլ մշտապիշերին։

100.

Շ Ի Ք Ի

Ով վարդ արևելեան, բոյս կենդանութեան,
Թրախոյս հայկական ցոյց տուր քո տերև,
Կոսպասէ քո գարնան ծառայ և իշխան,
Քեզնից ողջ Հայաստան խնդրումէ պարգև։

Սոխակ սիրաքանդ է երգիչ տանդ,
Խնդրումէ արժանդ լոյս բուրաստանդ,
Կանչէ այգեպանդ, ուղղէ շրջանդ,
Բաց քո պատուհանդ, թող ծաղէ արև։

Հերիք մեռաս տխմար, մարդկանց անյարմար,
Եղիր շքեղ գոհար, քանի կաս դալար,
Ճարէ նոր գալափար, մի՛ մեռար խաւար,
Աչքերդ ապա զամբար, չմնայ կեղև։

Սոխակին հաւանող, միշտ ծափ հարկանող,
Քեզի կոյս պահպանող և քաջ անուանող,
Ագռաւին ատանող, մեռը չտանող,
Լեր գարուս նմմանող, գոյր նորաձև։

Զիւանուս խրատես և համեմատես,
Որ անուն հաստատես, վերքս փարատես,
Կեանքիս հարազատ ես, բոյս անարատ ես։
Նորատունկ արմատ ես, քեզ պէտք է անձրև։

101.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Որ մի մարդ բնական լինում է տխուր,
Աշխարհք բժիշկ դառնայ՝ չի՛ երթայ ցաւը,
Խորասոյզ կ'լինի գեռ չտեսած ջուր,
Վասն զի խղճալոյն կոտրած է նաւը։

Ի ծնէ տխուրը, ինչպէս որբ տղայ,
Ուրախութիւն չունի, սուգ է յարակայ,
Կ'ուզես օրը տասն և ութը ջուր լուա,
Սպիտակ չի՛ լինի բնական սեաւը։

Զիւան, նա կ'մնայ միշտ սպասելով,
Իրան տխուրների շարքը դասելով,
Գիտի շունչը հատնի միշտ ձիւն տասելով,
Գարնանից անտեղեակ անմեղ ագռաւը։

102.

Ա Ղ Օ Թ Ք

Ո՜վ ամենակարող Արարիչ Աստուած,
Խնդրում եմ, ինձ մտքի կարողութիւն տուր,
Աղերսում եմ, խնդրում միշտ բազկատարած,
Տուր ինձ հոգւոյ սնունդ, կենաց կերակուր։

Ո՜վ Արքայից Արքայ, անվերջ նախագահ,
Տուր ինձ կարողութիւն չմնամ անշահ,
Բացի քեզնից ես ում դիմեմ, ո՜վ անմահ,
Որ լինի առանց մեղ ամենամաքուր։

Չլսանն եմ, փափագող միշտ ամբիծ հոգուդ,
Միտքս լուսոյ կարօտ, շատ բան ինձի մութ,
Ուրախացո սիրտս, ով առատագութ,
Մի թողնիր թշուառիս միշտ մնալ տխուր։

103.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Ո՜վ դու զբաղմունքի, ցաւի թագաւոր,
Հոգսը տրտմութիւնը տուիր ինձի բաժ,
Շրջիմ միշտ երերուն, մտատանջ, մոլոր,
Չես դթալ ինձ վերայ, սիրտդ է ապառաժ։

Կ՚թափես խեղճերու արիւնը անվախ,
Թօսքերդ մարդասպան, բնութիւնդ ձախ,
Մթնապոյն ամպի պէս միշտ յօնքերդ կախ,
Պատկերդ թանձրամած, աչքերդ է խաժ։

Ջիւանն եմ, առ այժմ դպիրը սրտիս,
Կուտամ, չես ընդուներ խնդիրը սրտիս,
Անդադար կ'խազայ երկիրը սրտիս,
Այդ քո որոտմունքից, չի՛ մնար անժամ։

104.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Ո՛վ անզգայ, անխիղճ, կեղտոտ, խմաստակ,
Մինչ ե՞ր վիրաւորես անմեղ սրտերը,
Ո՛վ Նեռի կարասկա՛ս, հոգւոյ սուգակ,
Ինչո՞ւ կ'պղտորես շքեղ սրտերը։

Հողմերից հալածուած ամպերի նման,
Թափառիս անդադար միշտ ատանդական։
Դարձեալ քեզի դու կնուանես գիանական,
Միթէ կ'համոզուի՞ն ուժեղ սրտերը։

Ջիւան, թափիր աչքիդ մարգարիտները,
Աստուած կուզէ հոգւով ճշմարիտները,
Կ'պահէ անվնաս միամիտները,
Չի՛ թողներ աներժիշկ, անգեղ սրտերը։

105.

Ա Զ Գ Ո Ւ Ր Ա Ց Ը

Ո՛վոր իր ազգն ուրանայ,
Երկու աչքով կուրանայ,
Յեանեալ ապքասի նման,
Դանէ 'իգուս մուրանայ։

Կշռին դիպչի գեղարդը,
Սրտիցը թափի լեարդը,
Դժոխքի բռնցկելիք,
Լինի ազգուրաց մարդը։

Կեղծ ու պատիր հնչողին,
Կատուի պէս մռնչողին,
Աստուած աշխարհից ջնջէ,
Հայ անունը ջնջողին։

Հայը որք ժողովուրդ է,
Ասարաց մէջ խառնուրդ է,
Ազգուրաց՝ Աստուածուրաց,
Երկուսը մէկ խորհուրդ է։

Երբ որ հայը գումարուի,
Հային չի՛ հաւասարուի,
Հայերէն չ՚գիտցողը,
Կիսատ հայ կ՚համարուի։

Ազգուրացը անմիտ է
Իւր ազգին ծուռ կ՚գիտէ,
Բթամիտ շահասէրը,
Ազգութիւնը ի՞նչ գիտէ։

Որոնէ՛ Հայաստանը,
Հայրենիքիդ նշանը,
Խնչպէս հայ ծնար մօրից,
Հայ մտի՛ր գերեզմանը։

Ո՛վ դու հայ մարդ զօրացիր,
Լուսնի նման նորացիր,
Ո՛չ այլազգին անարգէ,
Ո՛չ քո ազգդ ուրացիր։

Ինչ իշխան անձիդ տիրէ,
Կեանքդ նրան նուիրէ,
Քրիստոսից աւանդուած
Հայի կրօնն էլ պիրէ։

Աստուած տուեց նամակը,
Ամենին իր արժանը,
Ազգուրացը Վասակն է,
Ազգասէրը Վարդանը։

Թէ Կիլիշուի Վասակը,
Բայց վատ է նպատակը,
Պետի խասուի միշտ բարի,
Վարդանայ յիշատակը։

Պատմութիւնը բարձէ,
Մէկ ժամ նրան պարզէ,
Ահա երկու ճանապարհ,
Որին կուզես հետևէ։

106.

ԴԱՍԻԹԱՆ

Ով մարդ, թէ որ կուզես յառաջ ընթանալ,
Ճշմարտութեան միջը միշտ կեցի՛ր հաստատ,
Իսկ թէ կուզես բարի անուն ստանալ,
Դիտուններու մտքին լեր դու համեմատ։

Քո ազգիդ միջ բարի անուն հաստատէ,
Քո տեսար եղբարդդ վիշտը փարատէ,
Հայրենեացդ օգտին համար աշխատէ,
Միշտ նրանց օգնութեան կեցիր հարատաւ։

Մարդիդ աչքերը բաց արթուն ունեցիր,
Աշխատիր սեփական քեզ տուն ունեցիր,
Ուղիղ կրօն, աղքի արիւն ունեցիր,
Քո սուրբ եկեղեցւոյն ընծայէ հաւատ։

Օրինակ ունեցիր պատուականները,
Ընդունէ իշխանաց հրամանները,
Մի՛ տար ընդհակառակ պատասխանները,
Որ չանես լաւ անուններդ աշխարհին վատ։

Մարդութեան պատիւը, հաշիւը ծանիր,
Աշխատիր կոտրուած սրտերը շինիր,
Սրտով գոռոզ, բարձրագլուխ մի՛ լինիր,
Կարդա՛ սուրբ գրքերից, ան՝ բարի խրատ։

Մի՛ լսեր խրատը վատ անպատուին,
Մի՛ կատարեր կամքը մեղքով յամառին,
Անտերև, անպտուղ, նման շոր ծառին
Մի՛ լինիր կրակը ձգուելու արմատ։

Խոնարհիր առաջնորդ մարդոյ պատգամին,
Սիրէ օտարը և քո բարեկամին,
Երբէք մի՛ ուրանար Հայկին, Արամին,
Պահէ՛ նրանց փէ՛հ անուններն անարատ։

Աշխատասէր մարդուն եղիր միշտ հլու,
Մի՛ լինիր չորացած անպտուղ ածու,
Սիրէ՛ աշխատութիւն, ծոյլ մի՛ մնար դու,
Հոգւով և մարմնով չէս մնար աղքատ։

Կարդա՛ պատմութիւններ, հնութեան և նոր,
Քաղէ՛ յօդուածները քեզի հարկաւոր,
Հագուստդ նոր արա, ծախսդ չափաւոր,
Ո՛չ շատ շատայլ եղիր, ո՛չ անդութ ժլատ։

Անապատակ մի՛ դու կրեր տառապանք,
Ուղղեցէք, մարմնոյդ, մի՛ տար չարչարանք,
Պէտք է խելք ու խոհեմութիւն, աշխատանք,
Երաղով չէ՛ շինուիլ դեղեցիկ պալատ։

Անձրեւի կաթիլը ցոյց քեզի ահա՛,
Որ մէկ տեղ բազմացաւ՝ իսկ լեռ կ'դառնայ,
Մէկէն հարստացող երբէք մարդ չ'կայ
Քիչը ժողովելով՝ յետոյ կ'ըլնի շատ։

Դաղար սիրտ ունեցիր, որ չունենաս վիշտ,
Դու քո համոզմունքիդ մէջը կեցիր ճիշդ,
Առաւուրդ մաքուր, ընտիր սրտ միշտ,
Արծաթի ոսկւոյ տեղ՝ մի՛ ծախեր պողպատ։

Մի՛ ունենար հեշտասէր, վատ սիրական,
Ամուսնացիր, քեզի չ'կայ բռնարան
Ամէն բանից աւել փափագիր ուսման,
Ինուիթիւնով եղիր ազնիւ, պայազատ։

Միշտ երկիւղալից կաց, ձմեռ թէ գարուն,
Ըստորում կայ Աստուած արարիչ անհուն,
Պղծիդ դիպչող խօսքերը մի՛ լսեր դուն,
Օտարք թող քեզ կոչեն խուլ կամ ականջատ։

Արթուն կեցիր որ չը կրես պատուհաս.
Խոհեմ եղիր, ապրիս երկար, անվնաս,
Մարդաշէն քաղաքի նման վաղահաս
Շուտով մի՛ քանդուիր, դառնար անապատ։

Լա՛ց ու ողբա՛, իբրև աշխոյժ պատանի,
Կարդա՛ ծնողաց տէր մանկանց երանի,
Դուցէ այնտեղ մեզի մէկ լոյս ծնանի,
Ուղղէ աչքերդ դէպի միշտ Արարատ։

Ջիւանս կ՚ցանկամ լսել քո լաւդ,
Ցուսա Աստուած՝ կ՚բարձրանայ համբաւդ»
Նորան դիմէ, Նորան ասա՛ քո ցաւդ,
Ինքն է իրաւաբէր և արդարադատ։

107.

«ԲԻՒԼԲԻՒԼ ԲՈ ՆՄԱՆ ՔԵԶ ՎԷՐԱՑ ՓԱՓԱՂ ՉՈՒՆԻ ՎԱՐԴԴ»

Ո՛վ պարտիզատէր ինչու՞ զոհունակ չունի վարդդ,
Նաս կարելի է բաղդը յաջողակ չունի վարդդ,
Անուանը համեմատ գեղեցիկ չէ երևում ճիշդ,
Նման շուշանին փայլ ու սպիտակ չունի վարդդ։

Ոստերը շղարացեալ օրը միշտ ծարաւ է անցնում,
Անձրևի կաթիլ երկնից օժանդակ չունի վարդդ,
Նարդոս, շուշանիկ, նարգիզ ու շահպրակը տեա՛ մէկ,
Ափսո՜ս, նոցա նման բարի վաստակ չունի վարդդ։

Նա վառվում է, հաւաչում է, դա նստածէ հանգիստ,
Երբէք սոխակին օգը ու նմանակ չունի վարդդ,
Ցերեկը արև չէ տեսանում, ամպերի տակն է,
Իսկ գիշերը խաւար, լուս ու լուսնակ չունի վարդդ։

Բայց դու զովումես թէ բոլոր ծաղկանց թագուհին է
Ոչը է չէ դրած գլուխը, պսակ չունի վարդդ,
Լա՛ւ իմ Ջիւանուս խօսքերը, ո՛վ պարտիզատէր դու,
Հասկացիր, նոր օդ ծծելու ճաշակ չունի վարդդ։

108.

ԳԱՐՈՒՆ

Ո՛վ սիրուն, ազնիւ գարուն, եկար մեզի ի՞նչ բան բերիր
Մեզ մի նոր լուր կամ աւետիք տալու ի՞նչ նշան բերիր,
Ծառները մեր ծաղկելու, անձրև ու ջերմութիւն կուզեն,
Պարտէզից լաւ հասկացողն ասա՛, նոր այդպիսի բերիր։

Այլազանց երկիրները հոգի առած՝ զուարթացան,
Աշխարհին Պարատայ յետ մնալու պայման բերիր,
Մեր դրացի ազգերը խելքով չափեցին աշխարհը,
Մէկ քանի քայլ փոխելու մեզի էլ հրաման բերիր։

Երբ եկար անցեալ տարի՝ մեզ խոստացար շատ մեծ բաներ,
Ե՛կ, ասա՛, բնութեանը հարցրէ՛ր, ու պատասխան բերիր՝
Ո՛վ գարուն, ինքդ ես յատուկ արքայութեան մէկ պատկերը,
Ցրտերը դժոխային սպառելու վաղման բերիր։

Երգէ՞ թէ ո՛չ սոխակը Հայաստանին թմրեալ հոգւով,
Պարտէզը մի նոր տեսակ վարդ ու սիրուն շուշան բերիր,
Հովիւը հօտն առնելով ելնա դեղեցիկ դաշտերը,
Խղճալի հայ գիւղացւոց պաշտպան ու օգնական բերիր։

Տաքութեամբ ողջ աշխարհը ծաղկեցուցիր, ազնի՛ւ գարուն,
Բարդեցը Զիւանիին՝ ցրտերը Հայաստան բերիր։

109.

ԳԷԼԷՆՏԷՐԻ

Ո՛վ մարդ, հեռացի՛ր խարեբայ, խարդախ սիրականից,
Օգուտ չի լինիր, խե՛ղճ սիրահար, ձախ սիրականից,
Քեզ պէս քանի անձինք խաբելով գրկել է փառքից,
Փախի՛ր ուրեմն, անամօթ, անվախ սիրականից։

Միշտ բամբասելով քաղաքի մէջ խօսում է վատդ,
Ի՞նչ ես իմանում այդ քո մեծածախ սիրականից,
Զեռքերը արիւնլուայ է տեսնում բոլոր աշխարհ,
Ե՛կ, ե՛կ, հեռացի՛ր արենաշաղախ սիրականից։

Մաքուր սէրդ ափսոս չէ՞, հոգի՛ս, որ նորան յանձնես,
Հեռու մնա արի՛, սէ՛, մրթաթաթախ սիրականից,
Անգութ սատանայի սուսերից քեզ նման, ով մարդ,
Շատին եղել է գլուխը ջախջախ սիրականից։

Անշուշտ Զիւանս գիտում է, սիրոյդ փոխարէնը
Պիտի ճաշակես արիւն ու թարախ՝ սիրականից։

110.

Ղ. ՕՇՄԱՆ

Ով անձ, մի փափաքիր աշխարհի փառքին,
Կ'ճարես ցաւ, բաժին վշտեր, զանազան,
Աշխատիր, որ նախս երկնային կառքին,
Վայելես դու Փրկչի կեանքը յաւիտեան։

Աշխարհի բաղձանքը՝ ունայնութիւն է,
Նորա յոյս ու ջանքը՝ ունայնութիւն է,
Մարդուս բոլոր կեանքը՝ ունայնութիւն է,
Օրերը անցնում է ստուերի նման։

Զիւան, թերի սիրտը սէրն չի՛ սիրեր,
Սէր չունեցող փոքրը ծերն չի՛ սիրեր,
Աշխարհ սիրող մարդը Տէրն չի՛ սիրեր,
Կարդա Յովհաննէսից՝ կառնես պատասխան։

111.

ԱՊԵՐԱԽՏԸ

Զարասիրտ, նախանձոտ մարդը ընկերին
Չի՛ ուզեր, որ լինի ապահով, խաղաղ,
Եթէ տեսնի մի՛ Ն որ զարդը ընկերին,
Ամրողջ տարով նա կ՚մնայ անծիծաղ։

Այսպէս մարդը միշտ կ՚քաշէ դէպ երան,
Իրայ կողմն է տաշում ուրագի նման,
Եթէ իւր ընկերին մի ընչին բան տան,
Ինչո՞ւ ինձ չ՚տուին, կասէ, շատ աւար։

Սա իւր վատ կրքերի դարձել է գերին,
Ոչ զաւակ կ՚սիրէ, և ոչ ամուսին,
Թէ և մարդ է, սորան կասեն մարդածին,
Մի շան չափ էլ չի ճանաչիլ հաց ու աղ։

Չիւան, բարի մարդկանց մօտ սա յետին է,
Անուշով ստուեր է, գործով չնչին է,
Այսպէս մարդը հոգի չունի, մարմին է,
Վաղուց խիղճը մեռած՝ մոտած է գագաղ։

112.

«ԲԱՐԻ Է ՅՈՒՍԱԼ Ի ՏԷՐ»

Ջուրը ընկած մարդոյ նման մեր ազգը,
Քեզ է կանչում, Տէր, օգնութեան մեր ազգը,
Ձունի գթոտ, բարի իշխան մեր ազգը,
Քեզի գիտէ միշտ պահապան մեր ազգը։

Դուն ես որբոց և ազքատաց պահպանող,
Դուն ես ընկածներու համար հոգ տանող,

Տէ՛ր իմ, եղեր ներկայիս էլ պաշտպանող,
Բան է շրջի թափառական մեր ազգը։

Զէ՞ որ, Տէ՛ր իմ, քո ծառայդ էր սուրբ Աբգար,
Քեզ հաւատաց, երբ աշխարհն էր գեռ խաւար,
Քո կամքովդ Պարսից յաղթելու համար,
Մնաս Վեռնդ, ծնաս Վարդան մեր ազգը։

Ամեն դաղանիք քեզ յայտնի է, ով Աստուած,
Ամեն մի սիրտ դու կ'տեսնես անկասկած,
Աղօթելով խնդրում է բազկատարած,
Փափաղ ունի հանգստութեան մեր ազգը։

Մարդոյ որդին, անկամորդ է, ագահ է,
Երկրաւորին խնդրուածքը անշահ է,
Տէ՛ր, Տաճկին էլ խրատէ, այնպէս պահէ,
Երջանիկ է միշտ Ռուսաստան՝ մեր ազգը։

113.

ՀԱՑ ԱՂՋԻԿ

Ով աչերուդ, աղեղ ունքերիդ մատաղ,
Մեղրից ու շաքարից անուշ հայ աղջիկ,
Վարդագոյն այտերդ միշտ դեղածիծաղ,
Քայլքդ կաքաւի պէս քնքուշ հայ աղջիկ։

Ի՞նչն է պարանոցիդ ոսկեղէն զարդը,
Կարծես Անահիտն է մասը, մակարդը,
Պատկերիդ նկատող երիտասարդը,
Ո՛չինի խելագար, ապուշ հայ աղջիկ։

Գրուիչ խօսքերով, ով իմ հոգեհան,
Բռնի սիրել կուտաս մարդկանց, սիրական,
Պատյտ տպդ անմեղ ապանուց նման,
Եարժուածքդ խոհեմ, զգոյշ հայ աղջիկ։

Վահանի պէս ազնիւ, քեզ բարեկամ կայ,
Զիւանուս ի՞նչ փոյթն է, թէ մեծ Բարշամ կայ,
Բանի որ Տիգրան ու Վարդան, Արամ կայ,
Ծառրը կերուի քեզ փուշ, հայ աղջիկ։

113.

Ղ Օ Շ Մ Ա Ց

Սիրածների մեջ գնալը դիւրին է,
Բայց զատուիլը, շատ դժուար է, սիրելի,
Աչք քաշողի խելք ու միտքը խորին է,
Մի ծածկուած գաղափար է սիրելի։

Աշխատողը գործից կքաշէ արդիւն,
Քրտնքի փոխանակ թափելով արիւն,
Ճշմարիտ սիրոյ մէջ նախանձ, դառնութիւն,
Չի պատահի, անհնար է, սիրելի։

Ինչպէս Սօսը Սօնգեղեն բարեկամ,
Այնպէս սէրս կաւելանայ տամ ամ,
Եթէ դու հեռանաս մի բոպէ, մի ժամ,
Միրահարդ ՃամՆշմարէ, սիրելի։

114.

Բ Ա Գ Ո Ց

Սուրբ Բաղոսի ինձի տուած օգուտը,
Կուզեմ քեզի յայտնել, ով իմ ազգական.

Սատանայի ցեղ է, ով խօսի սուտը,
Չեմ ուզիլ կեղծօրէն դնել բնաբան։

Ինչպէս ճշմարիտն է քեզ պատմեմ այնպէս,
Խմիչքը մեր կեանքը միշտ անում կէս,
Ոչ Հոմերոս գիտէ, ոչ Մեծն Ներսէս,
Ամենին հաւասար կանէ դատաստան։

Չոկ խորհրդով օձին խաբուեց Ադամը,
Այնպէս ինձի դառաւ իմ բարեկամը,
Ախալքալաք տեսայ խմիչքի համը,
Երբ ես էի տասն և ութ տարեկան։

Սա իմ բարեկամն էր երգիչ-հին վարպետ,
Այս կաթիլը զործ էր ածում արահետ,
Երբ ինձ սոխպուռմ էր կարծում էի նետ,
Գիտէի խմիչքը-պատճառը մահուան։

Սիրելիս լինելով կախարդ, ձեռնածու,
Անմեղ բնութեանս շուտ եղաւ հլու,
Ասաւ, եթէ խմիչք չ'գործածես դու,
Ես ընդունուիր ամենայն մի խրախճան։

Ադյդ իմ հին ընկերիս ես հաւատալով,
Մատնք մի նեղ փողոց, մի քիչ ման դալով,
Բարեկամիս հետը ձեռք ձեռքի տալով,
Եկանք 'իմասին մէկ հատ մկիտան։

Երբ մատնք այդ շէնքը, կանգնած էր մի մարդ,
Երեսը շատ ծաղը, այտերն իրրև վարդ,
Նա մեզի բարևեց ուրախ և զուարթ,
Ու ցոյց տուեց մեզի մի ջոկ օթեւան։

Նստանք այնտեղ, յառաջ եկաւ արաղը,
Գինին, խորոված, ծիծակը, աղը,

Տեսայ՝ այդտեղ պետի կախուէր մեր մաղը,
Օգուտն ի՞նչ, լռելով նստեցի սեղան։

Գիտցայ ինձ արժան չէր այդ խաղցած գերս,
Զեռք պարզեցի պատկառելով պատկերս,
Գինեվաճառի հետ ես ու ընկերս,
Քցեցինք ամենս մի-մի ստաքան։

Խմիչքը երբ մտաւ սրտիս սենեակը,
Մտքիս անկիւններում վառեց կրակը,
Կրկին ձեռս առայ գինուոյ բաժակը,
Խմել ընկերներիս անելով նշան։

Երկուսն երեք եղաւ, տաքցաւ գաղաթս,
Քսակիցս չէր հեռանայ իմ թանթս,
Հանեցի զրպանէս բոլոր արծաթս,
Կուզէի ծախս անել իմէջ մի վայրկեան։

Ընկերս բազմել էր աթոռի վերայ,
Ձեռքին ունէր բռնած գինուով լի կթխայ,
Կանչեց մօտը եօթը, ութը խարեբայ,
Իրան խորհրդակից մարդիկ ժրաջան։

Դրանք նստան սեղանի չորս բոլորը,
Հին գինին պարպել էր, բերինք մինք նորը,
Բաժակներուն մէջը լցին խնձորը,
Իմ կենացս համար բաց արին բերան։

Իմ կենացս խմում էին նոր ի նոր
Ես ինձ կ'կարծէի յատուկ բաղդաւոր,
Այն վայրկենին դարձել էի թագաւոր,
Աչքիս մէկ կերևէր, ծառայ թէ իշխան։

Վերջապէս, այդ օրը մինչև իրիկուն,
Ինձանից կը խմէր յիսար թէ դիտուն.

Մուրին էր, ամեն մի մարդ գնաց գէպի տուն,
Միայնակ մնացի ես անօգնական։

Շուտով փախած էր իմ ծանօթ ընկերը,
Որ ինձ խոստացել էր, թէ գնանք մերը,
Գինետունը կեցայ ես այդ գիշերը,
Քսար տրում չունէի ես ջոկ կեցարան։

Գետնի վերայ ընկած սենեակս սառն,
Բարձ արի այդ գիշեր գինուոյ տակառն,
Դուռը վերաս կողպեց գինեվաճառն,
Վանդակն էի ընկած թռչունի նման։

Կէս գիշեր էր, քնից արթնցայ տխուր,
Ցրտի պաղութիւնից եղած կցկտուր,
Եթէ մի մարդ ինձ տար մի բաժակ պաղ ջուր,
Տուած արժէք ունէր հազար դահեկան։

Ամրողջ երեկոներս եղած էին դոլչ
Զոր քարերից էր մնացել կուշտ ու կոլ,
Զեռքս ծոցս տարայ, չգտայ մէկ փող,
Սկսեցի անել լաց ու կոծ, կսկան։

Դուռը բացուեց, երբ լուսացաւ առաւօտ,
Այն գինեվաճառը եկաւ ինձի մօտ.
Վերջապէս խնդրումեմ չլինի կարօտ
Իմ քաշած օրերին ոչ մի բանական։

Ասաց փող չտուեց ինձի մի արաղ
Այն գինեվաճառը. աւաղ, շատ աւաղ,
Քանիմ մանեցի փողս մոցուցի գազաղ,
Ընկերիս ձեռքը տարայ գերեզման։

Ոգիս զրաւելով այդ անպիտանը,
Ինձի աշխատանքս լցրուց զրպանը,

Այնքան փոքր կերաւ այն մկնատանը,
Պկին նա ինձանից չեղաւ բաւական։

Այդ տեղից դուրս ելայ դարտակ ջեղ ու ծոց,
Պատուոն բացուել էր հազար մի կերպ խոց,
Ուղղուայ այնուհետ դէպի սրճանոց,
Թէ տեսնեմ իմ ընկերներէս այնտեղ կան։

Տեսայ որ այդտեղ են, ծագից արեւ,
Նարժեց երակներս, փոխուեցաւ ձեւս,
Բարև տուի, երբ որ շառան բարեւս,
Մնացի զարմացած ես, անպատասխան։

Անխիղճ ընկերներս պատուոյս փոխանակ,
Վարուեցան ինձի հետ կռուով, հակառակ,
Նստայ այդտեղ բաւականին ժամանակ,
Երբէք միտը մի սուրճ չ'տեսաւ արժան։

Այդպէս ընկերներից, հեռացիր, ով մարդ,
Որ են մարդ աւարող, խարերայ, կախարդ,
Պայրայեղութիւնն է մարդուն միշտ թակարդ,
Զսփաղանցութիւն'ց դուրս չի գար լաւ բան։

Զգուշացիր, հոգիս, խմէ չափաւոր,
Որ վերջը խմիչքը քեզ չ'ընկնի բոր,
Եթէ միշտ հեռաւար կը մնաս մոլոր,
Անպատիւ, շուարեալ, մարդ անդաստական։

Սիրելի ազգական, ըր, ուշիմ, արի,
Մի ընիր որկրամոլ, քէֆն յօժարի,
Ձիւանն եմ կամեցող միշտ քեզի բարի,
Կը մնամ քեզի հետ հոգւով անբաժան։

114.

Գ Ե Դ Ա Ն Ի

Սիրել եմ, չեմ զղջար, քեզ ով գեղանի,
Օտարք ինչ ասում են՝ թող ասեն, ցաւ չէ,
Դու մի խարուիր այլոց, որպէս պատանի,
Նորանց ամէն ասածները իրաւ չէ։

Հողմը ժայռ քարիցը ի՞նչ պիտի տանի,
Որքան փչէ՝ դատարկ, իզուր կանցանի,
Վայրախօսը այն հողմին կը նմանի,
Թոյլ ծառի պէս միշտ շարժուիլը լաւ չէ։

Տոկուն սիրտ ունեցիր, լինելով արի,
Կարող ես դու յաղթել ամենայն չարի,
Խելք, խոհեմ, համեստ լինելն է բարի,
Միայն գեղեցիկ լինելը քեզ բաւ չէ։

Ջիւանին եմ, քեզի բարի ակնածող,
Բարին սիրող, չար բանը միշտ հալածող,
Եղի՛ր դուն հեռատես, արթուն, մտածող,
Գիտցի՛ր, սիրուն թշնամին սակաւ չէ։

115.

Ս Է Մ Ա Ց Ի

Սիրականս պիտի դար շուտ, մէկ օրը մէկ շաբաթ դարձուց,
Անարժան աչքէ ընկած վատ՝ սիրելիս խանդակաթ դարձուց,
Բոլոր աշխարհ ու երկիր իմ խորհրդիս վայ ուղեց կրկնել,
Անարատ սիրոյ քաղցր բաժակը դառն դաւաթ դարձուց։

Ապերախտ սիրելիս ինչ վերն ասինք՝ գնաց չնկաւ էլ յետ,
Առոյգ, կարմիր դունով ներկած երեսիս սեւասաթ դարձուց,

Սիրով վառուած անուշ կեանքս, հոգիս, շարչարելով ճնշեց
Կակուղ, քնքուշ, դաղար սիրոս զրելու մոգազաթ դարձուց։
Ջիւանի սիրահարին սիրականը յանդիման զարձաւ,
Իրան ամեն մի խօսքը սիրտ ծակելու սուր մախաթ դարձուց։

116.

ԴԱՍԻԹԱՆ

Սիրելի բարեկամ, անցաւ գարունը,
Զը ճարեցիր քեզի մի զորձ օգտակար,
Զուր անցաւ ամառը, եկաւ աշունը,
Ջ'ունիս ոչինչ մնունդ, ձմեռուայ պաշար։

Թէ դու քեզ չ'զթաս՝ ոչ ոք չի զթայ,
Մէկ մտածէ, որ ես ունիմ ապագայ,
Ինչպէս մարդ ես, խեղճութիւնդ չես զգայ,
Այլք կ'ցաւին՝ դու չես ցաւիր քեզ համար։

Թէ աշխարհը չափես դու ծայրէ 'ի ծայր,
Չի՛ ճարուի քեզի պէս թշուառական այր,
Մինչ երբ խեղճութիւնը քեզ իշխէ, եղբայր,
Մարդ ես, մէկ մտածէ, գոիր մէկ հնար։

Ո՞ւր է, որ էիր դու անցեալ, քաջ ու ժիր,
Ինչո՞ւ ստրկացար խելացի գոլիր,
Որդիքներուդ ամեն մինը մի երկիր
Ընկած՝ կ'թափառին մոլոր ու շուար։

Վ արպետ ես, հնարէ՛ մի նոր մեքենայ,
Միշտ հոգւով աշխատիր, ոչ թէ ակամայ,
Միթէ աշխարհը ողորմած մարդ չկա՞յ,
Որ մինը քեզ համար լենի բարեբար։

Բաց մաքիդ աչքերը, եղիր բանիմաց,
Սիրելիս աչքերդ բաց, ասում եմ, բաց,

Դառն աշխատանքով մի կտոր հոր հայ,
Դանէ դուռ մուրալով կ'ճարես դժուար։

Ուրեմն աշխատիր, ապրիս բարեկամ,
Որ ցերը քեզ խղճայ ու անէ խնամ,
Անուղղ կ'մնայ ծոյլը յարաժամ,
Գերդաստանով անբաղդ, միշտ անմիխիթար։

Ինչու՞ քեզի նման դիտուն անհատը
Լաւ ընթացքը թողած կ'բռնէ վատը,
Լսէ, եղբայր, մի անարգեր խրատը,
Երբ մի՛ մարդ կ'խօսի քու գործիդ յարմար։

Աշխատանքով կ'ապրին ծառայ, թէ իշխան,
Մարդ չի՛ դադրի երբ չ'մտնի գերեզման,
Ցաշխատողը և չի՛ ուտեր ոչինչ բան,
Ամենայն մի դիմաք կ'մնայ անճար։

Թէ որ աշխատելու չունիր փափաք,
Ինչու՞ ամուսնացար, ունեցար զաւակ,
Տունդ հանողը կը կարծէ աւերակ,
Անօթի ու ծարաւ առանց կառավար։

Էհ, ամո՛թ է, եղբայր, քնի՛ց սթափէ,
Բաւական է ծուլութիւնը քեզ խարէ,
Մատնէ խելքովդ, ձեռքդ ու շափէ,
Դարձ մի բարի գործ, շուտով յառաջ տար։

Կանչէ Աստուած, գնա՝ մի դիւղ անկիւն,
Անկարծիք դու այնտեղ կ'քաղես արդիւն,
Դաշտ վարպը պիտի անկէ ոսկի օրէն,
Թէ անյապաղ բրտինք թափէ անդադար։

Աստուած քեզ տուել է խելք ու միտք, ուղեղ,
Ֆիզիքապէս առողջ, յաղթանդամ, ուժեղ,

Մեռ սրա որդիքդ, թոռներդ մի տեղ,
Դարձի դէր ամենին, եղիր յուշարար։

Աստչինն ճարէ՝ մի քանի զոյդ եղ,
Սորվէ՝ եկրագործի տուրբ արհեստը հեզ,
Այնուհետև շատ մարդ օգնել կուգին քեզ,
Որ տեսան գործիդ մէջ կաշխատիս արդար։

Որ տեսան գործիդ մէջ արդար ես յատուկ,
Քեզ՝ սիրել կ'ցանկան թէ ծեր թէ մանուկ,
Ամէն իշխան քեզի կ'օգնէ ծածուկ,
Փոքր տակոսիքով փոխ տալով դուսարաւ։

Կամաց կամաց դու կ'ստանաս մեծ համբաւ
Ապրուստի կողմանից չես ունենար ցաւ,
Մարդը յատաջ կերթայ տակաւ տա տակաւ,
Մէկէն չի սկսուիր հարիւր տ. հազար։

Արի եղբայր, իրար բարի կամենանք,
Սիրոյ պայմաններէն մենք չ'հեռանանք,
Շատ խօսալով այլոց ձանձրութիւն կուտանք,
Քիչից շատ հասկացիր տ. եղիր յօժար։

Ջիւանէ, թէ մարդը յատուկ հասկանայ,
Ձանքը իր եռանդը իզուր չի գնայ,
Աշխատողը երբեք քաղցած չի մնայ,
Երբ Աստուած տուել է մարդուն մեծ հանճար։

117.

ՁՈՍԻԿ

Արուն, բարի հայոց զատիկ դու տօներու թագաւորն ես,
Թէև հրաշալի տօն շատ կայ դու ամենից փառաւորն ես,

Գալուստդ շատ բարի է, ցանկալի է ամենայն մարդու,
Բոլոր տարուայ ամիսներու օրերու մէջ զօրաւորն ես։

Զմեռը միշտ քեզանից փախենալով փախչում է սատիկ,
Տխուր դեկտեմբերի, յունվար, փետրվարի դաժանորն ես,
Կուգաս չէս գար՝ բոլոր աշխարհ կ'ծածկի ամենայն կերպով,
Դրախտի կեդրոնացած բաղմապտուղ ծաղկալի ձորն ես։

Միայն աշխարհը չի ցնծայ դու որ գաս, խնկելի սուրբ օր,
Դու երկնային զորաց էլ ուրախութեան տօնելու օրն ես,
Քեզի պէս բախտաւոր սուրբ օր չկայ ամբողջ տարուց մէջը,
Դու շորս հարիւր միլիոն ժողովրդի բաղդի խնձորն ես։

Հայոց անբաղդ երերեալ ազգը քեզնից կ'սպասէ նոր բաղդ,
Բոլոր առարկայից հոգի առող տօներու հզօրն ես,
Հազար ութ հարիւր ութսուն մէկ տարի է տօնում ես անխախտ
Ջիւանես այս տարի մեծ յոյս ունիմ հայոց համար նորն ես։

118.

Ա Ց Գ Ի Ն

Վերջացաւ մեր այգին, վերջ եղաւ ու վերջ,
Անտէրութեան ձեռքից աւերակ մնաց,
Երբ տունկերն սկսան մնալու սարջ,
Միանգամայն անջուր անվտակ մնաց։

Հինգ հարիւր տարուց շատ չ'դալով անձրև,
Ծառերը չորացան ծծելով արև,
Ինքը բոլորովին բնաջինջ եղև,
Միայն լոկ անունը յիշատակ մնաց։

Ջիւան խնդրէ, նա քաշէ պատուհասը,
Ով որ հասուց այս մեր Այգւոյն վնասը։

Այս և անդ ցրուելով ամեն մի մասը,
Մնացածն էլ այլոց ձեռի տակ ճնաց,

119.

ԴԵԼԼԷՆՏԵՐԻ ՄՈՒԽԻՆՄԷՋ

Վարդ վարդ ասելով կեանքը պնացել է սոխակին,
Մէկ օր մի ժամանակ չէ հասել իւր նպատակին,
Ափսո՜ հաղար ափսո՜ նորա սիրելի փափագին,
Որ չէ խնայում խղճալ պատանի հասակին,
Դարձեալ աւա՜ղ ասեմ նորա երգին եղանակին,
Ունայն սիրոյը ծաղրասեղ է դառել թուխակին։

Տասն և մի ամիս համբերելով յոյս է նկատում,
Թաւաբ միդախառն դաւառից լոյս է նկատում,
Անմարդ անապատ տեղից խրախոյս է նկատում,
Արմատը փտած ծառից նոբաբոյս է նկատում,
Վարդին սոխակը սրտովը սուրբ կոյս է նկատում,
Կարծում է համեմատ իրաւ արդար Արեգակին։

Սոխակը ոչնչացրել է մարմինը փափուկ,
Ո՜հ ո՜հ ասելով վարդի սիրոյն դարձել է ծերուկ,
Զուր սիրոյ մասին մահը տարել է քանի մանուկ,
Ինչպէս սոխակը ճանաչել է իւր սէրը յատուկ,
Բայց չէ իմացել թէ կ'սիրէ միշտ փուշը ծածուկ,
Սև ագռաւն էլ նկատում է մէկ ժամանակին։

Այս սիրոյն հաւանող բանական մարդը անօգուտ,
Այն մարդու ձեռաց օտարը, գեղարդը անօգուտ,
Անդաստանը ցանած ցորենը, յարդը անօգուտ,
Ինչպէս սոխակի հանդիսանաց զարդը անօգուտ,
Թղած պսակատանը կ'սիրէ վարդը անօգուտ,
Կամ չէ իմացել համբաւը կապուտ մանիշակին։

Իզուր սիրոյ վերջը Զիւանի՝ մարդ կ'ճարէ ցաւ,
Ցգուտ չի՛ քաղէր, ինաս է, հոգին կուտայ գրաւ,
Սիրոյ ծովի վերայ չի՛ կարող ժուռ գալ ամեն նաւ,
Զեռնատ չէ՛ մեզ անենպատակ սէրը չէ՛ իրաւ,
Թիֆեռի սէրը ճշմարիտ է, միշտ տոխակից լաւ,
Ամբողջ կենաց իւր անձը նուիրում կրակին։

120.

ՏԳԼՏ ԳԼՈՒԽ

Տգէտ գլուխ, զատիւդ չ'պահելով,
Ոտքերդ քեզ վերայ բաց արին գանգատ,
Ընդամենդ կատարեալ չ'շահելով,
Խռովեցան նոքա քեզանից հաստատ։

Լուսատու, հեռատես աչերդ մոքուր,
Քեզ համար կ'չափեն աշխարհն ընդհանուր,
Նրանց վերայ դու քաշուես վարագուր,
Բռնի կ'խափանես լոյսը յորդատատ։

Արթուն, զգատ ականջներդ անգործաթ,
Դեսպանի պէս կ'չարչարուին քեզ համար,
Նորանց դուռը փակուես անխղճաբար,
Որ չ'լսեն բաներ դարին համեմատ։

Հատատելիքդ կարօտ են լուռ բանի,
Պալատանի, վարդի, նարդոս, շուշանի,
Քթախուռը համբարումես պիտանի,
Կ'կորչի խնդճերու ճաշակը ազատ։

Ճարտար լեզուդ մունջ կ'պահես մշտակեան,
Կ'փակես շրթունքդ, չես բանայ բերան,
Այդ վարմունքով շուտ կ'գնաս գերեզման,
Վեհ անուանդ վերայ թողնելով արատ։

Ամ՞թ քեզի համար ամ՞թ ով հերոս,
Անդամներուդ համար պատրաստու�ս փոս,
Թանկագին գործունեայ ձեռքերիդ ափսոս,
Պահուաես անօգուտ, ծոյլ ու անաշխատ։

Ջիւանին խնդրելով քեզի կ'աղաչէ,
Սթափէ, քանի որ քո գործդ աջ է,
Արիւնացիր դու, պատիւդ լաւ ճանաչէ,
Նշունկիցդ քեզի չի համիր խրատ։

121.

ԹԱՂԱՏՈՒՐ ԿՆՏԵՂՑԵԱՆՑԻ ՍԻՐԱԾ ԵՐԳԸ

Տգէտ բամբասողները անծանօթ լուր կ'սպասեն,
Կամ Քոբմառն, կամ ջնեռն պատրաստեն որ քեզ ասեն,
Ողջ այնպիսի մարդիկը խել-քերիցը պակաս են,
Իրանց փորը անօթի ուրիշին կալ կ'կասեն։

Պարապ և անաշխատանք, անուսում ցանցառները,
Մաքերով լը չափուաեն շատ սեղի անտառները,
Իրը գալան կ'ծախեն խեղճ անուշիկ գառները,
Իրանց դատողութեամբը նրանց շարքում կ'դասեն։

Կռիւ տեսնին կ'ցնծան, մատուին երար կ'քսեն,
Ուզուաեն այնտեղից էլ մի քանի լուրեր լսեն,
Ուրիշներին ոկրամոլ, հաւապէս դառած կասեն,
Ողջ մարդկանց միսը կուտեն, գիտեն թէ մաքուր պաս են։

Ճշմարիտ խօսողները նրանց գերի են դառեր,
Ազգութիւնից հեռացած կարծես վերի են դառեր,
Հաւատից գայթակղուած, յատուկ թերի են դառեր,
Վերոյիշեալ մարդիկը մեր ազգին շատ վնաս են։

Ջիւան, յառաջ մի՛ խաղար, քար կ'խփեն քո թեւին,
Նրանք այնպէս մարդիկ են՝ խաւար կասեն արևին,
Արդարութիւնը ի՞նչ է, չեն գիտեր ամենևին,
Բարութեան միշտ հակառակ չարութեան մակարդ մաս են,

122.

ՄԻԻՇՏԷԶԷՏ

Վարդին սոխակից հեռացնող ով անիրաւ փուշ,
Կեանքերու զրաւ փուշ.
Յուսամ կ'լինիս վառ կրակին մի օր գրաւ փուշ,
Չես ճարի թաթաւ փուշ.
Մինչ ելիր ասա անմեղ ծաղիկներուն խաբես անցնիս,
Կայծով լափես անցնիս.
Ո՛վ անպիտան արմատ ի՛ ինչ, այսերդ սեաւ փուշ,
Պատճառումես դաւ փուշ.
Ո՜հ, որպիսի՞ անխիղճ թիւնալից խայթ կայ քո մատդ,
Չորանայ արօտդ.
Ուրքան նորահաս սրտերու ընծայում ես ցաւ փուշ,
Արիւն ու շարաւ փուշ.
Թրթռուրը, ճճին քեզանից խղճով են, ով անգութ,
Սակայն դու սև ու մութ.
Տարին քանի՞ հատ բերումես սոխակ ու կաքաւ փուշ,
Զոհուած, դուռդ խաւ փուշ.
Վերջդ Ջիւանս քաջ գիտէ, որ չորանումես շուտ,
Անիարձ ու անօգուտ.
Նկրգործութիւնդ անց չի՛ կենայ էլ քու պատաւ փուշ,
Այրի՛ դու ծարաւ փուշ.

123.

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տաճկաստանի հայեր ձեր հոգուն մատաղ,
Մեք թոռներ, հեռանար մայր Հայաստանը,
Գաղթականութիւնն է ձեզ մահուան դատաղ,
Կ'տանի ամենիս խոր գերեզմանը։

Այ՜ հա գաղթողները ձեզի օրինակ,
Ի՞նչ փառք են ստացեր, ի՞նչ բարի վիճակ,
Զ՞է որ ձեր պատերը ունին մի տուակ.
Լաւ է անփորձ մանչնիս փորձուած թանը։

Քնած էք, արթնցեք ու խելք ճարեցէք,
Հանդարտ կեցէք, ձեր դաշտերը վարեցէք,
Օտարի դահլիճ/ց լաւ համարեցէք,
Ապագան յիշելով կացէք ձեր տանը։

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Այսքան տարի շարչարուեցաք անդադար,
Գուցէ թէ փրկութեան շուտ լենի հնար,
Կ'ցանկայ երջանիկ օրեր ձեզ համար,
Ձեզի սրտով սիրող աշուղ Ջիւանը։

124.

ԱՇԽԱՐՀ

Տրամութեան օթեւան ազգ տուն Աշխարհ,
Քո մէջդ ոչ մի մարդ անցաւ չի մնայ,

Լացով հարցս նման ընկայ ճանապարհ,
Ցաւերդ գգուեցի երբ մօրից ծնայ։

Քո փառքերդ ընչին, պարդեւներդ սուտ,
Կրկին կ'պահանջես ստացողից շուտ,
Երբէք մի մարդ քեզնից չի՛ քաղեր օգուտ,
Ցաւով կ'ծնանի, ցաւով կ'գնայ։

Փրկիչդ խաչեցիր ով անհարազատ,
Միթէ մարդ քեզ նորէն կընծայէ՞ հաւատ,
Չիւանս քեզանից սրտմտութիւնէն զատ,
Թէ իրաւն ասեմ ես ոչինչ մնայ։

125.

Մ Ո Ի Շ Տ Ի Զ Ի Տ

Տրտում ու տխուր շրջագայող անդադար եմ ես,
Ոհ ապիկար եմ ես.
Տատրակի նման անբնկեր, անմխիթար եմ ես,
Բաղդից օտար եմ ես
Աշխարհի ալեացն չի՛ դիմանար նաւը սրտիս,
Է շատ ցաւը սրտիս։
Ցուսով ու հաւատով ու սիրով անկատար եմ ես,
Մտքով տկար եմ ես.
Ա՛ւաղ երիդասարդութեան անցած ժամանակիս՝
Իզուր նպատակիս.
Վասն զի բարի գործքերու անօգտակար եմ ես,
Քանզի խաւար եմ ես։
Փոքր ինչ նկատում եմ դէպի ինձ մեղքերս անթիւ,
ցաւս չունի հաշիւ.
Դարձ գամ կարելի է, թէ նորէն ապաշխարեմ ես,
Անցքս նկարեմ ես,
Զբաղուելով ունայն սիրոյ հեղինակի հետն,
Սրտիս, հարի նեռն.
Ա՛յն ինչ խոցերէն փրկուելու. ի՞նչ հնար եմ ես,
Աղեղ ու ճար եմ ես,

Ում որ բարեկամ անուանումեմ Ճշմարիտ ամբիծ,
Ցոյց տալիս է կսկիծ.
Ո՛չ ոք չ՛կայ տսող, Զիւանուն բարերար եմ ես,
Ընկեր համարեմ ես։

125.

ՊԱՆԴՈՒԽՏ ԹՈՒՋՆԻԿ

Տխուր, պանդուխտ, սիրուն Թուջնի՛կ, ուզածիս նման ես երգում,
Սիրով վառուած հառաչանքով անուշ սիրական ես երգում,
Համեղ ձայնդ լսող մարդու ականջին թուում է այնպէս,
Նա հաստատ կարծումէ հայ բարբառով շարական ես երգում։

Երեմեան ծաղկալի պարտէզներէն ջոկնուել ես, խղճուկ,
Տխուր, պանդուխտ օտար երկիրներում ընկած բան ես երգում,
Ապարախդ հայրենիքիս ցաւերը քեզի էլ ազդեց, խեղճ,
Սիրուն Թուջնի՛կ, դուն էլ ինձ պէս Հայ ու Հայաստան ես երգում։

Տխուր, տրտում, աւեր դարձած Անին է օթևաներդ միշտ,
Բուներդ այնտեղ դրած ձագերուդ հետ միասին ես երգում,
Զիւանի երգիչին այցելելու եկած ես ով Թուջնիկ,
Հիմայ այստեղ եկած ինձ հետ միտեղ Շիրակուան ես երգում։

126.

ՓՈՐՁ

Փորձը մարդուն կ՛դարձնէ կատարեալ,
Դորձի մէջը չի՛ ունենար շատ սխալ,
Կը սկսի ոսկւոյ նման երևալ,
Մաքուր, զտուած, փայլուն որպէս մի զօհալ։

Փորձը խելքք մարդուն՝ շատ բան ցոյց կուտայ,
Փորձով մարդիկ դառնումեն փիլիսոփայ,
Հանքարանը, բնագէտը քեզ վկայ,
Փորձով նրանք կ'սկսին յառաջ երթալ։

Փորձը որ կայ՝ մարդկանց եփող մի հուր է,
Լաւ դուրս կ'ուգայ, ով որ ազնիւ, մաքուր է,
Անխելք մարդը որքան փորձուի՝ զուր է,
Վատութիւնից նա չի կարող լաւ դառնալ։

Անփորձ մարդու խօսած խօսքն է թերի, հաւմ,
Թէև ունի բաւականին նա ուսում,
Չի ստանայ փորձուածի համարում,
Ժողովրդի մէջը չունի երթ ու դալ։

Փորձը խելքի բոքն է, մամուլն, է Ջիւան,
Ծանր, թեթև, նա ցոյց կ'ուտայ ամեն բան,
Փորձով մարդու լաւն ու վատը կ'իմանան,
Անյիշաչար լինի, թէկուզ ոխակալ։

127.

ՂԱՐՍԵՑԻՈՑ ԴԱՆԴԱՏԸ

Քէֆ ու սաֆայ կէնին ֆալան ֆիլանը,
Ընձի հրմար բանըմ չէղաւ, ի՞նչ էնիմ,
Թող դան ընձի տանին սարի գիլանը,
Իդբալս ամպի տակ ընկաւ, ի՞նչ էնիմ։

Դիւնյի մէջը մէ արպապըմ չը գտայ,
Հալաւս հին, միջքիս կապըմ չը գտայ,
Հրճրկ ընչէ՞ն է, սրհապըմ չը գտայ,
Որ ծառը բռնեցի՝ պրծաւ, ի՞նչ էնիմ։

Դիւշմինիս յերիսը կարմիր, ալ մնաց,
Իմ յերիսը եարայ էղաւ, խալ մնաց,
Մաթահնիլս բօխչիս մէջը ծալ մնաց,
Առնօղըմ չը գտայ, փթաւ, ի՞նչ էնիմ։

Ես սէֆիլ Սրափն իմ, սրտով էխտիար,
Ես իմ արարմունքէս մարդ չունի խտբար,
Վիդվով խօսածներս ձեռիցս չի՛ գար,
Աստուած սրտիս գեօրայ չէրաւ, ի՞նչ էնիմ։

128.

ՀԵՂԻՆԱԿ

Փորդ քաղցած, հագուստդ հին, ազատախօս հեղինակ,
Քեզ կը յիշեն, մի՛ վախենար, երբ մեռնիս՝ այն ժամանակ,
Դու քեզ մաշէ, որքան կուզես, միայն այս առ մոքի տակ,
Աշխարհի մէջ մէկ գին ունի, թէ հասա մանես, թէ բարակ։

Սեղծաւորը պատիւ ունի, ամենայն տեղ-մշտական,
Որովհետև խօսելու մէջ, ունի երկու հատ բերան,
Այլ տեղ մէկին կը բամբասէ, մօտը կուտայ գովասան,
Այնպէս մարդուն կը անուանեն ուշիմ, խելօք, ընդունակ։

Ճշմարտախօս լինելովդ միշտ անարգանք կ'ստանաս,
Գերդաստանդ խեղճ կը մնայ, քսակիդ տալով վնաս,
Քանզի, աշխարհ զուրն սիրէ, այլոց կ'ուտայ պատուհաս,
Նատերն ինչպէս որ կը վարուին դուն էլ եղիր նոյնգունակ։

129.

Բ Ա Ղ Դ

Քեզանից ա՞լ զնամ, ո՞ւմ գանգատ անեմ,
Տուել ես մահացու ինձի ցաւ, բաղդս,
Քեզ ի՞նչ դիմով խօսիմ, ի՞նչ պատասխանեմ,
Իմ հոգիս արել ես քեզ գրաւ, բաղդս։

Իմ սրտիս համառձայն դուն չես բաբեկամ,
Քո մոքէդ անցածը կանես ամեն ժամ,
Անձս բամբասելով՝ օրը շատ անգամ,
Կը մասնես թշնամոյն, անիրաւ բաղդս։

Քո վէրքերդ սրտիս մէջը ցանելով,
Կամաց կամաց ճանապարհդ տանելով,
Անմահական աղբիւրներից հանելով,
Կը թողնես յաւիտեան ինձ ծարաւ, բաղդս։

Թէ ասեմ Զիւանս քեզնից ազատ եմ,
Մուրհակս ձեռիդ է, ի՞նչ բան հաստատեմ,
Քեզի ի՞նչ քաքողեմ, կամ ի՞նչ խրատեմ,
Ո՛չ երիտասարդ ես, օ՛չ պառաւ, բաղդս։

130.

ԲԱՂԱԲԱՑԻ ԵՒ ԳԻՒՂԱՑԻ

Քաղաքացին ու գիւղացին իրար հետ,
Վիճում էին, պատահելով, ես տեսայ,
Մէկը միւսիցը սրախօս, վարպետ,
Անում էին մի այսպիսի առարկայ։

Գիւղացին ասումէր, ով քաղաքացի,
Առանց մեզի կարօտ կը մնաք հացի,
Ձեզ վերայ վարձ ունի ամեն գիւղացի,
Ձեր ամեն նեղ օրուան կը լինինք ներկայ։

Քաղաքացին ասաւ, ձեզ պէտք չէ յարգել,
Որովհետև չունիք կարգով մուտ ու ելլ,
Առանց փողի չէք տար մէկ ինչին աւելլ,
Ինչո՞վ կրպարծենաս սրտլիկ խարեբայ։

Գիւղացին ասումէր, ձեզ մօտ ջրուած է
Գիրքն, այնպէս չէք կարդար, ինչպէս գրուած է,
Խարեբայութիւնը ձեզի սրուած է,
Հաղար անգամ կ'ասէք զուր «Աստուած վկայ»։

Քաղաքացին ասաւ, չունի չափ, քանակ,
Եթէ անել ուզեմ ձեզ այպ ու ծանակ,
Կարդ, կանոն, մարդկութիւն մեզնից կ'ստանաք,
Միշտ մեր երախտիքը շատ է ձեզ վերայ։

Գիւղացին ասումէր, այո՛, քանի բան,
Սովորել ենք ձեզնից, ունինք մենք նշան,
Հարբեցութեան, հայհոյութեան, գողութեան,
Քաղաքից գիւղերն էլ եղան ենթակայ։

Քաղաքացին ասաւ, քաղաքն է արժան
Թագուհի կոչուելու, ամեն մի վայրկեան,
Դուք չը գիտէք ուսում և ուսումնարան,
Մենք կը պատրաստենք ձեզ համար ապագայ։

Գիւղացին ասումէր, լեզուդ լինիր զոց,
Սուտ խօսելու համար չը գայիր փողոց,
Այնպէս գիւղ կայ, ո՞չ թէ ուսուցիչ, դպրոց,
Անգամ չունի մի գրաւարժ քահանայ։

Քաղաքացին ասաւ, խաւար է՛ք, խաւար,
Ձեր սկսած բոլոր գործն է անկատար,
Ամբողջ տարին աշխատումէ՛ք անդադար,
Հանգստութիւնն ի՞նչ է, երբէ՛ք չէ՛ք զգայ։

Գիւղացին ասումէր, ունինք մենք աւանդ,
Զր աշխատող մարդը կը լինի հիւանդ,
Աշխատելով մարդս կ՚ստանայ եռանդ,
Դանդաղութեան մէջը, մեռելութիւն կայ։

Քաղաքացին ասաւ, ես չեմ վարվում խիստ,
Պատուաւոր մարդոց հետ ունիմ կաց ու նիստ,
Ոտ ու ձեռս մաքուր, ապրուստս հանդիստ,
Նստած կրպակումս, բաժինս կ՚ուզայ։

Գիւղացին ասումէր, մեծ է անունս,
Շատ հոգեր է չափել ինձ իմ կանգունս,
Քառասուն մարդուց կը բաղկանայ տունս,
Համաձայն կ՚ընդունին ինձ, իբրև արքայ։

Քաղաքացին ասաւ, ոչ յիմար դդում,
Ո՛չ խաղաղ կեանք ունիք, ո՛չ մի կեր ու խում,
Ձեր արդեանց ընտիրը մենք ենք վայելում,
Ստեղծուած է՛ք մեզի համար դուք ծառայ։

Գիւղացին ասումէր, պարոն բանիմաց,
Մեր ձեռքերն են տալիս ձեզի մի ճոթ հաց,
Եթէ մենք չը լինինք կ՚մնաք քաղցած,
Ի՞նչ ես մեծ մեծ խօսում, եղուիտ, ատտանայ։

Քաղաքացին ասաւ, թրջած ձեռ ու ոտ,
Ամսով շապիկներդ կը մնայ աղտոտ,
Տարին մի անգամ չէ՛ք առներ մսի հոտ,
Լոկ հացն ու ապուրը ի՞նչ օգուտ կուտայ։

Գիւղացին ասում էր, մեղի լաւ ծանիր,
Գիւղացու կեանքին է ցանկանում երկիր,
Ուտում ենք սեր, մածուն, եղ, անքաշ պանիր,
Միսը մարդուն շատ վնաս է, մեր տղայ։

Քաղաքացին ասաւ, մեղքերդ է անթիւ,
Թէ թուելու լինիմ չի լինի հաշիւ,
Կոպիտ էք, չէք գիտեր մարդկութիւն, պատիւ,
Վատ գործերդ մի՛ յիշել տար ակամայ։

Գիւղացին ասում էր, դո՞ք էք անմեղը,
Հալել ու մաշել էք մեր սրտի եղը,
Եթէ քաղաքացին գալիս է գեղը,
Նրան ընդունում ենք, տալով ովսաննայ։

Քաղաքացին ասաւ, արդար և իրաւ,
Հիւրասիրութեան մէջ գիւղն ունի համբաւ,
Իմ ասած խօսքերս դու մի աներ ցաւ,
Մենք եղբայր ենք, ներէ՛, ես քեզի մեղայ։

Գիւղացին ասում էր, ո՛չ, ո՛չ մեծ եղբայր,
Ես եմ ասում մեղայ քեզի, իրրև հայր,
Գիւղերը ծնունդ են, քաղաքն է իսկ մայր,
Ների՛ր շինականիս, ով մեծդ հսկայ։

Ջուանի, վիճեցին առաջին նուագ,
Իվերջոյ յայտնեցին հաշտութեան փափագ,
Քաղաքը առանց գիւղ, գիւղն առանց քաղաք,
Չէ՛ կարելի ապրել, լսեցենք հիմայ։

131.

ՈՒՂԵՐՁ ԱՌ ԶՕՐԱՊԵՏ ԼԱԶԱՐԵԱՆՆ

Քաջ զօրապետ, մեծահամբաւ Լազարեան,
Ալաշկերտի, Ղարսի հերոս, քաջ Իշխան,
Ընտիր արիւն, ազնիւ սերունդ հայկազեան,
Փառք հայերուս, որ դու ես մեզ ազգական,
Հայ սրտերից չես՝ հեռանար յաւիտեան,
Թշնամուկ ազգիդ փառք ու պարծանք պատուական։

Հարազատն ես Ռուսաց Կայսերն Ինքնակալ,
Ո՛վ գիւցազուն, մեծ Լազարեվ Գեներալ,
Անյաղթ ու վեհ, որպէս Վահան, Անենբալ,
Քիչ զօրքերով շատին անող ձերբակալ,
Երեսըդ պարզ, ճակատդ բաց, անսխալ,
Տէրը պահէ քեզ յարաժամ անսասան։

Երբ դու ելար Ալաշկերտի կատարը,
Տաճիկ զօրքին պատեց մութն ու խաւարը,
Խափանեցիր Տաճկաց բոլոր հնարը
Պաշարելով նոցա զօրաց գումարը,
Տեսաւ չ'իմնի՝ քաջ, հեռատես Մուխտարը,
Թողեց փախաւ զօրք, թնդանօթ, հրացան։

Վեհ Լօրիսից դու առնելով օրինակ,
Գոռոզ Տաճիկ զօրքին արիր խայտառակ,
Հայաստանում բարձրացուցիր դրօշակ,
Անյաղթ Արծուոյն շատ մարդ դարձաւ հպատակ,
Սուրբ խաչն առաւ Կիսալուսնին ոտքի տակ,
Փայլեց Քրիստի եկեղեցին սրբազան։

Ո՛վ դու քաջ Հայ, քաջ զօրապետ անդրանիկ,
Բարձրահասակ, կերպարանքով զեղեցիկ,
Հզօր, կորիճ, պատերազմող մեկ հատիկ,
Քեզպէսներով է մեր ազգը երջանիկ,

Տխուր Հայոց ուրախութեան աւետիք,
Քաջ Հայերով կը պարծենայ Հայաստան։

Կեցցէ Սիւնեաց Նուշի քաղաքն հաստատուն,
Որ ծնել է քեզի նման բանիբուն,
Պատերազմի գործոց հմուտ և գիտուն,
Ուր որ լինիս թշնամիդ է քո նկուն,
Անվերջ մնայ շառաւիղդ, միշտ կայուն,
Քաջեր ծնի գերդաստանդ քեզ նման։

Մեծ գործերուդ բոլոր աշխարհն է վկայ,
Քաջ անունդ հասաւ մինչև Եւրոպայ,
Թէ լինէի ինքս Դամառ-Քանիպոյ,
Շատ լաւ խօսքեր կը գրէի քեզ վերայ,
Խեղճ Չիւանս հաղիւ քանիմ խօսք գոյ,
Տէր իմ, խնդրեմ, լեր այսքանով բաւական։

132.

ԹՕՓԽԱՆԱՑ ԴԻՒԱՆԻ

Քո փափագով վառվռումեմ, արի, սիրախն, ուրանալ ես,
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան ուրանալ ես,
Ճանապարհդ նայելով աչքերումս լոյս չը մնաց,
Ե՛կ երևոյթ տեսանեմ, ապէրիս սիրարան ուրանալ ես։

Ի՞նչ պատահաւ անուշիկ, որ դուն հեռացար ինձմէնից,
Քաղցրախօս, անուշ լեզու, անուամբ զովական ուրանալ ես.
Քանի՞ մէկ, քանի՞, շարաչար տանջուիմ այլոց ձեռով,
Ո՛վ վերհասած անուանի, կեանքիս պահապան ուրանալ ես։

Մեր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ առան,
Դուն արի իմիասին գնանք զատարան, ուրանալ ես,

Թող միայն ասեն, Զիւան, այսօր սիրականդ կ'ուզայ,
Թող տատանիմ քո սիրով մինչև յաւիտեան, ուրեղ ես։

133.

ՀԱՄՈԶՄՈՒՆՔ

Օտարի բնական գիտութիւնիցը,
Իմ հայ պապի տուած խրատը լաւ է,
Փարիզու զարդարուած քառանկիւնիցը,
Ինձ համար Անէոյ մէկ պատը լաւ է։

Ուրիշ տալիք չունիմ Թարց կեանքիս մահից,
Ինձ ի՞նչ կուտան օտարք իրանց մեծ շահից,
Ինձ համար Փարիզու վեհ Կայսեր գահից,
Աշոտի քանդուած պալատը լաւ է։

Ի՞նչ հասկանամ անհոտ բուրաստանիցը,
Ո՞վ է գոհ անաշխատ այգեպանիցը,
Անօգուտ, անողորմ, ...
Ազդասէր, ողորմած աղքատը լաւ է։

Ես Զիւանս զատ չեմ հայ անունիցը,
Թէ ունիմ քաջ Արամայ արիւնիցը,
Օտար ազգի կողմնապահութիւնիցը,
Հայ եղբօրս տուած գանգատը լաւ է։

134.

ԴԻՒԲԷԻԴ

Որ ըստ օրէ գբաղմունքս,
Շատանում է, իմ սիրական,

Տրտմելով երիկամուն։
Վատանում է, իմ սիրական։

Այս աշխարհը չկայ մեկ բան,
Որ չը լինի կենաց տանջան,
Կեանքս խախուտ ծառի նման,
Տատանում է, իմ սիրական։

Ջիւանն եմ աշակերտ ջանքիս,
Զաքը չկայ տառապանքիս,
Կամաց կամաց ուժը կեանքիս,
Հատանում է, իմ սիրական։

135.

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ականջ արէք ուրախալի և տխուր,
Երկու հզօր պետութեանց պատմութեանը,
Ցայտնեցին իրարու պատերազմի լուր,
Աղէքսանդր Կայսրը, Համիտ Սուլթանը։

Ռուսաց Կայսրը գրեց Համիտ Սուլթանին,
«Թող տուր ազատ սպրի Բուլղարիստանը,
Ցօժարացի՛ր դու իմ դրած պայմանին,
Լաւ նշան չէ, պատերազմի նշանը»։

Սուլթան Համիտն ասաց, «Աղէքսանդր Արքայ,
Ձեմ կարող կատարել քո հրամանը,
Քեզ չեն կարգել հոգաբարձու իմ վերայ,
Դու մի՛ կարգադրիլ իմ գործ ու բանը»։

Նորից Ռուսաց Կայսրը խոսեցաւ մի ճառ,
Պետութեանն Օսմանեան գրեց բառ առ բառ,

«Համոզուիր, վատութեան մի լիներ պատճառ,
Ափսոս արի դու խեղճ մարդոց արեանը »։

Սուլթան Համիան ասաց, Ռուսաց Կայսերը,
« Թող փայլի իմ արենարբու սուսերը,
Չեմ կարող կատարել ես քո խօսքերը,
Գիտնամ թէ կը գերուի իմ գերդաստանը »։

Ռուսաց Կայսրը ասաց, «մեղքը քեզ վերայ,
Որ պիտի շատ մարդիկ մեռնին անխնայ,
Մեր Տէր Աբարիչը կանչումեմ վկայ,
Որ նա է միշտ արդարութեան պաշտպանը »։

Այնուհետև Ռուսաց Կայսրը համարձակ,
Առիւծի պէս, բաձրացրուց աղաղակ,
Հրամայեց զօրքին մտնել զէնքի տակ,
« Պէտք է որ նուաճեմ ես Տաճկաստանը »։

Ողջ Ռուսաստանից միախումբ-դումար,
Հաւաքուեցան կարիճ մարդիկ անհամար,
Դանուբեան կողմի զօրքերուն հրամանատար,
Եղաւ Նիկողայոս բարձրը իշխանը։

Ղորլն Մեծութիւնը-Աղէքսանդրը քաջ,
Լորիս Մելիքովին նա քաշեց յառաջ,
« Գնա Կովկաս, էլ մի նայիր ձախ ու աջ,
Հասիր, զոռոզ Տաճկին տուր պատասխանը »։

Հազար ութը հարիւր եօթանասուն եօթ
Թուին էր, որոտաց բազում թնդանօթ,
Ռուսք և Օսմանցիք աշխարհածանօթ,
Խանգարեցին խաղաղութեան պայմանը։

Լորիս Մելիքովն եկաւ Շիրակուան,
Քաջ տէր Ղուկասանը նորան օգնական,

Ախալքալաք ու Ախալցխա, Երևան,
Ցանձնած էր Լորիսի իշխանու թեանը։

Մեծ իշխան Միխայիլ—տրքայաորդին,
Բոլոր զօրքի գլխաւորն էր առաջին,
Լորիս Մելիքովին ասելով կրկին,
« Ա՛ռ բանակդ, անցիր Տաճկաց սահմանը » ։

Ա՛ճապարեց Սուլթան Համիտ նոյնդուռնակ,
Դրկեց ամեն նահանգ նա հրովարտակ,
« Իմացիք, պատրաստուիք, առէք, սուր, նիզակ,
Թող ձեզանից սարսի մեծ Ռուսաստանը։

Ողջ նախարարներուն կանչելով առեան,
Տուեց ամեն մէկին հաստատ հրաման,—
« Եթէ լինիք դուք Հայրենեաց դաւաճան,
Թող ձեզ պատժէ Մուհամմէդի Ղուրանը » ։

Սուլթան Համիտն ասաց, « քաջ Օսման փաշա,
Հայրենեացդ հաւատարիմ պաշտօնեայ,
Ա՛ռ քո բաժին զօրքդ, գնա՛ Պլենա,
Թող Մուխտարն էլ երթայ դէպ Հայաստանը » ։

Մուխտար փաշան իւր զօրքերով միասին,
Շտապելով հասաւ քաղաքն Կարին,
Պատուէր տալով Ղարսայ միջի զօրքերին,
Ամրացուց Բայազիտ և Արդահանը։

Լորիս Մելիքովը կանչելով Աստուած,
Անցաւ Գարեգիտը անվախ, անկասկած,
Տաճկաց սահմանապահ վաշտը մօտեցաւ,
Քնաթափ ախ յանկարծ ընկաւ կապանը։

Լորիս Մելիքովը մնաւ Շիրակը,
Բարձրացուց սուրբ խաչը և դրօշակը.

Ճիշդ դէպի Արդահան քաշեց բանակը
Դեվելի հետ, առիւծասիրտ Դէյմանը։

Երևանեան զօրախումբն էլ նրբամիտ
Անցաւ Տաճկաց հողը երեսը ժպիտ,
Առանց պատերազմի բերդով Բայազետ
Առաւ, քաջ Հայազգի Ցէր Ղուկասեանը։

Կարինեց դուրս եկաւ արի Մուխտարը,
Քառասուն հազար էր զօրաց գումարը,
Սկսեց բանցընել խելքը, հնարը,
Իսմայէլ փաշան էր իւր օգնականը։

Լորիս Մելիքովը գրեց մի նամակ
Դէյմանին, Դեվելին, տալով օրինակ,
«Քաշեցէ՛ք բանակը, ազատ, համարձակ,
Կանգնե՛ք Արդահանու դէմ յանդիմանը»։

Քաջ սպարապետը հասաւ օգնութեան,
Իւր կարիճ զօրքերով եկաւ Արդահան,
Հոգիաւ Դաբրիել հրեշտակի նման,
Պիտի կարէր Տաճկաց զօրքի պատանը։

Մի մութ անձրևային գիշեր ժամանակ,
Կարծես երկնքիցը թափվումէր կրակ,
Երկու կողմից արձակվում էր շատ գնդակ,
Կը գոռար թնդանօթ և հրացանը։

Լորիս Մելիքովին կտրաւ համբերը,
Հնարներ մտածեց ամբողջ գիշերը,
Դեռ լուսը չ՚բացուած Ռուսաց զօրքերը,
Տիրեցին քաղաքի բերդ, պահարանը։

Այդ տեղ Ռուսաց զօրքը ստացաւ համբաւ,
Մինչ Սուլթան Համիտին պատճառեց մեծ ցաւ.

Մանր, խոշոր հարիւր թնդանօթ տուաւ,
Արդահանի բերդի քաջ պահապանը։

Լորիս Մելիքովը գրեց այս թերթը, —
«Պէտք է շուտ պաշարել անառիկ բերդը,
Արդահանը առանք, Կարսինն է հերթը,
Թող ցնծայ Մեծ Կայսրը միահեծանը»։

Դարձան բոլոր զօրքով Կարսի վիճակը,
Պաշարեցին բերդը, տուին կրակը,
Ոչինչ մի բան չարաւ այնքան գնդակը,
Կարծես թէ պողպատին դիպնէր խեթանը։

Մի օր Տաճկաց մի գունդ իրր քաջարշաւ,
Առանց մտածելու բերդից դուրս ելաւ,
Ամբողջեցը քառորդն հագիւ յետ դարձաւ,
Դերեզմաննոց դարձաւ Հարամ-Վարդանը։

Լորիս Մելիքովը լուր առաւ հաստատ,
Թէ Մուխտարը կուգայ զօրութիւնը շատ,
Զոկեց իւր զօրքերից քաջ ու անարատ,
Ուղղեց դէպի Զիվին իւր արշաւանը։

Ուրախ էր Մուխտարը, լաւ էր, չէր տխուր,
Կարծես յաղթութիւնը իւրն էր այն աւուր,
Պատրաստեց մարտկոցներ, պատնէշներ տմուր,
Զիվին ասուած տեղն էր պատսպարանը։

Սուրիներու փայլը շատ էր արևից,
Արձիձն առատ կարկտից ու անձրևից
Ռուսը ներքևից, Թուրքը վերևից,
Ամենը ցոյց տուեց իւր գաւազանը։

Մեծին չը լսելով Գեյմանն անհամբեր,
Բազում կտրիճներու եղաւ գլխակեր.

Դէմ տուեց խեղճ զօրքին սարը դարձվեր,
Պատրաստեց շատ մարդկանց նա գերեզմանը։

Այդ օրը թուրքերին չեղաւ մեծ վնաս,
Բայց Դէյմանի գունդը կրեց պատուհաս,
Լորիս Մելիքովը շուներ այդտեղ մաս,
Պակասութիւն չեղաւ իրա անուանը։

Երթալով շատացաւ զօրքը Սամանեան,
Ամէն տեղից մեր զօրքերը յետ դարձան,
Տարածուեցաւ Ռուսաց զօրքերի վրան՝
Դարայեազից բռնած մինչ Փալարվանը։

Այրիներ կը վազէր խեղճ մեռածներու,
Հսկայի հասակով անդ պառկածներու,
Վիրաւորուածներու և ընկածներու,
Սար ու ձոր էր բռնել լաց ու կականը։

Տէր Դաւիթովից էլ տեղեկութիւն տանք,
Ցաղթեց, չը յաղթուաւ, առաւ գովասանք,
Երեք հազար տուներ բերեց անվտանգ,
Ալաշկերտից հասուց նա Երևանը։

Մուխտար փաշան բերել տալով գերաններ,
Պատրաստեց պասնէշներ, փորեց դարաններ,
Կանաչ ու սպիտակ շարեց վրաններ,
Ալաձայ սարն արաւ նոր իջևանը։

Գնաց Տէր Դաւիթով քրտերին վանեց,
Հայերու վրէժը նրանցից հանեց,
Նէյիս Ջալալէդդինին տուեց-սպանեց,
Նան պէս սատակեցաւ այն չար դաղանը։

Աղէքսանդրապոլ էր Մեծն Փոխարքայ,
Այդ տեղից հսկում էր բանակի վերայ.

Ողորմած քոյրերին յանձնել էր շուտ նա,
Հիւանդներու հոգը դեղ ու դարմանը։

Մինչ Ռուսաց զօրքը յառաջ կը գնար,
Ցարձակութեամբ Տաճկաց վերայ կը նեմանար,
Թէև յաղթութիւնը անորոշ մնար,
Բայց իրարուց կը խլէին մայդանը։

Եկաւ Շեկոմնիկեան—թուրքաց դահիճը,
Ալխազեանը՝ որ Ծամոզ էր արճիճը,
Հասաւ Դաղստանու հերոս, կարիճը,
Լազարեան, որ բռնեց այն Շամիլ—Խանը։

Լորիս Մելիքովն ստացաւ ցնծում,
Բայց Մուխտարի սիրան էր, սաստիկ յոյժ տրտում,
Վերոյիշեալները զօրքերով բազում,
Եկան՝ փոխուեց կռուի բուն կերպարանը։

Գովելի զօրքերի զգաստութիւնը,
Զը տեսնուաւ Նրանց նուաստութիւնը,
Անթերի էր, Ռուսաց պատրաստութիւնը,
Ամէն բանին ունէր ջոկ կարաւանը։

Լորիս Մելիքովը գրեց Մուխտարին,
«Քսաներից դուրս արի տես չարն ու բարին,
Ի՞նչ ես ելեր Ալաջայի կատարին,
Դարձել ես մարդատեաց, բուի նմանը։

Մուխտար փաշան այս խօսքերից նեղացաւ,
Ջոկեց զօրքից մի մաս՝ սարից վայր իջաւ,
Գրգրութափա ասուած տեղն էլ առաւ,
Բայց չդիմացաւ Ռուսաց խոհեմ շրջանը։

Համարեա մարեցաւ մուխտարի մուխը,
Երբ լսեց օրուան մեծ ծուխը,

Եղած էին Ալաջայի գլուխը,
Սեպուհ Շեկոմիխեան, քաջ Լազարեանը։

Ռուսաց զօրքեր, զօրապետներ բարեպաշտ,
Փախուցին Մուխտարը — թշնամին անհաշտ,
Զօրքով, զօրապետով տասն և ութը վաշտ,
Տաճկաց զօրքը ընկաւ Ռուսաց ուռկանը։

Երբ լսեց — « առնուաւ լեառն Ալաջա »,
Երեսը շուռ տուեց Խմայիլ փաշա,
Յետնից Տէր Ղուկասով, զօրքերով հսկայ,
Նաստ քրդեր ուղարկեց սպանդարը։

Մ՚ինացան իրար հետ երկու հրամանատար,
Գեյմանի հետ, Տէր Ղուկասով զօրավար,
Կալ ունէր կասելու գոռոզն Մուխտար,
Դէվէրոյուն կանգնեց փախստականը։

Նոբից սկսուեցաւ մեծ ճակատամարտ,
Կարծես գերանդիները ճիշդ քաղում էր ասա,
Այդ տեղ էլ յաղթուաւ Տաճիկը հպարտ,
Ռուսաց ձեռքը մնաց ամբողջ Բասեանը։

Բազուայ գունան առած՝ Գեյմանը անձամբ,
Աղեղնէ Ամրոցն առաւ յարձակմամբ,
Յաղթութիւնով դարձաւ իւր տեղը ողջամբ,
Ընկաց ազատութեան նուագարանը։

Լորիս Մելիքովը, Լազարեանն հմուտ,
Ցասուկ Հանդամանքից քաղեցին օգուտ,
Պաշարեցին Կարսը, թափեցին կարկուտ,
Թուրքը նեղն ընկած չէր այս ասաֆանը։

Խրոխտ Լազարեանը անյաղթ, անվեհեր,
Տասներկու ժամ աշխատեցաւ անհամբեր,

Բոլոր ամրոցները տաւ այդ դիշեր,
Ցիրեց փոքր Ասիայի մառանը։

Բազում զօրքեր ու փաշաներ Օսմանեան,
Դերի ուղարկուեցին դէպի Ռուսաստան,
Երեք հարիւր թնդանօթ, շատ հրացան,
Մտաւ Մեծ Կայսերի շտեմարանը։

Նիկոլայ Դուքսըն էլ թուրքերին վանեց,
Վերջ 'ի վերջոյ Պլևնան էլ կործանեց,
Ցաճկաց Պիսոզ հրացանին խափանեց,
Ռուսաց զործարան'ց եղած Բերդանը։

Վ. ԵՎ Լորիս Մելիքով քաջ գեներալին,
Ցանձնուեցաւ Կարսայ բերդի բանալին,
Սուլթան Համիտ գինջաւ, Մեծ Խնքնակալին,
Պատերազմը դուռ բրա վախճանը։

Սլաւեան ցեղերուն լցաւ փափագը,
Մանաւանդ Բուլղարաց՝ վառուեց ճրագը,
Ութ ամսոյ շափ էլ Կարին քաղաքը,
Ընդունեց Ռուսաց նոր դատաստանը։

Կեցցէ՛, Ռուսաց ազգը, կեցցէ՛, յարաժամ,
Նա է ընկած խեղճ ազգերուն բարեկամ,
Արարիչը պահէ միշտ ճոխ ու փարթամ,
Ռուսաց Թագաւորը ու զանձարանը։

Ջիւան, հաւատալով գիտցիր, յատուկը,
Մեծանալով մարդ կը դառնայ մանուկը,
. . . . . .
. . . . . .

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑՈՒՆԿ ԵՐԳԱՐԱՆԻՍ

Ա՜խ, կորաւ հայրենիքիս փառքը . . . 1
Ա՜խ, պիտի շատ սպասեմ 2
Ա՛զգ իմ որքան նկուն մնաս . . . . —
Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար . . 3
Անկիրթ մարդը իւր բանը չը գիտնալով . . 5
Աքլոր եղբայր ձանձրացուցիր դու մեզի . . 7
Աշխարհումն ում որ բարեկամ գիտցայ . . 8
Ազգաւ հայ—կաթոլիկ՝ բողոքականին . . 9
Անպակաս շողշողումէ սրտիս վերայ . . . —
Ուանց ցաւ աշխարհը երբէք չի լինի . . 10
Ուանց քեզ կեանք չունիմ 11
Այսուհետև ինձի լոյս չէ հարկաւոր . . . 12
Մենակեղեցիկ ընտիր սիրուհի . . . 13
Այս բոլոր աշխարհի միջին . . . . —
Անգործ պարապ ման եկողը 15
Այս ի՞նչ դարի հասանք 17
Այլոց տունը քեզ օթևան չի լինի . . . 18
Անման ծնունդ ես ազնիւ գեղեցիկ . . . 19
Աշխարհը ի՞նչ կայ շատ վիշտ ու չարչարանք. . —
Աշխատիր կեանքիս հատոր 20
Անտանելի խեղճութիւն . . . . —
Աւարայրի դաշտը ներկեց արիւնդ . . . 21
Մեն մարդ մի բանով մխիթարվումէ . . . 22
Ուակախաս նախնի հեղինակները . . . 23
Արի՛, սիրական, ինձ կառավարէ . . . 26
Աւաղ ձեզ, իմ անցած օրեր . . . . —
Արդարութեան արև, արդարութեան լոյս . . 27
Մենասաստիկ ցաւերը ինձ վերայ . . . 28
Զնիւ բարեկամ, անունդ ակ . . . . —
Ուաւօտեան քաղցր հովիկ 30

Ա՜խ, հայրենի՛ք, քաղցր ու համեղ հայրենիք . . —
Այն ով էր, որ թողեց երկնային գահը . . 31
Բարի գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն . . 32
Բնական ձիրքերը մարդկանց անուսում . . 33
Բացի քեզնէն բաժին չունիմ . . . . . —
Գիշերի պէս կանցկացնէ իւր տիւը . . 34
Դիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ . . 35
Դարուն անցաւ եկաւ ամառ . . . 36
Գերյարգոյ հայր սրբազան . . . 39
Գիտունը ոգէտի բանից չի ցաւիր . . . 40
Գնաց վրէժ առաւ Հոչէ արքայից . . . 41
Դուն էլ ինձի նման սիրահարուած ես . . . —
Դու այս աշխարհեցը ի՞նչ պէտքէ տանիս . . 42
Երբ տեսնիմ պատկերդ սիրուն օրիորդ . . 43
Ես կուզեմ ճշմարտութիւն . . . . —
Երկու աղքատ քաղաքացի աղջիկներ . . . 44
Երանելի կին գեղեցիկ, ով տիկին . . . 48
Երբ որ Աստուած կամենայ տալ . . . 49
Է՛կ, ե՛կ շնորհաց սուրբ Հոգի 50
Երկնային ճանապարհը հարթողը . . . 51
Եթէ մի սիրտ՝ սրտի չի սիրեր հոգւով . . —
Եօթն հրաշալեաց դլխաւորն ես . . . 52
Զարմանալի կայ մի բան 53
Ընկած մարդը չունի հաստատ օգնական . . —
Թէ կը նեղանայիր քեզ սիրողներից . . . 54
Ժուժեա՛ սիրտս և համբերէ ցաւերուն . . —
Ինչուց է, բան հասկացող մարդոցը . . . 55
Ի՞նչ է ամէն ժամ տան համար կը երուիս . . 59
Իմ անցած օրերս, անցած տարիքս . . . —
Իսկ արարչից ամէն մարդու 57
Ի՛մ սիրուն, հագած հալաւդ 58
Ինձնէց մի հեռանար սիրոյ բարձր Հայրենակը . . —
Իմ բնութեանս համեմատ մէկ հատ բար. . . 59
Իմ տուած յարգանքս պատուելի ընկեր . . 60

Ի՞նչ վատ ժամանակի հասանք . . . . —
Իմաստութեան փափագ ունեցող անձը . 63
Լիահանձար անարատ շնորհաց շահեմարան . . 64
Լսիր, սիրելի իմ ազաչանքս . . 66
Լեր աշակերտ խելահաս մարդոց մօտը . . 67
Լաւ է բոլորովին ազէտ յիմարը . . . —
Խաբեբայ աշխարհը թէ լաւ նկատես . . 68
Խղճալի մարդկանց համար . . . . —
Խեղճութիւնը մարդու ամէն 69
Ծոյլ, անպիտան, անգործ մարդը . . . 70
Կախարդներուն էր ես հաւատում . . . 72
Կեանքիս թռչունը մաղերդ կապեցին . . . 73
Կեանքդ բարեոքելու աշխատիր . . . —
Կաղաշեմ սիրելի ազնիւ Հայ եղբայր . . . 74
Կատարեալ լինելու համար 75
Կենացս մաս իմ Հմայեակ . . . . —
Հուացէք, ով պատանի 76
Հօտից մի ջոկուիլ սպիտակ ոչխար . . . 77
Հայի տղայ զգուշացիր խելք ճարէ . . . —
Հարազատ փեսայիդ հաւատարիմ հարս . . 80
Համբերեցէք կեանքիս յարմար . . . . —
Հարկ է հայցել և պաղատել 81
Ճարտարապետ աւաղի վերայ 82
Մէկ կիւրակի առաւօտ 83
Մի առաւօտ ես տանից 84
Մի լինիր, ով բնութիւն 85
Մարդուս մահկանացու մարմինն է միայն . . 86
Մինչ երբ, զոփելի 87
Մարդ, քեզի կը ասեն, վատ ճանաչել են . . —
Մարդ, քեզի կաղաշեմ 88
Մարդ ինչ առարկայից որ քաշէ վնաս . . 89
Մինչև երբ չարչարես . . . . —
Միթէ լեռ ճանաչեր 90
Նոր բացուած ծաղկի պէս . . . . —

Ինչէ գառնուկ, սիրուն զաւակ . . . 91
Նորոգեցիր մեր հին կեանքը վերստին . . . 93
Նապէլի, Թագուհին չէ՞ քեզ համեմատ . . . 94
Ո՞վ ունիմ, որ կամ ո՞վ ցաւի . . . . —
Ո՛վ գոռոզ մարդ, բաւ չէ՞ այսքան . . . 95
Ո՛վ գեղեցիկ աննման 96
Ունիմ փառք Աստուծոյ . . . . —
Որ նաւը ծովը ընկղմի 97
Ո՛վ Տէր Աստուած բաց մեր հոգւոյ . . . 98
Ո՛վ մարդ խմաստութեան եռանդ . . . —
Ով Աստուծոյ վախենում է 99
Ով մարդ արևելեան 100
Որ մի մարդ բնական լինում է տխուր . . . 101
Ո՛վ ամենակարող Արարիչ Աստուած . . . 102
Ո՛վ դու զրաղմունքի, ցաւի Թագաւոր . . . —
Ո՛վ անզգայ, անխիղճ 103
Ով որ իր ազգն ուրանայ . . . . —
Ով մարդ թէ որ կուզես 105
Ո՛վ պարտիզատէր ինչո՞ւ զոհունակ . . . 108
Ո՛վ սիրուն ազնիւ զարուն 109
Ո՛վ մարդ հեռացիր խարերայ . . . . —
Ո՛վ անձ մի փափագիր 110
Զարասիրտ, նախանձոտ մարդը . . . 111
Ջուրը ընկած մարդոյ նման . . . . —
Սև աչերուդ, ազեղ ունքերիդ մատաղ . . . 112
Սիրականի մօտ գնալը դիւրին է . . . 113
Սուրբ Բագոսի ինձի տուած օգուտը . . . —
Սիրել եմ, չեմ զղջար 118
Սիրակամս պիտի զար շուտ . . . . —
Սիրելի բարեկամ, անցաւ զարունը . . . 119
Սիրուն բարի Հայոց Ջաւիկ 121
Վերջացաւ մեր այգին 122
Վարդ վարդ ասելով կեանքը գնացել է . . . 123
Տգէտ գլուխ, պատիւդ չը պահելով . . . 124

Տգէտ բամբասողները 125
Վ արդին սոխակից հեռացնող 126
Տաճկաստանի հայեր ձեր հոգուն . . . 127
Տրտմութեան օթեւան . . . . . —
Տրտում ու տխուր շրջագայող 128
Տխուր պանդուխտ սիրուն թռչնիկ . . . 129
Փորձը մարդուն կը դարձնէ կատարեալ . . —
Քէֆ ու սարքայ կենին 130
Փորդ քաղցած, հագուստդ հին . . . 131
Քեղանից ո՞ւր գնամ, ո՞ւմ գանգատ անեմ . . 132
Քաղաքացին ու գիւղացին իրար հետ . . . —
Քաջ զօրապետ, մեծահամբաւ Լազարեան . . 136
Քո փափագով վառվում եմ 138
Օտարի բնական գիտութիւնները . . . 139
Օր ըստ օրէ զրաղմունքս . . . . . —
Ականջ արէք ուրախալի և տխուր . . . 140

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՆԵՐ.

Սխալ	Ուղիղ	Եր.	Տող
Լենիլ	Լենիր	40	25
խնդում	խնամ	60	4
Թող զարենակից	Թողզ արենակից	—	11
գառնայ	դառնայ	78	2
դթալ	դթալ	102	16
աղգն	ազգն	103	17
Անունդ	Անսնունդ	120	5
աչերգ	աչերդ	124	11
պատճառումես	պատճառումես	126	12
գիտէ	գիտէ	—	21
Նպատակիս	Նպատակիս	128	20

ՀԱՅԿ ԱԶԳ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ